

ՓՈՓՈԽՎՈՂ ԱՇԽԱՐՀ

ՀԱՅԱՅՔ ԵՐԵՎԱՆԻՑ

2017/2
(9)

Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես

Ռազմավարական և ազգային հետազոտությունների
հայկական կենտրոն

ՀՀ, 0033 Երեւան, Երզնկյան 75
Հեռախոսներ՝ (+37410) 528780, 274818
Հետապատճեն՝ (+37410) 524846
Էլ. փոստ՝ root@acnis.am
Վեբկայք՝ www.acnis.am

Երեւան
2017

Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից

Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) վերլուծական-փորձագիտական եռամսյա հանդես

Թիվ 2 (9), ապրիլ-հունիս 2017

2017/2
(9)

<i>Գիտական խմբագիր՝</i>	Մանվել Սարգսյան
<i>խմբագիր եւ սրբագրիչ՝</i>	Գեւորգ Լալայան
<i>խմբագրական խորհուրդ՝</i>	Կարապետ Կալենյան Վշիտն Մուշեղյան Լիլիթ Սարուխանյան
<i>Համակարգչային ձեւավորող եւ էջադրող՝</i>	Վշոտ Թուրաջյան

ՌԱՀՀԿ եռամսյա պարբերականի՝ **«Փոփոխվող աշխարհ: Հայացք Երեւանից»** վերլուծական հանդեսի նպատակը հայաստանյան, տարածաշրջանային եւ համաշխարհային իրողությունների լույսի ներքո Հայաստանի այսօրվա ու վաղվա կարեւորագույն մի շարք խնդիրների, մարտահրավերների, հեռանկարների համայնապատկերի արտացոլումն է՝ թարմ հայացքով մատուցվող գաղափարների, առաջարկների, այլընտրանքային մոտեցումների միջոցով, որոնք կարող են լավագույն բանալի լինել պետության առջեւ ծառայած բազում կնճռոտ հարցերին լուծում տալու տեսանկյունից: Թիրախային ընթերցողը քաղաքացիներ, անհատ փորձագետ-վերլուծաբաններ եւ ոլորտում գործող հաստատություններ են Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում:

© Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն (ՌԱՀՀԿ), 2017

© Armenian Center for National and International Studies (ACNIS), 2017

© Армянский центр стратегических и национальных исследований (АЦСНИ), 2017

Հոդվածագիրների տեսակետները կարող են չհամընկնել ՌԱՀՀԿ դիրքորոշումներին:

The views of the authors do not necessarily reflect those of the Center.

Мнения авторов публикаций не всегда совпадают с позицией АЦСНИ.

Արտատպման դեպքում հղումը «Փոփոխվող աշխարհ. Հայացք Երեւանից» հանդեսին պարտադիր է:

While citing the content, the reference to “The Changing World: Viewpoints from Yerevan” is obligatory.

При перепечатке ссылка на журнал «Изменяющийся мир. Взгляд из Еревана» обязательна.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թողարկման հարցազրույցը

Արման Մելիքյան. «Կա իրավաբաղադրական մի ծրագիր, որի կիրառումը Ադրբեջանին կզրկի երկու տասնամյակի ընթացքում ձեռք բերած բոլոր առավելություններից»
Յանդեսի հարցերին պատասխանում է Արցախի Յանրապետության արտաքին գործերի նախկին նախարար, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արման Մելիքյանը 4

Հոդվածներ

ԿԱՐՊԻՍ ՓԱՇՏՅԱՆ
Հոգեւոր և աշխարհիկ իշխանությունների տարանջատումը քրիստոնեության մեջ 9

ՄԱՆՎԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
Ինքնորոշման ուժը. կանխորոշված էր արդյոք Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (*ռուսերեն*) 23

ՀԱՄԼԵՏ ՉԱՔԱՐՅԱՆ
Բանկեր. իրողություններ, խորհրդածություններ 50

ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Միաբանությունն ինչ ենք անելու 58

ՀԱՅԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Թուրքիայում PKK-ի դեմ պայքարի արդի փուլը 84

Հայաստան-2017, ապրիլ-հունիս.
փաստեր, իրադարձություններ 98

Արման Մելիքյան. «Կա իրավաբաղաբական մի ծրագիր, որի կիրառումը Ադրբեջանին կզրկի երկու տասնամյակի ընթացքում ձեռք բերած բոլոր առավելություններից»



Հանդեսի հարցերին պատասխանում է Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախկին նախարար, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արման Մելիքյանը:

- Պարոն Մելիքյան, Մերձավոր Արեւելքում պարզորոշ երեւում են առանցքային երկրների դիրքորոշումների սահմանազատման նոր միտումներ: Ավելին՝ նկատելի են ԱՄՆ նոր վարչակազմի բացահայտ միջամտությունն այստեղ կատարվող գործընթացներին և դրանց ղեկավարումը: Որո՞նք են, Ձեր կարծիքով, տարածաշրջանային և համաշխարհային դերակատարների դիմակայության մակարդակի աճի պատճառները:

- Մերձավոր Արեւելքում ներկայում տեղի ունեցող գործընթացներն անհրաժեշտ է դիտարկել որպես Միացյալ Նահանգների գլոբալ ռազմավարության ներդաշնակ մի բաղադրամաս: Այդ ռազմավարությունը նոր չէ, որ ի հայտ է եկել՝ դրա իրականացման նախորդ փուլը ներառել է «Արաբական գարուն» կոչված հեղափոխությունների շարքը, ուկրաինական «Մայդանը» և մի շարք այլ, իրենց ընդգրկման ծավալով պակաս տեսանելի, սակայն աշխարհաբաղաբական հետեւանքների առումով շատ ուշագրավ իրադարձություններ:

Այս պահի դրությամբ կարող ենք արձանագրել, որ ԱՄՆ-ի ու վերջինիս մերձավորագույն դաշնակիցների ջանքերով արմատական վերադասավորումներ են կատարվել Արեւելքյան Եվրոպայում և Մերձավոր Արեւելքում: Այդ տարածաշրջանների ռազմաբաղաբական նկարագիրն արդեն իսկ արմատապես փոխվել է և արդյունքում, օրինակ, Մերձավոր Արեւելքում միանգամայն նոր իրավիճակ է ձեւավորվել, որի առավել ակնառու բնութագրիչն այն է, որ մի կողմից համարյա լիովին չեզոքացվել է Իսրայելի ավանդական ռազմական հակառակորդ հանդիսացող արաբական պետությունների՝ Լիբիայի, Իրաքի, Սիրիայի ու Եգիպտոսի երբեմնի ռազմական ներուժը, իսկ մյուս կողմից նշմարվում են ԱՄՆ հովանու ներքո Իսրայելի ու մի շարք արաբական միապետությունների միջեւ Իրանի դեմ ուղղված ռազմաբաղաբական դաշինքի ձեւավորման միտումները:

Սա Մերձավոր Արևելքի դիմագծի՝ մինչև վերջերս այստեղ գոյություն ունեցած ուժերի հարաբերակցության կտրուկ եւ անդառնալի փոփոխություն է, որի արդյունքում էապես նվազել է Իսրայելի համար՝ վերջինիս անմիջական հարեւանների ռազմական ներուժից ու դիրքորոշումից բխող սպառնալիքն ու նոր քաղաքական միջավայր է ձեւավորվում, որը շատ նպաստավոր է լինելու մոտ ապագայում պաղեստինյան խնդիրը միջազգային օրակարգից հանելու համատեքստում: Արդեն իսկ խոսվում է այն մասին, որ պաղեստինցի արաբներին կարելի է վերաբնակեցնել հարեւան արաբական պետություններում՝ Սաուդյան Արաբիայի եւ Պարսից ծոցի միապետությունների ֆինանսավորման շնորհիվ: Կարծում եմ՝ Իսրայելի համար նպաստավոր կերպով կլուծվեն նաեւ Հոլանդի բարձունքների պատկանելության ու միջազգային հանրության կողմից երուսաղեմը հրեական պետության մայրաքաղաք ճանաչելու խնդիրները: Ռազմաքաղաքական զարգացումների այս նոր փուլի հիմնական նպատակը լինելու է Իրանի դուրսմղումը Սիրիայից եւ Թեհրանի իրական ազդեցության կտրուկ նվազեցումը Մերձավոր Արևելքի ողջ տարածաշրջանում: Հընթացս այստեղ էապես կտուժեն նաեւ ռուսական շահերը: Այս գործընթացը կունենա իր շարունակությունը, որի արդյունքում բռնությունների էպիկենտրոնը աստիճանաբար կտեղափոխվի դեպի Իրանի ու Հարավային Կովկասի տարածաշրջանի սահմանները եւ վաղ թե ուշ կհատի դրանք:

- Ինչպե՞ս կարող է այդպիսի քաղաքականությունն ազդել Հարավային Կովկասի եւ, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտային իրավիճակի վրա:

- Կարծում եմ, որ անհրաժեշտ է լրջորեն դիտարկել Իրանի տարածքում ազ-

գամիջյան բախումների հետեւանքով Հայաստանին սպառնացող վտանգը: Չի բացառվում, որ այս տարվա աշնանն Իրաքյան Զրդստանում անցկացվելիք հանրաքվեի արդյունքում ներկայիս Իրաքի կազմում գտնվող այդ ինքնավարությունն իր պետական անկախությունը հռչակելով՝ խթանի Իրանի քրդերի անկախական շարժումը, իսկ ավելի ուշ դրան միանան նաեւ Իրանի հյուսիսային գոտում բնակվող թյուրք էթնիկ տարրերը, որոնք այստեղ բնակչության բացարձակ մեծամասնություն են կազմում:

Կարող է ձեւավորվել եզակի մի իրավիճակ, երբ քրդերն ու թյուրքերը հանդես կգան միասնական դաշինքով՝ ընդդեմ պաշտոնական Թեհրանի: Չեմ պնդում, որ իրադարձությունները հենց այսպես էլ կզարգանան իրականում, սակայն այս դիպաշարի կիրառման հավանականությունը բավական բարձր է, իսկ դրա կենսագործումն անխուսափելիորեն կաշխուժացնի նաեւ Հարավային Կովկասում գոյություն ունեցող ներուսակ եւ այս կամ այն չափով սառեցված հակամարտությունների օջախները:

- Ձեր հարցազրույցներից մեկում Դուք պնդում էիք, որ Միջազգային ճգնաժամային խմբի (ՄՃԽ) զեկույցը քաղաքական փաստաթուղթ է, որի նպատակը «ինչ-որ մի նոր իրավիճակի, ռազմաքաղաքական գործընթացի նոր փուլի մեկնարկի նախապատրաստումն է»: Ուրեմն՝ ո՞ւմ են, առաջին հերթին, հասցեագրված այդ զեկույցի դրույթները:

- Միջազգային ճգնաժամային խմբի վերջին զեկույցը վերը նկարագրված ընդգրկուն ռազմաքաղաքական գործընթացի նախապատրաստման եւ իրականացման ռազմավարության օժանդակ գործիքներից մեկը կարող ենք համարել, որը տեղեկատվական-հոգեբանական մակարդակում կոչված է արցախա-ադր-

բեջանական հակամարտության գոտում ծրագրվող զարգացումները ներդաշնակեցնել գլխավոր ծրագրի առաջնահերթություններին:

Այդ գեկույցը նախեւառաջ ուղղված է Ադրբեջանի, Արցախի ու Հայաստանի հասարակություններին ու կառավարող վերնախավերին եւ տեղեկացնում է վերջիններին այն մասին, որ լայնածավալ պատերազմի հնարավոր վերսկսման պատասխանատվությունը կրելու են բացառապես հակամարտության կողմերը: Մեծ հաշվով, ՄՃԽ գեկույցը տարածաշրջանի ժողովուրդներին նոր գինված բախումների ծավալման կամ նույնիսկ լայնածավալ պատերազմի վերսկսման մտքին ընտելացնելու եւ դրա մեղքը կանխավ հենց իրենց վրա դնելու խնդիր է լուծում:

- Դուք հաճախ եք պնդում, որ Արցախի վերաբերյալ Հայաստանի ղեկավարության կողմից իրականացվող քաղաքականությունը թուլացնում է Հայաստանի Հանրապետության ու ԼՂՀ-ի դիրքերը եւ չի նպաստում Արցախի հիմնախնդրի կարգավորմանը: Ընդ որում, նշում եք, որ պետական քաղաքականության կազմավորման ավելի աղյուսավետ եղանակ կա: Կարո՞ղ էիք ասել, թե որոնք են Հայաստանի ներկայիս ուղեգծի անարդյունավետության պատճառները եւ ինչն է, որ պետք է արմատապես փոխվի:

- Այո, ես իսկապես համարում եմ, որ ՀՀ իշխանությունները թույլ տվեցին իրենց զգել իրավաբաղաբական ծուղակի մեջ, երբ Ռուսաստանի ճնշմանը տեղի տալով՝ 1993 տարեմուտին Հայաստանը հռչակեցին հակամարտության կողմ ու, այդպիսով, միջազգայնացրին այն: Սա այն առաջին քայլն էր, որը հակառակորդի համար ճանապարհ բացեց խեղաթյուրելու մի կողմից հակամարտության եռությունը, իսկ մյուս կողմից՝ նրա ժամա-

նակագրությունը: Արդյունքը եղավ այն, որ այսօր խնդիրն առավելապես ներկայացվում է իբրեւ Ադրբեջանի տարածքի զգալի մասը, այսպես ասած, օկուպացրած Հայաստանի գիւտուրը «զավթված» գոտիներից դուրս բերելու, փախստական ադրբեջանցիների՝ իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու հնարավորությունն ապահովելու իրամայական պահանջ, իսկ արցախահայության ինքնորոշման իրավունքը պատկերանում է խիստ մշուշոտ եւ չպարտավորեցնող ձեւակերպումներով:

Եթե չեմ սխալվում, Հայաստանի իշխանություններն ի սկզբանե Արցախի անկախացման կամ Հայաստանի հետ վերամիավորման միակ հնարավոր ուղին համարել են պատերազմի ընթացքում արցախյան իշխանությունների վերահսկողության տակ անցած տարածքների հանձնումը Ադրբեջանին: Այսինքն՝ մեր որոշում կայացնող պատասխանատուները երբեւէ տարածքները պահելու հնարավորությունն ընձեռող իրավաբաղաբական ծրագիր մշակելու վերաբերյալ անգամ հանձնարարություն չեն տվել համապատասխան մասնագետներին: Ես այժմ էլ կարող եմ ասել, որ հայկական կողմերը հնարավորություն ունեն արմատապես փոխել իրավիճակը՝ հակամարտության իրավական կարգավորման առանցքը կազմող ներկայիս տարածքային սկզբունքը փոխարինելով միջազգային իրավունքի այլ սկզբունքներով, որոնց կիրառումը միանգամայն նոր եւ հայկական կողմերի համար շահեկան իրավիճակ կծեւավորի բանակցությունների սեղանի շուրջ:

Խոսքս կոնկրետ քաղաքական, իրավական, մարդասիրական նախաձեռնություններից ու քայլերից բաղկացած ծրագրի մասին է, որի կիրառումն անմիջապես կզրկի Ադրբեջանին այն առավելություններից, որոնք նա կարողացել է իր համար ապահովել ավելի քան երկու տասնամյակի ընթացքում գործադրած

տարաբնույթ ջանքերի շնորհիվ: Բնականաբար, այդ ծրագրի մանրամասների եւ, անգամ, առանձին սեգմենտների մասին հրապարակավ խոսելը տեղին չեմ համարում՝ ամենեւին կարիք չկա հակառակորդին նախապես տեղեկացնել այն մասին, թե ինչ միջոցներով է հնարավոր վիժեցնել իր այսօրվա խիստ նախահարձակ ու անզիջում քաղաքական գործելակերպը:

- Հայաստանում ընդունված է համարել, որ ԼՂՀ անկախության ճանաչումը կարող է խանգարել հակամարտության կարգավորմանը: Որքանով է հիմնավորված այդպիսի տեսակետը, եթե միաժամանակ հայտարարվում է, թե Արցախի կարգավիճակը քննարկման առարկա չի հանդիսանում:

- ՀՀ կողմից Արցախի հանրապետության պաշտոնական ճանաչման դեմ հանդես եկողներին կարելի է պայմանականորեն երկու հիմնական խմբի բաժանել: Առաջին խումբը հիմնականում ներկայացնում է ՀՀ գործող իշխանությունների տեսակետը, ըստ որի՝ պաշտոնական Երեւանը հակված է շարունակել բանակցությունները ՄԽ համանախագահների միջնորդությամբ եւ կարող է միակողմանիորեն ճանաչել Արցախի Հանրապետության անկախությունը բացառապես այն դեպքում, եթե Ադրբեջանը ռազմական ագրեսիա սկսի եւ փորձի հարցն իր ուզած ձեւով լուծել ուժի կիրառման միջոցով: Հիշեցնեմ, որ անցյալ տարվա ապրիլյան ռազմագործողությունը ՀՀ իշխանությունների կողմից բավարար հիմք չհամարվեց Արցախի անկախությունը ճանաչելու համար: Երկրորդն խմբի ներկայացուցիչներն առհասարակ դեմ են ՀՀ կողմից Արցախի անկախության ճանաչմանը. նրանք համարում են, որ վերջինս արդեն իսկ Հայաստանի Հանրապետության մաս է, իսկ հարցը վերջնական լուծում կստանա

այն ժամանակ, երբ հայկական զինուժն իր վերահսկողության տակ առնի առնվազն Քուռ գետի ադրբեջանական հատվածի ողջ աջափնյակը: Կարելի է ասել, որ առաջին խումբը հողահանձնման քարոզն է իրականացնում, իսկ երկրորդ խումբը՝ պատերազմի: Իմ կողմից հիշատակվող իրավաբաղաբական ծրագիրն ունի իրականացման մի քանի ձեւաչափ կամ տարբերակ, որոնք նախատեսում են ինչպես ՀՀ կողմից Արցախի ճանաչման, այնպես էլ վերամիավորման հնարավորությունը:

- Դուք երկար տարիներ զբաղվում եք Ադրբեջանից բռնագաղթված հայ փախստականների հիմնախնդրով: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ այդ մարդկանց խնդիրն արհամարհվում է հակամարտությունը կարգավորող միջազգային դիվանագիտության կողմից: Մի՞թե պատերազմից առավելապես տուժած այդ մարդիկ չունեն քաղաքական որոշակի իրավունքներ:

- Պատահական չէ, որ հայ փախստականների խնդիրն անտեսվել ու անտեսվում է միջնորդների ու ադրբեջանական իշխանությունների կողմից: Տարիների ընթացքում մեզ հաջողվել է հսկայական ծավալի աշխատանք կատարել եւ անմիջական կապ հաստատել տասնյակ հազարավոր փախստական հայ ընտանիքների հետ, ու ես վստահ եմ, որ առաջիկայում այս խնդիրը եւս կդառնա բանակցային գործընթացի նոր առանցքերից մեկը:

- Ընտրակալություն հետաքրքիր գրույցի համար:

Интервью выпуска

Арман Меликян: «Имеется политико-правовая программа, применение которой лишит Азербайджан всех преимуществ, приобретенных за два десятилетия».

The Interview of the Issue

“There is a Legal-Political Program Which Will Deprive Azerbaijan of All the Advantages It Has Gained Over Two Decades”

Arman Melikyan, Former Minister of Foreign Affairs of the Republic of Artsakh, Ambassador Extraordinary and Plenipotentiary.

Հոգեւոր և աշխարհիկ իշխանությունների տարանջատումը քրիստոնեության մեջ



ԿԱՐՊԻՍ ՓԱՇՈՅԱՆ

Պատմաբան, հրապարակախոս

Ներածություն

Համաշխարհային պատմության մի զգալի հատվածն ընթացել է երկու տարասեռ կառույցների՝ պետություն-եկեղեցի փոխհարաբերությունների համատեքստում: Փոխհարաբերություններն այդ բարդ են ու հակասական՝ անզիջում պայթարից ու կատաղի մրցավազքից մինչև ժամանակավոր համագործակցություն ու կուռ դաշինքներ: Խնդրո առարկայի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար նախեւառաջ փորձենք հասկանալ, թե իբրեւ համակարգային կառույց՝ ինչ է իրենից ներկայացնում եկեղեցին:

Եվ այսպես, քրիստոնեությունը՝ որպես մարդկության պատմության խոշորագույն կրոնաքաղաքական, ինչպես նաեւ քաղաքակրթական համակարգերից մեկը, ծագել է 1-ին դարում եւ շուրջ 300 տարվա համար ու անզիջում պայթարի, դինամիկ քարոզչության արդյունքում, ի վերջո, հաղթանակի է հասել՝ Հռոմեական կայսրությունում դառնալով գերակա կրոն:

Սկսենք նրանից, որ եկեղեցին՝ որպես համակարգային կառույց, պետք է առանձնացվի ըստ ժամանակաշրջանների, քանի որ պատմական տարաբնույթ շրջափուլերի հետ համապատասխանաբար փոփոխվել են նաեւ դրա գործունեության թիրախներն ու գործիքակազմերը: Օրինակ՝ 1-ին դարի եկեղեցին արմատապես տարբերվում է 4-5-րդ դարերի եկեղեցուց: Առաջին դեպքում այն ինտենսիվ տարածվող եւ նոր ձեւավորվող գաղափարական հոսանք էր, որը խարսխված էր ցանցային կառուցվածք ունեցող փոքրիկ համայնքների վրա: Երկրորդ դեպքում եկեղեցին գաղափարական իմաստով գրեթե վերջնական տեսք ստացած, հանրակարգայնացված, հիեարխիկ կառույց էր, որն արդեն ուներ սոցիալ-տնտեսական ամուր հիմք եւ աստիճանաբար դառնում էր ավատատիրական հասարակարգի տիրապետող ու շարժիչ ուժերից մեկը: Նիկեայի (325), Կ. Պոլսի (381), Եփեսոսի (431) եւ Զադկեդոնի (451) տիեզերաժողովներից հետո այն արդեն կայացած կառույց էր¹:

Ասվածից անդին նույնական եւ անփոփոխ է միայն դրա համաշխարհային ու համընդհանուր էությունը, քանի որ քրիստոնեությունն առաջին հերթին համաշխարհայնացման նոր ալիք էր, որը եկավ հաջորդելու համաշխարհայնացման հելլենիստական եւ հռոմեական ալիքներին: Այն դարձավ Բյուզանդական աշխարհի ու Եվրոպայի քաղաքակրթական կայացման հենքը²:

Քրիստոնեությունը՝ որպես համաշխարհային շարժում, օժտված է հանրականությամբ (universium): Դա հնարավորություն է տալիս հարմարվել տիրող իրավիճակին ու քարոզչության թիրախ դարձած հանրության առանձնահատկ

ություններին, սերտաճել հասարակական կառույցի բոլոր շերտերին, ինչպես նաև փոխներթափանցվել այլ մշակութային համակարգերի հետ: Վերոհիշյալ մեխանիզմների կիրառման արդյունքում կյանքի են կոչվում համաշխարհային կրոնի սահուն տեղայնացման եւ որոշ դեպքերում ազգայնացման գործընթացները: Վերջինս, իհարկե, ոչ միշտ է իրականություն դարձել կամ էլ այդ գործընթացը տեւել է հարյուրամյակներ՝ ձախողելու եւ հաջողելու հավանական խաղընթացներով:

Հայկական միջավայրում դա կատարվել է շատ ավելի արագ: Պրոֆեսոր Ստեփանյանի խոսքով՝ ազգային-կրոնական տարրերը, անտարակույս, առկա էին հայոց եկեղեցում՝ նրա հիմնումից անտի: Դա քրիստոնեական հանրականության (universium) եւ առանձնատուկ-եզակականի (particulum) հոգեւոր, մշակութային, ծիսական, վարչական տարաբնույթ հարաբերումի միջավայր էր³:

Յոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունը Կաթողիկ եւ Ուղղափառ եկեղեցիներում

Արեւմտյան քաղաքակրթության մեջ գերակայող է դուալիզմը՝ աստված եւ կայսր, եկեղեցի եւ պետություն, աշխարհիկ եւ հոգեւոր իշխանություններ: «Արեւմուտքի» պատմության ողջ ընթացքում եկեղեցին տարանջատված է եղել պետությունից⁴:

Վերոհիշյալը բնորոշ է ոչ միայն արեւմտյան քաղաքակրթությանն ու Կաթողիկ եկեղեցուն: Առհասարակ քրիստոնեության կառուցվածքային օրինաչափությունն է այդպիսին, պարզապես տարբեր միջավայրերում դրա դրսեւորումները տարբեր են:

Այդ տարանջատումը մտցրել է հենց Յիսուս Նազովրեցին՝ իր հայտնի խոսք-

երով. «Գնացէք, տուէք կայսրին կայսեր եւ Աստծունը՝ Աստծուն» (Մատթէոս 22:21): Այսինքն՝ Յիսուսը հստակորեն իրարից բաժանում է այս երկու ինստիտուտները, բայց չի բացառում հնարավոր սերտաճումը, ինչպես նաև մեկի կամ մյուսի գերագահության հասնելու հնարավորությունները: Արդյունքում պետություն-եկեղեցի փոխհարաբերություններում տիրապետող է դառնում մրցակցությունը՝ ժամանակավոր դաշինքների կամ էլ սուր հակամարտության փոխակերպվելու միտումներով:

Վերադառնալք քրիստոնեության մեջ առկա աշխարհիկ-հոգեւոր իշխանությունների տարանջատման տարաբնույթ դրսեւորումներին: Ինչպես նշվեց, Կաթողիկ կամ արեւմտյան եկեղեցում տարանջատումը հստակ է: Բոլորովին այլ պատկեր է Ուղղափառ եկեղեցու պարագայում, որի հիմքում ընկած է բյուզանդական եկեղեցին եւ, առհասարակ, բյուզանդական պետականության պրակտիկան: Եթե Արեւմուտքում պետությունը եւ եկեղեցին առանձին իրավահավասար միավորներ են, ապա Բյուզանդիայում պետությունից տարանջատված եկեղեցին, այնուամենայնիվ, ստորադասված էր աշխարհիկ իշխանությանը: Արեւմուտքում եկեղեցին ուներ պետության կարգավիճակ, որը ձգտում էր իր տիրապետությունը հաստատել աշխարհիկ պետությունների նկատմամբ՝ ստեղծելով թեոկրատական աշխարհակալություն: Բյուզանդիայում եկեղեցին ենթարկվում էր պետությանը, եւ կայսրն էր մեծ հաշվով կանգնած դրա գլխին: Հանրիսգտոնը դիպուկ է նկատել, որ ուղղափառության մեջ կայսրը աստծո կրտսեր գործակիցն է⁵: Այստեղ կարող է հարց առաջանալ. եթե Ուղղափառ հասարակարգերում եկեղեցին ստորադասված է պետությանը, ապա որտեղ է դրսեւորվում երկու ինստիտուտների տարանջատվածությունը: Սխալվելու չլինի հավանականությամբ կարող ենք պնդել, որ այս պարագայում

աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունները պայթարում են ոչ թե միջազգային հեգեմոնիայի կամ էլ մեկը մյուսի նկատմամբ գերագահության հասնելու համար, այլ հակակշռում են իրար պետության ներսում: Այսինքն՝ կայսեր իշխանությունը սահմանափակված է պատրիարքի ու հոգեւորականության ազդեցությամբ, եւ հակառակը: Միով բանիվ՝ գերագահության հասնելու խնդիր չի դրվում եւ դրանք հանդես են գալիս որպէս հակակշռող միավորներ:

Աստված-օծյալ գահակալ-հովվապետ-հանրույթ, թէ՛ Աստված-հովվապետ-օծյալ գահակալ-հանրույթ⁶: Եկեղեցու՝ որպէս քաղաքական տնտեսական համակարգի, կայացումից հետո Հռոմեական հասարակությանը հուզող թերեւս առաջնային հիմնախնդիրներից մեկը սա է եղել:

Խնդիրը պայմանականորեն հանգուցալուծվեց Հռոմեական կայսրության բաժանման գործընթացի հետ (395) զուգընթաց, բայց վերջնական տեսք ստացավ Մեծ սխիզմից հետո, երբ արեւելյան ու արեւմտյան եկեղեցիները վերջնականապէս պառակտվեցին (1054): Արեւմուտքը սկսեց նայել Հռոմին, իսկ արեւելքը՝ Կ.Պոլսին⁷: Արեւմտյան Հռոմեական կայսրության տարածքում տիրապետող դարձավ քաղաքակրթական առաջին հարացույցը (հատկապէս կայսրության անկումից հետո), իսկ արեւելքում՝ Արեւելյան Հռոմեական կայսրության տարածքում՝ երկրորդը: Այսպիսով, արեւմուտքում առանձնահատուկ կերպով կարեւորվեց Եկեղեցու եւ նրա առաջնորդի դերակատարությունը⁸, իսկ Բյուզանդիայում պետականության հիմքում շարունակեց գերակայող մնալ կայսերական իշխանությունը⁹:

Քրիստոնեական հասարակարգերում գոյություն ունեցող հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների տրոհման էնդոգեն առանձնահատկության վերաբերյալ պատկերացում կազմելուց հետո տեղին

կլինի համեմատել այն կրոնաքաղաքական այլ համակարգերի հետ եւս:

Այս համատեքստում վերստին պետք է վերադառնանք վերը հիշատակված Հանթինգտոնի մտքի շարունակությանը¹⁰: Խոսելով արեւմտյան քաղաքակրթության մեջ առկա պետություն-եկեղեցի դուալիզմի մասին, մյուս քաղաքակրթական համակարգերի համար նա նշում է, որ Իսլամում աստված կայսրն է, Չինաստանում եւ Ճապոնիայում կայսրն է աստված, իսկ ուղղափառության մեջ կայսրը աստծո կրտսեր գործակիցն է (վերջին կետի մասին արդէն խոսել ենք բյուզանդական եկեղեցու առանձնահատկությունները նկարագրելիս): Հանթինգտոնը նաեւ նշում է, որ արեւմտյան քաղաքակրթության մեջ առկա դուալիզմին համանման բաժանում գոյություն ունի միայն հինդուիստական քաղաքակրթության մեջ:

Ասվածը դժվար չէ նկատել, եթե ուշադրություն դարձնենք Հնդկաստանում առկա հասարակական խիստ ընդգծված հասարակական շերտավորմանը՝ վարնաներին՝ 1. բրահմաններ 2. քշատրիներ 3. վաշիներ 4. շուդրաներ:

Հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունները Իսլամում

Խնդրո առարկան պետք է դիտարկել Իսլամի տեսանկյունից եւս, քանզի համաշխարհային պատմությունն ընթացել է հատկապէս համաշխարհային այս երկու կրոնների փոխհարաբերությունների համատեքստում:

Ի տարբերություն քրիստոնեության, իսլամում հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների տարանջատում գոյություն չունի: Մուհամմադը Հիսուսի օրինակով չասաց Աստծունը տվեք Աստծուն, իսկ կայսրինը՝ կայսրին, այլ Մեքքայից տեղափոխվեց Մադինա եւ հոգեւոր իշխանության հետ միասին իր ձեռքում կենտրոնացրեց նաեւ քաղաքական

իշխանությունը: Այսինքն՝ Նա այդ երկու ինստիտուտները չտարանջատեց, ընդհակառակը՝ միավորեց եւ միաձուլեց դրանք: Արդյունքում իսլամի կրոնաբանական համակարգի մեջ հնարավոր չէ հոգեւորը տարանջատել աշխարհիկից, եւ հակառակը: Մուհամմադից շատ ավելի ուշ ստեղծված իրավական համակարգը՝ շարիաթը, համակարգում է անհատի կյանքի բացառապես բոլոր ոլորտները՝ կրոնականից մինչեւ իրավական, ծիսականից մինչեւ միջազգային հարաբերություններ՝ ընդհուպ ամօրյան: Սա է պատճառը, որ իսլամում չկա աստիճանակարգված Նվիրապետական կառույց՝ ինչպես եկեղեցին քրիստոնեական հասարակարգում:

Միով բանիվ՝ խալիֆը, որը Մուհամմադի (ավելի ուշ Նաեւ Ալլահի), տեղապահն է երկրի վրա (Amir al-Mumini)¹¹, ինչպես հոգեւոր ամառնորդ էր, այնպես էլ՝ աշխարհիկ: Նա մի կողմից՝ որպես հոգեւոր ամառնորդ, գլխավորում էր հավատացյալների ուրբաթօրյա աղոթքը, իսկ մյուս կողմից համակարգում էր իսլամական բանակների Նվաճողական արշավանքներն այս կամ այն ուղղությամբ: Բայց սա միայն համակարգի տեսական Նկարագրությունն է:

Պատմության մեջ եղել են դեպքեր, երբ փորձ է արվել խախտել այս կարգը: Առաջինն այդ քայլին դիմեցին սելջուկները: 1055թ. սելջուկների ամառնորդ Տոդուկը իր ձեռքում կենտրոնացրեց Իսլամի տան (Dar al-Islam)¹² աշխարհիկ իշխանությունը՝ խալիֆի տնօրինության տակ թողնելով իսլամական հասարակության միայն հոգեւոր գործերը¹³: խալիֆի եւ սուլթանի փոխադարձ հարաբերություններն այս տեսանկյունից հիշեցնում են Հռոմի պապի եւ գերմանական կայսեր, ինչպես Նաեւ պատմական շատ կարճ ժամանակաշրջանում Ավիոնյան գերության մեջ գտնվող պապի ու ֆրանսիական թագավորի փոխհարաբերությունները:

Երկու դեպքում էլ, ինչպես պապը, այնպես էլ խալիֆը, այնուամենայնիվ, օժտված էին քաղաքական որոշակի իշխանությամբ: Մոնղոլների կողմից Բաղդադի գրավումից հետո խալիֆայության ինստիտուտը վերածնվեց Կահիրեում, բայց հետագայում մամլուքների իշխանության քայքայման հետ զուգընթաց՝ իսլամի քաղաքական ողջ իշխանությունը արդեն կենտրոնացվում է օսմանյան սուլթանի ձեռքում: Ի վերջո, Սելիմ Ահեդ սուլթանը 1517թ. Նվաճեց Եգիպտոսը եւ հռչակվեց որպես խալիֆ՝ վերստին միավորելով իսլամի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունները: Մեքքայի շարիֆը սուլթանին ուղարկեց իսլամական խոշորագույն սրբավայրի՝ Մեքքայի բանալիները:

Հակիրճ փորձեցինք Ներկայացնել քրիստոնեության մեջ հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների տարանջատվածության Եությունը՝ համեմատական եզրեր անցկացնելով, ինչպես քրիստոնեության երկու խոշորագույն ուղղությունների, այնպես էլ այլ կրոնաքաղաքական համակարգերի հետ՝ մասնատուրապես իսլամի: Այս համեմատությունները չափազանց կարեւոր են խնդրո առարկայի վերաբերյալ ըստ Եության պատկերացում կազմելու տեսանկյունից:

Աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների փոխհարաբերությունները Արեւմտյան եվրոպայում

Եկեղեցու՝ որպես համակարգային կառույցի, ձեւավորվելուց ի վեր այն սուր պայքարի մեջ է հայտնվում կայսերական իշխանության հետ: Բայց մինչ էր պայքարի պատճառը, եթե Հիսուս Նազովրեցին հստակ ձեւակերպել ու տարանջատել էր երկու հաստատությունների գործունեության թիրախները. «Կայսրինը տվեք կայսրին, իսկ Աստծունը՝ Աստծուն»: Առաջին հայացքից ամեն ինչ հստակ է, բայց այս հստակության եւ տարանջատված-

ուղթի մեջ որեւէ կերպ չի նշմարվում սահմանագիծը, ինչն էլ հիմք է նախապատրաստում պետության եւ եկեղեցու հնարավոր սերտաճման կամ էլ մեկի կամ մյուսի գերագահության հասնելու ձգտման համար: Ասվածից զատ, արդեն բացահայտ պայթարի ակնարկներ են նկատվում Յիսուսի այլ խոսքերում¹⁴: Օրինակ՝ քարոզներից մեկի ժամանակ նա նշում է, որ երկիր ոչ թե խաղաղություն է բերել, այլ թուր կամ. «Եւ իմ անուան համար բոլորից պիտի ատուէք. Իսկ ով մինչեւ վերջ համբերի, նա պիտի փրկուի (Մատթ. 10:22)»:

Անգլիացի հայտնի պատմագետ Ֆարարը գրում է. «Այս երկու ուժերը խաղաղ չէին կարող ապրել, պետք է պայթար սկսեր, իսկ պայթարը պետք է ընթանար մահի եւ կյանքի տիրույթում: Այստեղ կոմպրոմիսի որեւէ հնարավորություն լինել չէր կարող: Խոսքը համաշխարհային տիրապետության հասնելու ձգտման մասին է: Այսպիսի պայթարը կարող էր ավարտվել միայն այս կամ այն կողմի լիակատար հաղթանակով»¹⁵: Յոմեակական կայսրության սահմաններում քրիստոնեության ինտենսիվ տարածման գործընթացի մեկնարկից մինչեւ Ռեֆորմացիա եւ Եվրոպայում ազգային պետությունների ի հայտ գալը, պետություն-եկեղեցի փոխհարաբերություններն ընթացել են հենց այս համատեքստում:

Որպես համաշխարհային շարժում՝ Զրիստոնեական եկեղեցին իր տարածման ճանապարհին իրականացրել է բավականին ճկուն քաղաքականություն: Այն առաջին հերթին սոցիալական համակարգ էր եւ պատահական չէ, որ նախաձեռնել է ժամանակի համար նախադեպը չունեցող սոցիալական ծրագրեր¹⁶, որոնք նպաստել են կրոնի անկասելի տարածմանն ու նորանոր տարածքներ նվաճելուն:

Կայսրությանը մարտահրավեր նետած շարժումն իր ձեւավորման հենց առաջին փուլում հանդիպել է կայսեր-

ական իշխանության կատաղի հակադեցությանը: Յակամարտությունը շարունակվել է ավելի քան 300 տարի՝ ուղեկցվելով քրիստոնյաների նկատմամբ սոսկալի հալածանքներով ու անհաղթահարելի թվացող արգելքներով: Բայց, ի վերջո, նոր կրոնը հաղթանակի է հասնում՝ նվաճելով ողջ կայսրությունը: Սկզբնական շրջանում այն ստանում է թույլատրելի կրոնի կարգավիճակ, իսկ այնուհետեւ դառնում է կայսրության գաղափարական հիմնասյունը, բազիսային այն պլացդարմը, որն իր շուրջն է համախմբում անծայրածիր Յոմեակական կայսրության տարաբնույթ միավորներին ու հասարակական շերտերին:

Թվում է՝ պայթարն այսքանով պետք է ավարտվեր: Երիցս ոչ: Ավարտված հակամարտությունը պետք է դառնար մի նոր պայթարի մեկնարկային կետը՝ պայթար, որի ծիրում ծնվեց ու կառուցվածքային կերպարանք ստացավ եվրոպական կամ արեւմտյան քաղաքակրթությունը:

Ինչպես նշվեց առաջին գլխում, Յոմեակական կայսրության բաժանման հետ զուգընթաց՝ սկսեց նաեւ արեւմտյան եւ արեւելյան եկեղեցիների բաժանման գործընթացը: Դրանք ստացան բոլորովին տարբեր դրսեւորումներ: Արեւմտյան Յոմեակական կայսրությունում եկեղեցին հստակորեն տարանջատվեց աշխարհիկ իշխանությունից, իսկ կայսրության անկումից հետո պապական աթոռը փոխակերպվեց թեոկրատական պետության: Արեւելյան Յոմեակական կայսրությունում կամ Բյուզանդիայում շարունակեց տիրապետող մնալ հզոր կայսերական իշխանության գաղափարը: Արդյունքում եկեղեցին սերտաճեց աշխարհիկ իշխանության հետ՝ դառնալով վերջինիս գործիքն ու գաղափարական զենքը: Կայսրերը միջամտում էին նույնիսկ դավանաբանական վեճերին, մասնակցում էին տիեզերաժողովներին եւ առանց նրանց կամքի ու համաձայնության, որեւէ ներեկեղեցական հարց չէր լուծվում: Բայց

ասվածից չի կարելի ենթադրել, որ հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունների տարանջատման սկզբունքն այսպիսով խախտվում էր: Եկեղեցին ենթարկվում էր կայսրին, բայց նաեւ հակակշռում ու սահմանափակում էր վերջինիս իշխանությունը:

Բոլորովին այլ էր իրավիճակն Արեւմուտքում: Եթէ Բյուզանդիայում աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունները պետության ներսում հակակշռում ու սահմանափակում էին մեկը մյուսին, ապա Արեւմուտքում աստվածապետության կարգավիճակ ստացած եկեղեցին աշխարհիկ իշխանությունների հետ պայքարում էր համաշխարհային տիրապետության հասնելու համար: Այս մտտեցումները Հռոմի եկեղեցում տիրապետող են եղել դրա ձեւավորման հենց ամենասկզբնական շրջանում. չէ՞ որ այն Հռոմի եկեղեցին է, Պետրոս առաքյալի աթոռը՝ այն ժայռը, որի վրա պետք է կառուցվեր տիեզերական ու ընդհանրական եկեղեցին: Այս ձգտումները հատկապես ակտիվացան Կարլոս Մեծի տերության փլուզումից հետո, եւ եկեղեցին կատաղի պայքարի մեջ մտավ տերության փլատակների վրա ստեղծված պետությունների հետ:

Պապական աշխարհակալական ձգտումները նոր լիցք ստացան Ինոկենտիոս 3-րդի գահակալման ժամանակաշրջանում: Գրեթէ ամբողջ Եվրոպան կախվածության մեջ էր գտնվում պապական աթոռից: Ինոկենտիոս 3-րդը նշում էր, որ Հռոմի քահանայապետը ոչ թէ հասարակ մարդու տեղապահն է, այլ՝ ճշմարիտ Աստծո: Նա էլ Գրիգոր 7-րդ պապի պես համոզված էր, որ պապերի գլխավոր կոչումը աշխարհին տիրելն է: Իր նպատակին հասնելու եւ ամբողջ Եվրոպան հպատակեցնելու համար Ինոկենտիոս 3-րդը կանգ չի առել նույնիսկ եկեղեցու դավաճանաբանական սկզբունքային առանձնահատկությունները վերանայելու խնդրի առջեւ:

Նա իրեն վեր էր դասում եկեղեցական եւ, նույնիսկ, տիեզերական ժողովներից ու յուրացրել էր դավանաբանական դրույթները մեկնելու իրավունքը: Այսպիսի պայմաններում աշխարհիկ իշխանություններն ի վիճակի չէին դիմակայել հավակնոտ պապի աշխարհակալական նկրտումներին:

Զիտրանալով պատմական առանձին մանրամասների մեջ՝ Եվրոպայում եկեղեցու եւ պետության միջեւ սուր հակամարտության վերաբերյալ ընդհանրական պատկերացում կազմելու համար պայքարը խորհրդանշական կերպով դիտարկենք հետեւյալ իրադարձությունների տրամաբանության համատեքստում. Վենետիկի Սուրբ Մարկոսի տաճարում կնքված հաշտությունից (1177թ.) մինչեւ պապերի ավինյոնյան գերություն (1308/9թ.): Չի հենց այս մի քանի դարերի ընթացքում է, որ եկեղեցական աշխարհակալական ձգտումները հասնում են հզորության իրենց գագաթնակետին, իսկ այնուհետեւ արձանագրում առաջին խոշոր պարտությունը:

Առաջին դեպքում՝ Վենետիկի Սուրբ Մարկոսի տաճարում, Հռոմեական Սրբազան կայսրության կայսր Ֆրիդրիխ 1-ին Շիկամորուսը հաշտության պայմանագիր էր կնքում Ալեքսանդր 3-րդ պապի հետ: Պապական աթոռը վճռական հաղթանակ էր տարել աշխարհիկ իշխանության նկատմամբ, եւ պարտված կայսրը ստիպված էր համբուրել պապի կոշիկը եւ ձիու սանձից բռնած՝ ուղեկցել նրան: Պայքարը շարունակվում է նոր թափով, ասպարեզ են իջնում Ինոկենտիոս 3-ը, որի օրոք, ինչպես վերելում նշեցինք, պապական աթոռը հասնում է հզորության իր գագաթնակետին, այնուհետեւ Հռոմեական Սրբազան կայսրության կայսր Ֆրիդրիխ Հինգենշտաուֆենը, որը ստեղծում է Եվրոպայի հզորագույն տերություններից մեկը:

Երկրորդ դեպքում՝ սուր հակամարտություն է ծավալվում Ֆրանսիայի թագ-

ավորական իշխանության և պապական աթոռի միջև, որն, ի վերջո, ավարտվում է պապերի ավինյոնյան գերությանը:

Պայթարը ընթանում էր Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ 4-րդ Գեղեցիկի և Բոնիֆացիոս 8-րդ պապի միջև: Վերջինս իր հավակնոտությամբ ու աշխարհակալական ձգտումներով գերազանցում էր նույնիսկ Ինոկենտիոս 3-ին: Նա ձգտում էր հասնել համաշխարհային տիրապետության և ծնկի բերել ողջ Եվրոպան: Իր հերթին Ֆրանսիան աստիճանաբար վերածվում էր կենտրոնացված ավատատիրական պետության: Ընդհանուր առմամբ՝ Եվրոպայում աստիճանաբար սաղմնավորվում էին ազգային պետությունները և, դրանից ելնելով, կարող ենք նշել, որ միմյանց դեմ էին դուրս եկել երկու իրարամերժ գաղափարներ՝ պապական աստվածապետությունն ու ազգային պետության դեռևս Նոր սաղմնավորվող տարակերպը: Պայթար, որտեղ եկեղեցին վճռական պարտություն կրեց՝ թերևս առաջին լուրջ պարտությունը աշխարհիկ իշխանության դեմ պայթարում: «Unam Sanctam» բուլլայի¹⁷ մեջ Բոնիֆացիոս 8-րդ պապը հստակ ձեռնարկում է իր հավակնությունները. «Պապի իշխանության տակ գտնվում է երկու թուր՝ մեկը մյուսին ենթակա՝ աշխարհիկը՝ հոգևորին, հոգևոր իշխանությունը տրված է մարդուն, բայց այն մարդկային չէ, այլ՝ աստվածային: Ով չինազանդվի դրան, հակառակվի Տիրոջ կամքին, կենթարկվի պարտադրական փրկության¹⁸»: Կետերով հիմնավորվում է, որ աշխարհիկ իշխանությունը պետք է ենթարկվի ու ծառայի եկեղեցուն, վերջինս ունի թագավորներին ցանկացած սխալների համար պատժելու իրավունք, և Զոմմի եպիսկոպոսապետին ենթարկվելը յուրաքանչյուր անհատի փրկվելու համար անհրաժեշտ պայման է: Եկեղեցին երկգլխանի հրեշ չէ, դրա գլուխը մեկն է՝ պապը, ինչպես որ մեկ է Աստված:

Թագավորական իշխանության և պապի պայթարը ուղեկցվում էր փոխադարձ՝ մեկը մյուսին քննադատող հրապարակախոսությամբ: Բայց Զոմմի պապական աթոռը դատապարտված էր պարտության: Տնտեսական պատժամիջոցների և ուժի կիրառման արդյունքում Ֆիլիպ 4-րդը վճռական հաղթանակ է տանում: Գիլյոմ Նոգարեի գլխավորությամբ նա զինված խուճբ է ուղարկում Անանիա, որտեղ խուճբը արգելափակում է բնակչության կողմից լքված պապին և բռնության ենթարկում (վերջին տեղեկության հետ կապված՝ բանավեճերը շարունակվում են մինչ օրս): Մի քանի օր անց պապը մահանում է: Ի վերջո, եկեղեցու վրա իր ազդեցությունը տարածելու, այն վերահսկելու և քաղաքական գործիքի վերածելու նպատակներով թագավորի ճնշման տակ պապական Նստավայրը տեղափոխվում է Ավինյոն՝ մինչև 1377թ.:

Այսպիսով, եվրոպական հողի վրա եկեղեցին կրեց առաջին լուրջ պարտությունը, բայց ամեն ինչ դեռ առջևում էր՝ Ռեֆորմացիա, ԶակաՌեֆորմացիա և, ի վերջո, Վեստֆալյան համակարգի ձեռնարկում, որոնք արդեն մի Նոր էջ են բացում միջազգային հարաբերությունների, պետությունների և եկեղեցու համար: Եկեղեցին աստիճանաբար սկսում է վերածվել զուտ կրոնական կառույցի՝ սահմանափակված միայն հոգևոր ծառայություններ մատուցելու տիրույթում:

Աշխարհիկ և հոգևոր իշխանությունները Մեծ Զայթում

Ինչպես վերը նշվեց, պետության և եկեղեցու փոխհարաբերությունները բավական բարդ ու հակասական են: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում այդ փոխհարաբերություններն ունեցել են տարասեռ դրսևորումներ: Այս համատեքստում, ինչպես նաև Նախորդ գլխում շեշտադրված կառուցվ-

ածքային առանձնահատկությունները հաշվի առնելով, փորձենք վերլուծել աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների տարանջատման ու փոխհարաբերման կերպերը հայկական միջավայրում: Իհարկե, գործ ունենք հարյուրամյակների ընթացք ունեցող պատմական չափազանց մեծ շրջափուլի հետ, բայց մեր առաջնային խնդիրը ոչ այնքան այս կամ այն իրադարձության առանձին քննությունն է, որքան պատմական տարաբնույթ իրողությունների մեկտեղման եւ ամբողջության մեջ դիտարկման արդյունքում խնդրո առարկայի ընդհանրական պատկերը ստանալը՝ խճանկարի հավաքման տրամաբանությամբ:

Նախորդ գլուխներում կատարված՝ քրիստոնեական համակարգի կառուցվածքային նկարագրության եւ հակիճ պատմական վերլուծության հիման վրա փորձենք նույն խնդիրը ձեւակերպել ու նկարագրել նաեւ հայկական միջավայրում:

Չնայած առանձնացրինք քրիստոնեության մեջ առկա աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունների տարանջատման երկու տարբեր մոտեցումներ՝ արեւմտյան եւ բյուզանդական, բայց հիմնականում ուսումնասիրության թիրախ դարձավ Կաթողիկ եկեղեցին, քանի որ, ինչպես կտեսնենք ստորեւ, Հայ առաքելական եկեղեցին ընտրեց հենց արեւմտյան եկեղեցու փորձը:

Քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հաստատվեց հայկական պետության թուլացման աստիճանական գործընթացի հետ զուգահեռ: Սխալվելու չնչին հավանականությամբ կարող ենք պնդել, որ կայսրության արեւմտյան հատվածում եւս այդ նույն ժամանակաշրջանում սկիզբ էր առել քայքայման աստիճանական մի ընթացք: Հանգամանքն այս նպաստավոր պայմաններ է ստեղծում եկեղեցու՝ որպես պետությունից առանձին համակարգի, ձեւավորման ու կայացման համ-

ար, ինչպես կայսրության արեւմտյան հատվածում:

Ինչպես առաջին գլխում նշեցինք, հռոմեական իրականության մեջ առաջնային է դառնում բնաավեճը հետեւյալ երկու քաղաքակրթական հարացույցերի շուրջ. Աստված-օձյալ գահակալ-հովվապետ-հանրոճյթ, թե՛ Աստված-հովվապետ- օձյալ գահակալ-հանրույթ: Խնդիրը պայմանականորեն հանգուցալուծվեց կայսրության բաժանումից հետո: Արեւմտյան հռոմեական կայսրության մեջ աստիճանաբար սկսեց տիրապետող դառնալ երկրորդ տարակերպը, որը հաստատուն կառուցվածք ստացավ հատկապես կայսրության անկումից հետո, իսկ Արեւելյան հռոմեական կայսրությունում՝ առաջին տարակերպը: Հայկական միջավայրում եւս արմատավորվեց երկրորդ տարակերպը, քանի որ, ինչպես նշեցինք, եկեղեցու ձեւավորման հետ զուգընթաց՝ արքայական իշխանությունն աստիճանաբար թուլանում էր, իսկ վերջին երկու հզոր թագավորների (Արշակ 2, Պապ) չեզոքացումից հետո եկեղեցին մղվում է առաջնային պլան:

4-րդ դարում իշխանակենտրոն քաղաքակրթական կառույցը թեւակոխում է ճգնաժամի շրջայական շրջափուլ, Արտաշես 1-ին արքայի ձեւավորած համակեցական կառույցը քայքայվում էր¹⁹: Գնալով էլ ավելի էին խորանում արքայի եւ տոհմիկ ավագանու հակասությունները, նախարարների միջավայրում տիրապետող էին դառնում կենտրոնախույս ձգտումները:

Իշխանակենտրոն համակարգի ճգնաժամի մարտահրավերին պատասխանելու առաջին լուրջ փորձն իրականացրեց Տրդատ 3-ը: Այդ ուղղությամբ նրա ամենանշանակալի քայլերից էր եկեղեցու՝ որպես պետական կրոնի, ընդունումը: Իհարկե, դա խնդիրների լուծման համար այնքան էլ արդյունավետ քայլ չէր²⁰, ինչը կտեսնենք հետագա շարադրանքի ընթացքում:

Տոհմիկ ավագանու եւ կենտրոնախույս ուժերի դեմ պայքարում Տրդատը փորձեց ներքին հենարանի ու գաղափարական զենքի կարգավիճակում օգտագործել եկեղեցին, որի հետ ի սկզբանե հակամարտային փոխհարաբերությունների մեջ էր: Սա, անշուշտ, կտրուկ որոշում էր, որն էլ ավելի սրեց իրավիճակը եւ դարձավ քաղաքացիական պատերազմի բռնկման կայծը, բայց ոչ պատճառը: Քաղաքացիական պատերազմն ընթանում էր ավելի շուտ արքայի եւ տոհմիկ ավագանու՝ ներառյալ քրմերի միջեւ, այլ ոչ թե քրիստոնյաների եւ քրմերի: Չնայած աղբյուրների բացակայությանը, իրադարձությունների ընդհանուր տրամաբանությունը թույլ է տալիս ենթադրել, որ եկեղեցին այս դեպքում սոսկ գործիք էր արքայական իշխանության ձեռքում: Գործիք, որն աստիճանաբար թափ էր հավաքում եւ Տրդատ 3-ի օժանդակությամբ զորեղանում՝ վերածվելով ինքնուրույն միավորի: Եկեղեցու հզորացման գործընթացը շարունակվում է նաեւ Տրդատ 3-ի հաջորդի՝ Խոսրով 3-րդի օրոք: Այն աստիճանաբար վերածվում է խոշոր դրամագլխի տիրապետող քաղաքական ուժի՝ աստիճանաբար դուրս գալով արքայական իշխանության վերահսկողությունից:

Արդյունքում քրիստոնեության ընդունումից ի վեր Տիրան արքայի օրոք արձանագրվում է պետության եւ եկեղեցու առաջին հուժկու բախումը: Լեոն նշում է, որ Տիրան արքան իր հոր կամ պապի ջերմեռանդությունը չունեւ քրիստոնեական կրոնի նկատմամբ եւ չէր հալածում հեթանոսներին²¹: Այս հանգամանքը ներկայացվում է իբր թե Տիրան արքայի եւ Հուսիկ կաթողիկոսի միջեւ առաջացած հակամարտության առաջնային պատճառ: Լեոն նաեւ հավելում է, որ Հուսիկ կաթողիկոսը Տիրան արքայի փեսան էր, սակայն ամուսնական զույգի հարաբերություններն այնքան էլ լավ չեն դասավորվել, որի պատճառով արքայի

դուստրը հեռացել էր Հուսիկից²²: Շրջանառվող պատճառներից սա, թերեւս, ամենաանլուրջն է:

Այս պարագայում եւս աղբյուրները չափազանց միակողմանի են եւ հատվածային, բայց սխալվելու չնչին հավանականությամբ կարող ենք պնդել, որ եկեղեցու եւ պետության բախման առիթը չէր կարող պայմանավորված լինել զուտ կրոնական պատճառներով: Պատճառներն առավել խորն էին՝ տնտեսականից մինչեւ քաղաքական: Ինչպես վերն արձանագրվեց, Տրդատ 3-րդը եկեղեցին փորձում էր օգտագործել որպես ներքին հենարան, բայց եկեղեցու կայացման գործընթացի հետ միասին աստիճանաբար թուլանում էր նաեւ կենտրոնացված պետությունը, իսկ եկեղեցին հենարանի կարգավիճակից փոխակերպվում էր առանձին քաղաքական ուժի: Այն իր ձեռքում կենտրոնացրել էր հսկայական տնտեսական միջոցներ ու հողատարածքներ՝ դառնալով Արշակունի արքաների կենտրոնախույս ուժերի դեմ մղվող պայքարն արգելափող եւ հակակշող ուժերից մեկը: Թերեւս սա էր բախման առաջնային պատճառը, իսկ աղբյուրներում մատնանշվող կրոնական-ընտանեկան խնդիրները սոսկ ածանցվում են այս հիմնական խնդրից: Հակամարտությունը հանգուցալուծվում է Տիրան արքայի վճռական հաղթանակով: Հուսիկ Պարթեւը դատապարտվում է մահապատժի: Բայց դա խնդրի լուծում չէր, պետությունը շարունակվում էր ինտենսիվ կերպով քայքայվել, իսկ եկեղեցին՝ հզորանալ:

Հելլենիստական կենտրոնացված պետության ավանդույթները վերականգնելու ծրագիր է նախաձեռնում Արշակ 2-ը: Այդ ծրագրի առաջնային հենարանն է դառնում նրա հիմնած քաղաքը՝ Արշակավանը, որը պետք է խորհրդանշեր հայկական կենտրոնացված պետության վերաթժեւորման եւ վերածնակերպման գործընթացը: Բայց քայքայմ-

ան գործընթացն այլևս անկասելի էր. տոհմիկ ավագանու, կենտրոնախույս նախարարների ու արքայի միջեւ հակամարտությունը հասնում է սրման գագաթնակետին: Նախարարները կործանում են Արշակավանը, որի պայմանական ընկերային տարածքում պետք է հաստատվեր արքայի բացարձակ իշխանությունը: Արշակը ծիգ էր անում հայոց հանրության ներկայանալու որպես ոգեղեն օրենք, ինչպես իր հելլենիստական նախորդները²³: Սակայն, ինչպես պրոֆեսոր Ստեփանյանն է նկատում, Մեծ Հայքում իրավիճակը բոլորովին այլ էր, քրիստոնեության ընդունումով արմատապես փոխվել էր հանրության հոգեւոր արժեքային համակարգը, նրանում այլևս տեղ չկար **հայտնեալ, սրբազան** կամ **փրկիչ** երկրային գահակալներին: Այժմ երկնային գահակալի եւ նրա Միածին որդու դարաշրջանն էր: Եվ երկրային քաղաքի տեսլականին փոխարինելու էր եկել երկնային քաղաքը՝ Վերին Երուսաղեմը²⁴:

Պետություն-եկեղեցի փոխհարաբերություններում բավական հետաքրքիր զարգացումներ են արձանագրվում Պապ թագավորի կարճատեւ կառավարման ժամանակաշրջանում: Վերջինս փորձում է շարունակել կենտրոնացված պետություն ստեղծելու ուղղությամբ իր հոր՝ Արշակ 2-րդի գործը: Այդ ծրագրի ճանապարհին Պապն առաջնային գործիք է սկսում դիտարկել եկեղեցին: Կաթողիկոս Ներսես Մեծի մահվանից (կամ էլ սպանվելուց) հետո Պապը կաթողիկոս է նշանակում Շահակ 1-ին Մանազկերտցուն, որն ամբողջությամբ գտնվում էր արքայի վերահսկողության ներքո՝ ի տարբերություն Լուսավորչի տան կաթողիկոսների: Վերջիններս հունասեր էին եւ խոչընդոտում էին Պապի կողմից իրականացվող կոմպլեմենտար (փոխլրացնող) արտաքին քաղաքականությունը:

Այս տեսանկյունից Շահակի ընտրությունը եկեղեցուն զրկում էր արտաքին

այս կամ այն կողմնորոշումից, իսկ եթե սրան ավելացնենք նաեւ այն, որ Պապն արգելեց Նոր կաթողիկոսին մեկնել Կեսարիա ու այնտեղ օծվել, ապա կարող ենք փաստել, որ եկեղեցին ամբողջապես անցնում է արքայական իշխանության վերահսկողության ներքո: Ավելին՝ իր դիրքերն ամրապնդելու նպատակով Պապը հարվածում է եկեղեցու տնտեսական կապիտալին՝ արգելում տասանորդը, կրճատում է հոգեւորականների թիվը եւ այդպես շարունակ: Կարծես թե իրականություն էր դառնում Տրդատ 3-րդի մշակած ծրագիրը. եկեղեցին ամբողջությամբ հայտնվում է աշխարհիկ իշխանության ենթակայության տակ, դառնում վերջինիս հենարանն ու գաղափարական զենքը, բայց, ինչպես նշեցինք, Տրդատի այդ ծրագիրն այդքան էլ արդյունավետ չէր: Հայ Արշակունիների վերջին հզոր գահակալը դավադրության զոհ դարձավ: Արդյունքում կենտրոնացված պետություն ստեղծելու գաղափարը հօյս ցնդեց, եւ Մեծ Հայքի թագավորությունը սահուն ընթացքով եւ տոհմիկ ավագանու ջանքերով աստիճանաբար սկսեց անկում ապրել:

Հայկական միջավայրում արմատավորվեց Աստված-հովվապետ-օծյալ գահակալ-հանրայն տարակերպը, ինչպես որ Արեւմտյան հռոմեական կայսրության տարածքում: Իշխանակենտրոն քաղաքակրթական համակարգի քայքայման գործընթացը հասավ իր տրամաբանական հանգուցալուծմանը: Այլևս Մեծ Հայքում տիրապետող դարձավ եկեղեցին, որը իշխանակենտրոն քաղաքակրթական համակարգի փոխարեն առաջարկեց իր տեսլականը՝ մշակութային կենտրոն համակարգը: Միավելու աննշան հավանականությամբ կարող ենք պնդել, որ եթե Պապ թագավորը չսպանվեր, ապա հայկական միջավայրում տիրապետող կդառնար բյուզանդական եկեղեցու տարակերպը, այն է՝ հզոր արքայական իշխանություն եւ նրա

ենթակայության տակ գտնվող եկեղեցի՝ մեկը մյուսին հավասարակշռող ու հակակշռող:

Արեւմտյան Եվրոպայի պարագայում վերոհիշյալ քաղաքակրթական հարացույցն ապրեց իր տրամաբանական ու օրինաչափ ընթացքը եւ աստիճանաբար սպառվեց: Այլ կերպ ասած՝ արեւմտյան քաղաքակրթությունն ընթացավ բնականոն հունով, եկեղեցու աստվածապետական աշխարհակալությունն ընդհատվեց՝ քաղաքական, մշակութային եւ սոցիալ-տնտեսական օրինաչափ գործընթացներով պայմանավորված: Վերածնունդը, Ռեֆորմացիան, միջազգային հարաբերությունների Վեստֆալյան համակարգը, ազգային պետությունների ի հայտ գալը, լուսավորականությունը եւ Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը միջնադարյան ընթացքի տրամաբանական շարունակությունն էին:

Այլ էր իրավիճակը հայկական միջավայրում: Պատմական բնականոն ընթացքը այստեղ հապաղեց, արգելակվեց ու ընդհատվեց մի շարք օբյեկտիվ պատճառներով: Եկեղեցու աստվածապետության կայացումը Մեծ Հայքի տարածքում հանգեցրեց ողբերգական հետեւանքների: Այդ իրողությունը կանխարգելեց աշխարհիկ քաղաքական հաստատությունների ձեւավորման բնականոն գործընթացը, ինչը հանրությանն անպաշտպան թողեց բոչվոր ցեղերի ներթափանցման դեմ: Այսինքն՝ եկեղեցին, իր կամքից անկախ, ստանձնեց մի պարտավորություն, որը վեր է նրա հետաքրքրություններից եւ կարողություններից: Այն հիեարխիկ ավանդական ու պահպանողական կառույց է եւ այդ իսկ պատճառով չի կարող ճգնաժամի մեջ գտնվող հանրությանը տանել բարեփոխումների ու արդիականացման ճանապարհով, այն անկարող է կազմակերպել բնակչության պաշտպանությունը եւ արձագանքել սոցիալական հիմնախնդիրներին:

Նկարագրվող իրավիճակը վերաբերում է 14-15-րդ դարերին, երբ Բագրատունյաց թագավորության անկումից եւ Հայաստանից Վրացական պետության նահանջելուց հետո երկիրը մնաց լիովին անպաշտպան: Այսինքն՝ Արշակունյաց թագավորության անկումից հետո տիրապետող դարձած արեւմտյան եկեղեցու տարակերպն ամբողջական ձեւ ստացավ Բագրատունյաց թագավորության անկումից հետո: Առաքելական եկեղեցին Հայաստանում վերջնականապես ձեռք բերեց Ջոռմի եկեղեցու կարգավիճակը եւ վերածվեց սահմաններ չունեցող աստվածապետության: Այն կատարյալ տեսք ստացավ 1441թ., երբ կաթողիկոսական աթոռը տեղափոխվեց Էջմիածին:

Մանրամասն չենք անրադառնա Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում եկեղեցի-պետությունն փոխհարաբերություններին: Միայն նկատենք, որ Բագրատունի գահակալներին ես՝ ինչպես Արշակունիներին, չհաջողվեց հասնել եկեղեցու նկատմամբ գերակայության: Հասկանալի է, որ ներսից աստիճանաբար քայքայվող, բայլ առ բայլ մասնատվող եւ արտաքին լրջագույն մարտահրավերների առջեւ կանգնած պետությանը դժվար թե հաջողվեր այդպիսի մի գործընթաց նախաձեռնել:

Աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունները Կիլիկիայում

Բոլորովին այլ էր իրավիճակը Կիլիկիան Հայաստանում: Այստեղ առաջնությունը տրվում էր բացառապես աշխարհիկ իշխանությանը: Իհարկե, պետություն-եկեղեցի մրցակցություն, այնուամենայնիվ, կար, բայց Լեւոն 2-րդը կարողացավ վճռականորեն հպատակեցնել եկեղեցուն: Ավելին՝ Սմբատի Դատաստանագրքի մեջ Ջոռմի պապը եւ Կ.Պոլսի պատրիարքը ավելի բարձր կարգավիճ-

ակ ունեին, քան Ամենայն Յայոց Կաթողիկոսը: Պատահական չէ, որ աշխատությունը սկսվում է պետական և վարչական իրավունքից, որին միայն Նոր հաջորդում են եկեղեցական իրավունքը, այնուհետև քաղաքացիական իրավունքը: Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեջ, ընդհակառակը, սկզբում ներկայացվում է եկեղեցական իրավունքը²⁵: Յենց այստեղ է Սմբատ սպարապետի և Մխիթար Գոշի Դատաստանագրքերի առաջնային տարբերությունը: Մխիթար Գոշը Յայաստանի «Արեւելաց կողմի» վարդապետների «կլանի» ամենավառ ներկայացուցիչներից մեկն էր: «Կլան» բառի օգտագործումը խիստ պայմանական է՝ բառի դրական իմաստով, քանի որ այդ վարդապետները Յայոց պատմության ամենավառ անհատականություններից են: Եվ այսպես՝ վարդապետներն այդ բավական լուրջ ազդեցություն ունեին ինչպես բուն Յայաստանում, այնպես էլ Կիլիկիայում: Առանց նրանց որեւէ հարց չէր լուծվում: Պատահական չէ, որ Մխիթար Գոշին սիրաշահում էին Նույնիսկ Լեւոն 2-րդը և Չաքարե Ամիրսպասալարը: Այս տեսանկյունից պատահական չէր, որ Գոշի Դատաստանագրքում առաջնությունը տրված էր եկեղեցուն:

Ընդհանրապես՝ պետական կառույցը Կիլիկյան Յայաստանում բավական ուժեղ էր, եթե համեմատենք այն Արշակունյաց, Բագրատունյաց պետությունների հետ, իսկ եկեղեցին ստորադասված էր պետությանը: Եկեղեցու հպատակեցման գործընթացը սկսում է Լեւոն 2-րդ Մեծը: Նրա կառավարման օրոք կաթողիկոսական գահին իրար հաջորդել են 4 կաթողիկոսներ՝ Գրիգոր 4-րդ Տղա, Գրիգոր 5-րդ Զարավերժ, Գրիգոր 6-րդ Ապիրատ և Յովհաննես 6-րդ Սսեցի: Գրիգոր Տղա կաթողիկոսը բավական հզոր անհատականություն է եղել և փորձել է ինքնիշխան քաղաքականություն վարել:

12-րդ դարի վերջին քառորդում այնքան են մեծանում հոգևոր ֆեոդալների

հարստությունն ու հողային տիրույթները, որ պատմիչ Սմբատ Սպարապետը Գրիգոր Տղային համեմատում է արքաների հետ. «զկեսսս իւր արքայակերպ վարէր մեծամեծ տիրիւք և առատ պարգևօք²⁶»: Կիլիկյան իշխանները չէին կարող հանդուրժել այս իրավիճակը: Նրանք ձգտում էին եկեղեցու հպատակեցման հետ միասին ստանալ նաև նրանց աջակցությունն արտաքին քաղաքական հարցերում: Եվ այսպես, Տղա կաթողիկոսի մահվանից հետո նրան հաջորդում է Գրիգոր 5-րդ Զարավերժը: Նա ոչ մի կերպ չի կարողանում տեղավորվել քաղաքական այս գծի մեջ և բախման մեջ է հայտնվում Լեւոն 2-րդի հետ:

Սմբատ պատմիչը գրում է. «չինազանդէր ամենեցուն, այլ ինքնիշխանութեամբ ունէր զհայրապետութիւն»: Ի վերջո, նա ձերբակալվում և սպանվում է: Նրան գտնում են բերդի պարիսպների մոտ՝ անշնչացած, մեջքին էլ պարան, այստեղից էլ առաջացել է Զարավերժ անունը՝ ժայռից ցած գլորված կամ գահընկեց արված: Ի դեպ, Գրիգոր կաթողիկոսը ձերբակալվել էր առանց քննության և եկեղեցական ժողովի: Կատարվածն աննախադեպ էր հայ իրականության մեջ և վկայում է Լեւոն 2-րդի անսահման իշխանության մասին:

Գրիգոր 5-րդ Զարավերժ կաթողիկոսին հաջորդեց Գրիգոր 6-րդ Ապիրատը: Վերջինս կաթողիկոս ընտրվեց առանց Յայաստանի հոգևորականության կարծիքը հաշվի առնելու: Այսինքն՝ Լեւոն 2-րդին անհրաժեշտ էր այնպիսի մի կաթողիկոս, որը հլու-հնազանդ կիրականացնի արտաքին քաղաքականության ոլորտում արված կրոնական փոխզիջումները: Իսկ Յայաստանի եպիսկոպոսների երաշխավորած կաթողիկոսը հաստատապես փոխզիջումների չէր գնա: Այսպիսով՝ Լեւոն 2-րդն ուներ բացարձակ իշխանություն, իսկ եկեղեցին ստորադասված էր արքայական

իշխանությամբ: Այս տարակերպը շարունակվել է նաեւ հաջորդ գահակալների օրոք: Չնայած բազմաթիվ հակասություններին եւ ճգնաժամային իրավիճակներին եկեղեցին եկթակա էր արքային, իսկ տարանջատումը դրսևերովում էր ներքաղաքական հավասարակշռման եւ փոխադարձ սահմանափակման տրամաբանության մեջ: Այսպես՝ եկեղեցին Կիլիկիայում եւ եկեղեցին Մեծ Հայքում բոլորովին տարբեր կարգավիճակներ ունեին:

Հայտնի է, որ Կիլիկյան Հայաստանը մշակութային, իրավական եւ քաղաքական տեսանկյունից մեծապես կապված էր Ֆրանսիական թագավորության հետ, որտեղ 13-րդ դարի վերջին եւ 14-րդ դարի սկզբին աստիճանաբար սկսում է ազգային պետության գաղափարի սաղմնավորումը: Վստահաբար հենց այդ հոսանքների ազդեցության տակ էր նաեւ Կիլիկյան Հայաստանը: Այդ տեսականը պարզ դրսևերովում էր հատկապես Սմբատ սպարապետի Դատաստանագրքի մեջ: Բայց Կիլիկիայի հայկական պետությանը վիճակված չէր անցնել այն ճանապարհով, որով անցավ Ֆրանսիական թագավորությունը: Այն պետք է կործանվեր ներքին երկպառակություններից եւ մուսուլմանների հարվածներից: Իսկ կաթողիկոսական աթոռը 1441թ. տեղափոխվում է Էջմիածին, եւ այսպիսով վերջնական կառուցվածք է ստանում «Հայկական Վատիկանի» աստվածապետությունը:

ՀՂՈՒՄՆԵՐ

- 1 Տէն Ա. В Карташев, Вселенские соборы, Париж, 1963:
- 2 Տէն Ա. Ստեփանյան, Պատմության հետազոծը, Երևան, 2014, էջ 124: G. Clark, Christianity in Roman Society, Cambridge, Cambridge Univ. Press, pp. 95-103
- 3 Ա. Ստեփանյան, էջ 158:

- 4 S. Huntington, The clash of Civilizations and Remaking of World Order, New York Touchstone, 1997, p. 97.
- 5 S. Huntington p. 97.
- 6 Ա. Ստեփանյան, Պատմության հետազոծը, Փրինթինթոն, Երևան, 2014, էջ 157:
- 7 Ф. Бродель, Грамматика цивилизаций, 2008, с. 304:
- 8 Freeman CH., The Closing of the Western Mind: The Rise Faith and Fall of Reason, New York Vintage, 2003, pp. 251-270.
- 9 F. Braudel, A History of Civilizations, New York, Penguin Books, 1995, pp. 307-308.
- 10 S. Huntington, նույն տեղում, p. 97.
- 11 П. Грязневич, Ислам и государство, Ислам (հոդվածների ժողովածու), Москва, 1984, с. 196-197
- 12 Իսլամական աշխարհակալության տեսանկյունից աշխարհը բաժանվում է ազդեցության երեք ոլորտների՝ Dar al-Islam (Իսլամի տուն), Dar al-Harb (Պատերազմի տուն), Dar al-Ahd կամ Dar al-Sulh (Հաշտության կամ Չինադարարի տուն): Առաջինը մուսուլմանների տիրապետության տակ գտնվող տարածքներն են, երկրորդը՝ նրանց կողմից դեռևս չնվաճվածները, իսկ երրորդը առաջինի եւ երկրորդի միջև գտնվող տարածքներն են, որոնք դեռևս չեն նվաճվել, բայց ճանաչել են նրանց գերիշխանությունը եւ հարկատու դարձրել կամ էլ զինադարար կնքել:
- 13 Մանրամասն տե՛ս Бартольд, Халиф и Султан, с. 15-78, Гусейнов, Султан и Халиф, с. 127-138, Пиотровский, Светское и Духовное, с. 175-188:
- 14 Е. Черняк, Вековые конфликты, Москва, 1988, с. 8:
- 15 Ф. Фарар, Первые дни христианства, СПб, 1892, с. 628.
- 16 Տարեգիրք Ը, Վարդան Խաչատրյան, Քրիստոնեության պատմական ուրվագիծը, Երևան, 2013, էջ 159:
- 17 Տէն Encoclopedia Britannica, London, 1768, vol. 17, p. 209:
- 18 Г. Лозинский, История папство, 1961, Москва с. 184:
- 19 Ա. Ստեփանյան, էջ 144:
- 20 Նույն տեղում, 153:

Ինչ վերաբերում է գների կայունության խնդրին, ապա դրա իրագործման նպատակով Կենտրոնական բանկը մշակում, հաստատում եւ իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրեր («ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված): Ծրագրով մակրոտնտեսական փաստացի եւ սպասվող զարգացումների վերլուծության հիման վրա նախանշվում են դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները:

Դրամավարկային քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացում առաջնահերթ խնդիր է դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականությունների համակարգումը: Համակարգման դաշտին են վերաբերում ինչպես մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների ընտրությունը, այնպես էլ Կենտրոնական բանկի կողմից իրացվելիության կարճաժամկետ կարգավորմանը, Կառավարության կողմից արտաքին ֆինանսական հոսքերի ստացմանն ու ծախսմանը, պետական պարտատուների թողարկմանն ու տեղաբաշխմանը

յին քաղաքականությունների համակարգումն իրականացվում է միջին ժամկետ, ամսական, եռամսյակային եւ տարեկան ծրագրերի մշակման, ճշգրտման ու իրականացման գործընթացում:

ԿԲ-ն ՀՀ կառավարության հետ համատեղ մշակում է տնտեսական եւ ֆինանսական ծրագրեր, ինչպես նաեւ աջակցում դրանց իրագործմանը, եթե դրանք չեն հակասում ԿԲ նպատակներին:

Առանձնակի ուշադրության է արժանի գործարար միջավայրի ցուցանիշը (ԳՄՑ), որը 2016թ. երկրորդ եռամսյակում՝ շարունակելով անշեղորեն աճի միտումը, բարձրացել է 0.63 կետով եւ կազմել 51.0՝ գտնվելով կայունության միջակայքի սահմաններում:

Ընթացիկ եռամսյակում ԳՄՑ-ը ձեւավորվել է առեւտրի եւ շինարարության ոլորտների հաշվեկշիռների՝ համապատասխանաբար 2.8 ու 1.5 կետերով աճի եւ ծառայությունների ոլորտի հաշվեկշիռի՝ 1.1 կետով նվազման արդյունքում: Արդյունաբերության ոլորտը բնութագրող հաշվեկշիռի մակարդակը այս եռամսյակ մնացել է անփոփոխ: Նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ԳՄՑ-ն աճել է 0.64 կետով:

Գործարար միջավայրի ցուցանիշի շարժընթացը

	2014/1	2014/2	2014/3	2014/4	2015/1	2015/2	2015/3	2015/4	2016/1	2016/2
Արդյունաբերություն	57.0	56.4	57.5	56.0	53.9	55.6	51.9	51.2	53.7	53.7
Շինարարություն	52.2	44.8	44.1	39.0	41.5	42.0	39.2	35.2	37.5	39.0
Առեւտուր	56.9	60.1	57.5	49.8	49.0	45.0	45.5	48.6	54.8	57.6
Ծառայություններ	55.1	59.9	54.0	49.0	54.0	55.0	59.5	61.4	52.2	51.1
ԳՄՑ	55.5	55.7	53.8	49.2	50.4	50.4	50.1	50.3	50.4	51.0

առնչվող խնդիրները: Դրամավարկային եւ հարկաբյուջետային քաղաքականությունների համակարգման հիմքը «ՀՀ ֆինանսների նախարարության եւ ՀՀ կենտրոնական բանկի միջեւ համագործակցության որդեգրած սկզբունքների վերաբերյալ համաձայնագիրն» է: Դրամավարկային եւ հարկաբյուջետա-

Այս բոլոր ձեռնարկումների հիմնական օղակը՝ ԿԲ-ն է, որը կազմված է Կենտրոնական բանկի նախագահից ու խորհրդի հինգ անդամներից, որոնց նշանակում է ՀՀ նախագահը՝ հինգ տարի ժամկետով:

Կենտրոնական բանկի նախագահը համակարգում է բանկի բնականոն աշ-

խատանքը, ներկայացնում է Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում եւ միջազգային կազմակերպություններում, իրականացնում է օրենքով Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ:

Հանրապետությունում օրենքի ուժով Կենտրոնական բանկին է վերապահված ՀՀ-ում «գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու եւ զարգացնելու» խնդիրը եւ դրա հետ կապված տրված են լայն իրավասություններ «կարգավորելու եւ վերահսկելու վճարահաշվարկային համակարգի, այդ թվում վճարահաշվարկային ծառայություններ մատուցող բանկ չհանդիսացող կազմակերպությունների գործունեությունը»:

Կենտրոնական բանկի կողմից, եւ վճարահաշվարկային համակարգերի

ԿԲ խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույքն իջեցրել է 11 անգամ, միայն 2016թ. ընթացքում՝ 8 անգամ: Վերջին իջեցումը եղել է 2017թ. փետրվարին, երբ ՀՀ ԿԲ ղեկավարությունը վերաֆինանսավորման տոկոսադրույքն իջեցրեց 0.25 տոկոսային կետով՝ մինչեւ 6%:

Շատ էական է, որ 2013-2016թթ. ընթացքում նկատվել է բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումների զգալի նվազում (տե՛ս Աղյուսակ 2):

Դրամական փոխանցումներ ֆիզիկական անձանց հասցեին (բանկային համակարգի միջոցով)

**Աղյուսակ 2՝
հազ. դոլար**

Տարեթիվ	2013	2014	2015	2016
Չուտ	155576	1388990	891390	715901
Ներհոսք	100%	89.9%	57.7%	46.3%

ստեղծման եւ գործունեության իրականացման, ինչպես նաեւ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության համար անհրաժեշտ է ստանալ Կենտրոնական բանկի թույլտվությունը: Կենտրոնական բանկի խորհրդին տրված է նաեւ իրավասություն՝ ուժը կորցրած ճանաչել հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման եւ գործունեության, ինչպես նաեւ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության վերաբերյալ իր տված թույլտվությունը, եթե առկա են օրենքով սահմանված հիմքերը:

Նշենք, որ վերջին տարիներին ՀՀ Կենտրոնական բանկն արդարացիորեն իրականացնում է նաեւ վերաֆինանսավորման տոկոսադրույքի հետեւողական իջեցման քաղաքականություն: Այսպես՝ 2015թ. երկրորդ կեսից առ այսօր

Այսպիսով՝ դրամավարկային քաղաքականության հիմնական նպատակը վարկի եւ դրամաշրջանառության գործընթացների վրա ներգործության միջոցով տնտեսական իրավիճակների կարգավորումն է՝ ինչպես նաեւ մասնավոր ինստիտուտների վրա ներգործությունը, բանի որ դրանք են դրամավարկային համակարգի հիմքը:

Փաստենք, որ առանց Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի ՀՀ տարածքում բանկային գործունեություն իրականացնելն արգելվում է: Ընդ որում, «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ դրանք հիմնադրվում են կամ որպես բաժնետիրական ընկերություն կամ էլ որպես կոոպերատիվ բանկ:

Իսկ ներկա փուլում մասնավորապես ՀՀ Կենտրոնական բանկի զարգացման խնդիրները հանգում են հետեւյալին.

1. Գնաճի նպատակադրված ռազմավարության ներքո կանխատեսման ու քաղաքականության վերլուծության մոդելային համակարգի եւ որոշումների կայացման գործընթացի շարունակական կատարելագործում եւ զարգացում՝ հետազոտությունների ու վերլուծությունների իրականացման եւ միջազգային լավագույն փորձի ներդրման միջոցով:
2. Հաղորդակցման բարելավում՝ նպատակաուղղված իրականացվող դրամավարկային քաղաքականության բաց, թափանցիկ, հասարակության համար առավել մատչելի մատուցմանը:
3. ՀՀ տնտեսության միկրոհիմքերից բխող ընդհանուր հավասարակշռության կառուցվածքային տիպօրինակի մշակում եւ հետագա ներդրում:
Պետությունն էլ իր ամբողջ դրամավարկային քաղաքականությունը գործնականում իրականացնում է հենց Կենտրոնական բանկի միջոցով, քանի որ վերջինս է պետության կողմից լիազորվածն ու օրենքով նախատեսվածը՝ բոլոր իրավունքներով:
Այս ամենը թույլ կտա իրականացնել առավել ճշգրիտ ու հիմնավոր մակրոտնտեսական կանխատեսումներ ու դրամավարկային քաղաքականության արդյունավետ վերլուծություն, հետեւապես եւ այդ քաղաքականության ավելի բարձր արդյունավետություն:

3. Բանկային գործ, ինչպես նաեւ ՀՀ Կենտրոնական բանկի ընթացիկ նյութերը
4. Ֆինանսական մենեջմենթ, Ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-երի համար
5. Լ. Յ. Բադախյան, «Դրամաշրջանառություն եւ վարկ», Երեւան, 2007թ.

ՀՂՈՒՄՆԵՐ

- 1 2016թ. հունիսի 23-ին Մեծ Բրիտանիայում իրականացվեց Եվրամիությունը լքելու կամ կազմում մնալու հանրաքվե, որի արդյունքում 52% կողմ ձայներով ընտրվեց Եվրամիությունը լքելու տարբերակը: Հանրաքվեին անմիջապես հաջորդեցին կտրուկ տատանումներ ֆինանսական շուկաներում, արդյունքում Մեծ Բրիտանիայի ազգային արժույթը կտրուկ արժեզրկվեց: Մեկ ամիս անց, այնուամենայնիվ, միջազգային ֆինանսական շուկաներում իրավիճակը հանդարտվեց, եւ հիմնական ինդեքսները վերադարձան միլիարդավեկական մակարդակին:
- 2 Տվյալները ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի տեղեկատուներից 2014, 2015, 2016, 2017թթ. հունվարի համար:

Օգտագործված գրականություն

1. Բանկային տեղեկագիր «3» եւ «4», «Լոգո ալունք» ՍՊԸ
2. Տնտեսագիտության տեսություն, հեղինակային կոլեկտիվ՝ Գ. Ե. Կիրակոսյան, Ի. Ե. Խլղաթյան, Վ. Մ. Օրդուխանյան

Гамлет Закарян

Банки: реалии, рассуждения

Автор анализирует историю банковской системы РА, раскрывает основные направления ее деятельности, подчеркивает важную роль банков в деле осуществления их функции на основе закона о центральном банке РА, принятого 24 марта 1993 года. Особое внимание уделяется важной роли экономических функций и банков, подчеркивается актуальность управления государственным долгом на данном этапе.

Hamlet Zakarian

Banks: Realities and Thoughts

The author analyzes the history of the Armenian banking system, revealing the main directions of the Republic's banking activity and highlighting the importance of the exercise of banking functions, based on the Law on the Central Bank of the Republic of Armenia, adopted on March 24, 1993. Particular attention is devoted to the important economic role of banks, emphasizing the urgency of public debt management in the current stage.

Միաբանությունն ինչ ենք անելու



ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երեւանի պետական համալսարանի դասախոս

Յեղիակի խնդրանքով Լույսուբյաբ պահպանված են հողվածի լեզվաճանաչական և մատուցման ձեռի առանձնահատկությունները

Ասենք թե՛ միաբանվանք: Միաբանվանք, դարձանք մեր կառավարության ասած ազգ-բանակը ու շարք կանգնանք, մի հատ էլ գերազնիվ ու գերխելոք ֆյուրեր ճարինք (ես ապրանքից ոչ թե մենակ Հայաստանը չունի, այլե՛ս էս ողջ աշխարհը, բայց մի ըստե համարենք, թե ճարինք): Հետո էլ էսօրվա իշխանավորներին քշինք ու դատինք ու իրանց ունեցվածքն էլ խլինք:

ԱՍԵՔ, ԽՆԴՐԵՄ, ՀԵՏՈ ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ:

Շարք-շարք հարձակվելու ենք Ադրբեջանի, Թուրքիայի ու Հինաստանի վրա ու ջնջելու ենք դրանց, որ ծովից-ծովը սարքենք:

ԶՎԱՐՃԱԼԻ ԱՆԵԿԿՈՏՆ ՈՒ ՈՐԲԱԼԻ ԻՐՐՈՒԹՅՈՒՆԸ

Սովետի օրերին Կենտրոնական կոմիտեից (Կենտկոմից) մի պատվիրակություն ա գնում Անգլիա ու երբ հետ ա գալի, ոնց որ էն օրերի կարգն էր, Կենտկոմում հաշվետվություն ա տալի իրա տեսած-չտեսածի մասին:

Պատմողը համ էլ ասում ա, թե «Էդ փթած կապիտալիստների երթելեկությունը ձախակողմյան ա ու ավելացնում ա, թե դրանք երեւի մի բան գիտեն, որ ձախ կողմով են երթելեկում, ուրեմն, լավ կըլնի, որ Սովետն էլ անցնի ձախակողմյան երթելեկության»:

Կենտկոմի ներկա անդամներից մեկը տեղից վռազ ասում ա.

- Ընկերներ, էս հարցում չի կարելի շտապողականություն ցուցաբերել: Էկեք փորձի համար հլը վաղը Մոսկվայի 4-րդ գոուզավոյ պարկը բաց թողանք ձախակողմյան երթելեկության ու տեսանք, թե ինչ ա ստացվում, նոր որոշենք:

Մեր ռեֆորմները, հա է՛լ, ա՛յ էս կարգի են, ու սրա ամենափայլուն օրինակը մեր դպրոցական ու բուհական կրթության ռեֆորմներն են: Էս ոլորտի մեր ռեֆորմներով արդեն համարյա լրիվ ենք քանդուքարափ արե մեր կրթական համակարգը: Ու մեր բոլո՛ր ռեֆորմներն էս տեսակ են՝ առանց բացառության:

Երեւի Հայաստանի ոչ մի հասուն քաղաքացի չճարվի, ով գոնե մի քիչ հավատա, թե էս «ազգ-բանակային» ռեֆորմը անպայման խոշոր վնաս չի տա մեր ռազմական առանց էն էլ ողբալի ու անբարո համակարգին ու ավելի շատ չի այլասերի էդ համակարգը:

Ու քանի հյը մեր երկրի հասարակարգն անբարո ա, մեզ ոչ մի ազգ-բանակ էլ չի փրկի, ոչ շվեյցարականը, ոչ իսրայելականը ու ոչ էլ մի այլմուրակայինը:

Կարդացեք ու ինքներդ որոշեք՝ ճիշտ են ասում, թե՛ չէ:

1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ

«Եթե հանկարծ մարդկանց մեծ մասն ինչ-որ մի սխալ եզրակացություն ա անում, ապա համարյա անհնար ա, որ էդ եզրակացության սխալականությունը ապացուցվի: Ու ինչքան ավելի անհեթեթ լինի էդ եզրակացությունը, մարդիկ էնքան ավելի հավատարիմ են մնում դրան»:

ԳԵՈՐԳ ԿԱՆՏՈՐ

Միաբանվելու-չմիաբանվելու հարցը անպայման կապված ա հետեւյալ երեք դրույթին (ինչը կերեւա հետագա շարադրանքից):

Մեր եսօրվա ողջ քաղաքակրթությունը, **քիչ թե շատ**, հիմնված ա հետեւյալ երեք բարոյական նորմի վրա.

1. Մասնավոր սեփականության ու սրա անձեռնմխելիության նորմը:

2. Ուրիշների հետ տիրոջ ուզած ձեւով իր մասնավոր սեփականությունը պարտադիր գործող պայմանով տնօրինելու նորմը: Այսինքն՝ հանրության անդամների (մարդկանց) հարաբերությունները պարտադիր գործող ու անփոփոխ պայմանով (անփոփոխ ու պարտադիր գործող օրենքով ու ոչ թե մահակով կամ թնդանոթով) վարելու նորմը:

Ըստ էության, սա խոստումը չդրժելու նորմն ա:

3. Ազատ մրցության, այսինքն՝ ի վերջո, օրենքի առաջ բոլորի հավասարության նորմն ա, սոցիալական արդարություն հաստատելու ու նյութական ու հոգեւոր բարիքներն արդար բաշխելու միակ ու անհատից կամ անհատների կազմակերպված խմբից անկախ միջոցը, ու համ էլ նոր տեխնոլոգիա ու առհասարակ՝ նոր բան հայտնագործելու ամենաբեղուն միջոցը:

Էս նորմերն առաջին անգամ հստակ ձեւակերպել ա անգլիացի բարոյագետ, տնտեսագետ, պատմաբան ու փիլիսոփա Դեւիդ Յյունը, 18-րդ դարի ա՛յն հռչակավոր գիտնականը, ում հետագոտությունները պատճառականության սկզբունքի վերաբերյալ՝ չափազանց բարձր ա գնահատել Ալբերտ Էյնշտեյնը:

Մասնավոր սեփականություն ասելով՝ պիտի հասկանանք ոչ միայն նյութական արժեքները, այլեւ մարդու կյանքը, առողջությունը, արժանապատվությունը, խիղճը, գաղափարները, կարծիքներն ու սրանք արտահայտելու ազատությունը, կենցաղն ու սա կազմակերպելու ձեւերը, ու առհասարակ՝ մարդու իրավունք ու ազատություն կոչվածները լրիվ, այսինքն՝ են ամե՛նը, ինչը կարա ծախվի կամ հանձնվի ուրիշին, կամ ինչից մարդուն կարան զրկեն իրա կամքին հակառակ:

Էս մի բանի տողը, ըստ էության, լիբերալ-լիբերոթար ուսմունքի ու դեմոկրատական կարգի, կամ ավելի ճիշտ, բարոյակարգի տեսական աքսիոմներն ու այդ կարգը կառուցելու չափազանց կարճ ուրվագիծն են:

Ում էլ հարցնես ասես, թե, «ա՛յ, էս վերելի մի քանի տողը հենց թու կամ մեր բոլորի ուզած չի», կասի՝ «իհարկե, մեր ուզածն էլ հենց էդ բաներն են»: Բայց ախր լիբերալ-լիբերոթար կոչվածները հենց էդ մի քանի տողի ասածներն են ու-

զում, ու գիտական մեթոդներով ասում են, թե դրանց ո՞նց են հասնում, այսինքն՝ ո՞նց են հասարակական կարգը դարձնում **բարոյակարգ**:

Սրան հակառակ, էս ողջ աշխարհով մեկ լիբերալիզմ-լիբերթարիզմը վարկաբեկել ու վարկաբեկում են՝ ասելով, թե «լիբերալիզմ-լիբերթարիզմը պարտված ա», իհարկե, առանց ասելու, որ լիբերալիզմ-լիբերթարիզմի ուզածը հենց մեր ուզածն ա, հենց մեր երազանքն ա:

Ու մարդիկ մոռանում են, որ արդարությունն է՛լ ա էս ողջ աշխարհում պարտված, բայց սա հո չի՛ նշանակում, թե արդարությունը սխալ բան ա, կամ թե որ մենք չպիտի ձգտենք արդարության, որովհետեւ հենց որ հետեւենք է՛ս «տրամաբանությանը», պիտի ստիպված ձգտենք անարդարության ու կործանենք մեր էս ողջ քաղաքակրթությունը:

Ու մարդիկ, ողջ աշխարհով մեկ (իսկ Հայաստանում՝ մանավանդ), ոչ միայն չեն հավատում ու չեն հետեւում լիբերալիստ-լիբերթարիստների ասածներին, այլեւ չեն է՛լ ծանոթանում սրանց ու չեն քննարկում սրանք:

Ավելի հեշտ ա՝ հավատան հայագովների ու քաղաքօրիջների շատ սիրած լոզունգներից մի քանիսին, մանավանդ եթե դրանք պարզ են, մտաչելի, հասարակ ու ճշմարտաման ու, իհարկե, համ էլ «հայրենասիրական»:

Էդ լոզունգներից մեկն էլ հենց հայտնի ու գովաբանած **ազգային միաբանության ու ազգային նոր գաղափարախոսության հրատապ անհրաժեշտության լոզունգն ա, իսկ վերջերս է՛լ՝ ազգ-բանակ դառնալու անհրաժեշտության լոզունգը**, ու էս անհրաժեշտությունն ակնհայտ ա թվում համարյա բոլորին:

Ընդ որում, ո՛չ միայն հայերին, այլեւ ամենքին ու համարյա ամբողջ աշխարհում: Բայց եթե ուրիշ (ու մանավանդ՝ մեծաթիվ) ժողովուրդներին էս ու սրա պես լոզունգներն էնքան էլ չեն խանգարում

(կամ առայժմ չեն խանգարում), փոքրաթիվների համար հաճախ նույնիսկ կործանարար են:

2. ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՏԵՂԻՑ ԵՆ ՃԱՐՈՒՄ

«ՃԱՆՃԸ.- Բա էսի կյանք ա: Ա՛յ, պատերազմի վախտը, էրեխեք, էս ինչքան սիրուն դիակ կա՛ր»:

ԿԱՐԵԼ ՉԱՊԵԿ

Հանրության կյանքի, մանավանդ քաղաքական կառուցվածքի, ուրեմն, համ էլ կենսաձեւի կտրուկ փոփոխությունների շրջանում շատ կլեստ, թե «ազգային նոր գաղափարախոսության» անհետաձգելի կարիք կա: Ու սա բնական ա: Նման կտրուկ փոփոխությունների ժամանակ առաջին հերթին դեն են շարտում հին գաղափարախոսությունը:

Պարզ ա, որ նորի կարիքն իրոք հրատապ ա: Բայց նոր գաղափարախոսությունը որտեղի՞ց ճարենք, ումի՞ց վերցնենք:

Ու հազար ափսոս, որ չհաշված հատուկե՛տս դեպքերը, նոր գաղափարախոսություն փնտրելիս, մարդիկ նայում են անցյալին, նայում են պատմությանը:

Հնարավոր ա, որ դա ըլի՛ս սեփական պատմությունը, բայց եթե էդ պատմության մոտիկ անցյալում հարկ եղած սրա ոչ մի օրինակը չկա, դիմում են հեռավոր անցյալին, դիմում են իրենց «արմատներին»:

Հեռավոր անցյալն էլ (այսինքն՝ էս «արմատները»), եթե չհաշվենք հույների ու հռոմեացիների անցյալը, ոչ մի ժողովուրդ էլ լավ չգիտի: Ու էս անգամ միակ ելքը ուրիշ ժողովուրդների մոտիկ (մեկ-մեկ էլ՝ հեռու) անցյալին դիմելն ա:

Մոտ անցյալի ամենափայլուն «ազգային գաղափարախոսության» օրինակը, իհարկե, գերմանացիներին ա: Բայց էս օրինակը ամենաողբերգականն ու ամենախայտառակն ա:

Գերմանացիների էդ օրինակն էնքան ա խայտառակ, որ համարյա ոչ մեկը, եթե նույնիսկ հոգու խորքում պաշտում ա Mein Kampf-ը (Հիտլերի գիրքը), ռիսկ չունի ասելու, որ «ազգային գաղափարախոսության» հիմքը սրա պես մի բան պիտի ըլնի:

Ոչ մեկը սա ռիսկ չունի ասելու համ էլ է՛ն բանի համար, որ ողբերգականից ու խայտառակից բացի, սա գերմանական ա, այսինքն՝ «մեր ազգայինը» չի: Ուրեմն՝ պիտի սրա մի որեւէ տեսակն ստեղծվի, պիտի սա տեղայնացվի: (Էդ ռիսկը չունե՛ր նույնիսկ հենց ինքը՝ Նժդեհը, ում գաղափարախոսության ակունքը Հիտլերի կամ գերմանական Նացիզմի հիմնադիրների գաղափարներն են):

Ի՛նչը կտեղայնացվի, կվերածելվի՝ ասածս գիրքը, կամ Պլատոնի, Ֆիխտեի, Նիցշեի ու սրանց պես ուրիշ որեւէ մեկի «գաղափարները», կամ էլ սրանց մի որեւէ սինթեզը, կարելոր չի:

Երբ էս սինթեզն իրականանում ա, սա հասարակության «առաջավոր» կամ «հեղինակավոր» անդամների մտքի ճգնաժամի նշանն ա:

Բայց էլի հազար պիտոս, որ հեղափոխությունները միշտ չի, որ հասարակության վիճակը բարելավում են: Սրա համար հերիք ա, որ հիշենք միայն Ռուսաստանի 17 թվի, Գերմանիայի 30-40-ական թվերի կամ Չինաստանի, Կուբայի, Հյուսիսային Կորեայի ու Կամբոջայի հեղափոխությունների ուղղակի մարդակերական սարսափելի անցքերը:

3. «ՄԻԱԲԱՆՈՂ» ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՈՉԽԱՐԸ.- Թո մորթեն, մենակ թե առաջնորդեն»:

ԿԱՐԵԼ ՉԱՊԵԿ

«Միաբանող» գաղափարախոսությունը տոտալիտար՝ ա, բռնակալական ա, ամենատիրական ա: Սա լրի՛վ հակա-

ռակ ա անհատական ազատությանը, լիբերալ բարոյակարգին, ինչն ամենակարեւորը համարում ա մտածելու, խոսելու, կարծիք հայտնելու, ուրիշներին մենակ ու մենակ համոզելու, տեղեկություն ստանալու ու խղճի ու հավատի ազատությունը ու, իհարկե, տնտեսական ու քաղաքական գործունեության ազատությունը:

Լիբերալիզմ-լիբերթարիզմը համարում ա, որ միակ ճշմարիտ կանոնը՝ Ոսկե կանոնն ա, որն ասում ա.

«Ուրիշին մի արա է՛ն բանը, ինչը չես ուզում, որ էդ ուրիշը քեզ անի»:

Սա, էս կանոնը դեմ ա հասարակության միաբանության գաղափարախոսությանը, որովհետեւ սրան հետեւողն արդեն չի կարա միաբան ըլնի բոլորին, որովհետեւ պիտի ենթարկվի միաբանող գաղափարախոսությանն ու էդ գաղափարախոսության առաջնորդներին՝ մեծ ըլնեն դրանք, թե փոքր:

Իսկ լիբերալ-լիբերթար բարոյակարգի ժամանակ հասարակության ամեն մի անդամն իրավունք ունի ու ազատ ա իր ՍԵՓԱԿԱՆ գաղափարախոսությունն ունենալու, եթե, իհարկե, էդ գաղափարախոսությունը չի սահմանափակում կամ վերացնում ուրիշների ազատությունը:

Ուրեմն, բարոյակարգի ժամանակ մի հատիկ գաղափարախոսության փոխարեն ունենք էնքան գաղափարախոսություն, ինչքան հասարակությունն անդամ ունի, **ու չի բացառվում, որ դրանց մեջ լավերն էլ ըլնեն:**

Էս կարգի ժամանակ բռնակալն արդեն պարտադիր գործող ու էդ ազատությունները (ուրիշներն էլ) պաշտպանող է՛ն օրենքն ա, ինչի առաջ բռնություն են հավասար (նույնիսկ պատգամավորները, օլիգարխների զավակները, պրեզիդենտներն ու ավտոտեսուչները):

Էս կարգն ամենից առաջ մտավոր անհատականության կամ, եթե կուզեք, մտավոր «անիշխանության», «մտավոր անարխիայի» կարգ ա, է՛ն իմաստով, որ

ամեն մի մարդ էլ իրավունք ունի ի՛ր իսկ գաղափարախոսությունն ունենալու, եթե սրանով ուրիշներին չի վնասում, այսինքն՝ էս անարխիան անարխիա ա մեկնակ ու մեկնակ օրենքի շրջանակներում:

Սա համ էլ ինտելեկտուալ ազնվության կարգ ա:

Ավելի ճիշտ, սա ուրիշին հանդուրժելու՛ կարգ ա, ուրիշի սեփական կարծիքը, ճաշակը, հոգս ու մտածուկքը, կենցաղն ու սովորությունն ունենալու իրավունքն ու ազատությունը հանդուրժելու՛ կարգ ա:

Լսմվ ա սա, թե՛ վատ, մի քիչ հետո կտեսնենք:

Իսկ «միաբանող» գաղափարախոսությունը պարտադիր ա հասարակության բոլոր անդամների համար: Բայց ախր հա՛րց ա, թե՛ ռւր կտանի էս գաղափարախոսությունը՝ կկործանի՞ հասարակությունը, թե՛ վիճակը կլավացնի:

Չգիտեմք, որովհետեւ ապագան անհայտ ա:

Ենթադրենք, թե հասարակության համարյա բոլոր անդամները կողմ են ու հավատում են էս մի հատիկ գաղափարախոսությանը: Սրանից հետեւում ա, որ սա ճիշտ ա ու օգտակար:

ՉԷ՛, իհարկե: Նույն բանն ասելուց մազաչափ անգամ չի հետեւում, որ էս ասած բանը ճիշտ ա, եթե աշխարհի նույնիսկ բոլոր մարդիկ էլ միաբերան սա՛ ասեն, ու սրա համար լիքը փաստ ունենք:

Օրինակ՝ մարդկությունը, համարյա լրիվ, մի բանի հազար տարի հավատացել ա, որ Երկիրը տափակ ա, կլոր չի: Կամ էլ, որ Արե՛նն ա պտտվում Երկրի շուրջը: Փորձը ցույց տվեց, որ, օրինակ, ճիշտ ա հենց է՛ն մի հատիկ մարդը՝ Կոպեռնիկոս անունով, ով լրի՛վ հակառակ կարծիքն ուներ:

Ու թե որ էս կարգի կոպեռնիկոսների բերանը փակես, հնարավոր ա, որ ճշմարտությունը երբեք չիմանաս,

ու հնարավոր ա, որ կործանվես, ոչնչանաս, վերանաս է՛լ: Իսկ էս կարգի մարդիկ, այսինքն՝ հասարակությանը «հակառակ» գնացող մարդիկ, ամենաթանկն են ու ամենաազատասերը:

Սերվանտեսի Դոն-Քիշոտն ասում ա. «Էս արեւի տակ ազատությունից թանկ բան չկա, Սանչո՛», ու Դոն-Քիշոտը հազար անգամ ճիշտ ա:

Խոսքը ոչ թե անսահմանափակ ազատության կամ օրենքը խախտող անարխիայի մասին ա, այլ ամեն մեկի, ամեն անհատի է՛ն ազատության մասին, ինչը չի սահմանափակում ուրիշի ազատությունը: Այսինքն՝ խոսքն է՛ն ազատությունից ա, **ինչը չի խախտում բոլորին հավասար նայող բռնակալ ու անպայման գործող օրենքի սահմանները:**

Հասարակության անդամը էրբ կամ ի՛նչ իմաստով պիտի ազատ ըլնի: **Հասարակության անդամը պիտի պարտադիր ազատ ըլնի թե՛ պետության, թե՛ ուրիշ մի անհատի կամ անհատների խմբի ԱՆՕՐԻՆԱԿԱՆ հարկադրանքից, է՛ն հարկադրանքից, ինչը սահմանված չի էդ հասարակության ընդունած սահմանադրությամբ ու դրանից բխող հաստատված օրենքներից:**

Բայց էդ սահմանադրությունը ու դրան հենված օրենքները պիտի անպայման բարոյական ըլնեն, որ հասարակության ամեն մի անդամի համար ապահովեն ԱՆՆԱՓԱՆ ԳՈՐԾՈՂ օրենքով պաշտպանվող ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ազատությունը: Այսինքն՝ երկրի հասարակական կարգը պիտի **բարոյակարգ** ըլնի:

Էս կարգի ազատությունը, այսինքն՝ ամեն մի անհատի ազատությունը (տե՛ս «Մարդու իրավունքների ու ազատությունների հռչակագիրը») ողջ մարդկության միակ ու գերագույն նպատակն ա, ու ողջ մարդկության դարավոր երազանքը:

Մնացած ամեն ինչը, որ հակասում ա սրան, միշտ բերել ա արյուն, բռնություն,

ճորտությունն ու ամեն տեսակ սարսափ, իսկ եթե էսպես գնա, ու լիբերալ-լիբերոթար ծրագիրը չհաստատվի աշխարհով մեկ, «միաբանող գաղափարախոսությունները» անպայման մեր էսօրվա ողջ քաղաքակրթությունը կործանելու են:

4. «ՄԻԱԲԱՆՈՂ» ՈՒ ԶԿՈՐԾԱՆՈՂ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿԱՐ

«ՈՐԴԸ.- Ասում ես, Արծժիվն ա ճիշտ: Վարյանտ չկա: Ծշմարտությունը միակն ա՝ որդային ճշմարտությունը»:

ԿԱՐԵԼ ԶԱՊԵԿ

Ինչ երաշխիք կա, որ ես ազատությունները Չսահմանափակող կամ Զվերացնող գոնե մի հատ «միաբանող» գաղափարախոսություն կա: Ո՞վ ա ապացուցել կամ ո՞վ կապացուցի սա:

Ո՛չ մեկը:

Մերկապարանոց հայտարարությունը կամ շատախոսությունը, կամ էլ նման ուրիշ բաներն ապացույց չեն: Ո՞վ զորություն ունի ապագան գուշակելու: 1980 թվին ո՞վ գիտեր, թե էսօր ինչ վիճակ կըլնի:

Ո՛չ մեկը:

Երեւի ինձ ասող ըլնի, որ ես դեմ եմ միաբանությանը:

Իհարկե, ԴԵՄ ԵՄ, եթե «միաբանություն» ասելով՝ հասկանում են մեն-մի հատիկ գաղափարախոսություն, որի գլխավոր հրամանատարը մի Նժդեհ ա կամ մի պրեզիդենտ, կամ մի նախարար, կամ մի գեներալ՝ իր ընկեր-բարեկամների շքախմբով, կամ էլ նույնիսկ մեկ կամ մի քանի կուսակցություն, ու ես էլ, անկախ իմ գիտելիքների, իմ կարողությունների, իմ վաստակի ու արժանիքների չափից, պիտի սուսուփուս ենթարկվեմ դրանց:

Չանուն ինչի՞ պիտի ենթարկվեմ, թե որ հաստատ գիտեմ, որ ապագան գուշակելու կարողություն չունի ո՛չ մի նույնիսկ հանճարեղ մարդ ու գաղա-

փարախոսություն, ինչքան էլ դա «ազգային» ըլնի:

Բա որ հանկարծ եղ գեներալը կամ նախագահը, կամ էլ՝ կուսակցությունը ժողովրդի ասած՝ «սարսաղի մեկը եղամվ» կամ էլ արևախում ու տականքի մեկը:

Մինչեւ հիմա ոչ մի գաղափարախոսության ղեկավար Սուրնի կամ Պերիկլեսի կամ Լյուդվիգ Էրհարդի կամ Մարգարետ Թաչերի պես գիտուն, ազնիվ ու սկզբունքային չի եղե, իսկ մեր ողջ քաղաքակրթության պատմությունը, սրանցից բացի, երեւի ուրիշ ես տեսակ օրինակ չունի:

Ինչ երաշխիք կա, որ ներկայի կամ ապագայի «գաղափարախոս գեներալները» գիտուն, ազնիվ, սկզբունքային ու քաջ մարդիկ կըլնեն:

Ոչ մի երաշխիք չկա:

Ու թե որ ըլնեն էլ, հո հավերժ չեն ապրելու:

Ինչ երաշխիք, որ դրանց փոխանորդները կունենան նույն հատկությունները: Սա՛ մեկ:

Շատ կարեւոր ա, որ արդեն **Է՛ն փաստը, որ տվյալ մարդը «գաղափարախոսության գեներալ» ա, ցույց ա տալիս, որ եղ մարդը չգիտի, որ ապագան գուշակելի չի, որ «պատմության օրենքները» մեզ հայտնի չեն. չգիտի, որ էսօր նույնիսկ չգիտենք, թե պատմությունն օրենքներ ունի:**

(Կամ էլ՝ գիտի, բայց խաբում ա իրեն հավատացողներին):

Ֆիզիկայի, քիմիայի կամ կենսաբանության օրենքներին մենք հավատում ենք, որովհետեւ ի վիճակի ենք ամեն վայրկյան ու ամեն տեղ ստուգելու, որ սրանք ճիշտ են:

(Ի միջի այլոց, բնագետները լավ գիտեն, որ իրենց օրենքները սոսկ ենթադրություն են, բայց Է՛ն տեսակ ենթադրություն, ինչը միշտ ստուգելու հնարավորություն կա: Ես իմաստով՝ կամ գոնե մի հատիկ «պատմական օրենք», որը

կարող ըլնենք ստուգելու: Թե կա, թող իմացողը ցույց տա ու հետն էլ ասի ստուգելու ձեւը):

5. «ՄԻԱԲԱՆՈՂ» ԳԱՂԱՓԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

«Կատոն ավագը.- Ի՞նչ: Ասում եք՝ սո՛վ ա, աղքատությունն ա, բերք չկա՛մ: Դրանք ողջ հե՛ջ: Նախ՝ պտի Կարթագենը կործանենք»:

ԿԱՐԵԼ ՉԱՊԵԿ

Տոտալիտար միաբանող կարգի ժամանակ մի հատիկ ու բոլորի համար հավասար բռնակալ օրենքը կտոր-կտոր ա ըլնում, բաժանվում ա հասարակության բոլոր-բոլոր պաշտոնավորներին՝ գերագույն առաջնորդ հրամանատարին, սրա տեղակալներին, սրա տեղակալների տեղակալներին եւ այլն:

Ու արդեն արդար ու պարտադիր գործող մեկ հատ օրինախմբի տեղը ունենում ենք ճիշտ Էնթան հատիկ օրինախումբ, քանի հատ որ պետությունը պաշտոնավոր ու «ավտարիտետ» ունի:

Ու էս առանձին օրենքների գործելու ձեւն արդեն կախված ա պաշտոնավորների ու էս «ավտարիտետների» անձնական հատկություններից, սրանց բնավորությունից, ազնվությունից, սկզբունքայնությունից եւ այլն:

Բանակում, օրինակ, ունենում ենք ճիշտ Էնթան հատ օրենք, ինչքան որ սպա ու «խառնոչ» («դեղ, ասիջ» եւն) կա էդ բանակում:

Ոստիկանությունում ունենում ենք ճիշտ Էնթան հատ օրենք, ինչքան ոստիկան կա, ու քանի հատ էլ «թաղի տղա» ու «ավտարիտետ» կա («խառնոչին», «ավտարիտետն» ու «թաղի տղան» էլ են պաշտոն, ընդ որում՝ ահագին շահութաբեր):

Մարդիկ տարբեր են ու սրա համար էս «անհատական» օրենքներն էլ են տարբեր ըլնում: Ու էս անգամ արդեն ոչ մի

միաբանությունն հնարավոր չի, որովհետեւ ամեն պաշտոնավոր (այսինքն՝ օրենսդիր ու միաժամանակ դատավոր) «սղոցն իր կողմն ա քաշելու»:

Պաշտոնից զուրկ ամեն մի մարդ դառնալու ա պաշտոնավորների ճորտն ու ստրուկը: Բանակում, օրինակ, շարքային զինվորը դառնալու ա սպաների, «խառնոչների» ու «դեմբելների» ճորտն ու ստրուկը (մեր բանակում, իրոք, անհատական ստրուկների «խնստիտուտը» կա, տե՛ս ստորեւ «նախկին զինվոր Ստեփան Աբրահամյանի պատմածը...»), ծեծուջարդ ա ուտելու, տանջվելու ա, բռնաբարվելու ու հասնելու ա ինքնասպանության:

Թե որ մի հայր իր ընտանիքի անդամներին ու զավակներին Էնպես պահի, ոնց որ էդ տեսակ պետությունն ա պահում իր ժողովրդին (այսինքն՝ հայրը հարազատ զավակներին ծեծի, ջարդի, ստորացնի, բռնաբարի, ու սրանք ոչ մեկից պաշտպանություն ստանալու ճար չունենան), ո՞վ չի ասի, որ էդ հայրը տականք ա, ինչքան էլ էդ «հայրը» պնդի, թե էդ ամենն անում ա՝ «հանուն միաբանության, հանուն ընտանիքի լուսավոր ապագայի»:

Հայրենիքը սոսկ բառ չի, սոսկ վերացական հասկացություն չի: Չկա՛ հենց Էնպես «հայրենիք»: Հայրենիքը ե՛ս եմ, դո՛ւ ես, Սերոժն ա, Սարգիսն ա, Պողո՛սն ա, Զավոր Պետրո՛սն ա, համարյա ամե՛նքըս, հատիկ-հատիկ վեկալած, այսինքն՝ մեր մեծագույն մասն ա հայրենիքը:

Ուրեմն՝ հայրենիքի վիճակը մեր ամեն մեկի վիճակների խումբն ա՝ հատիկ-հատիկ գումարած:

Ու եթե էս առանձին գումարելիների մեծագույն մասի վիճակը ողբալի ու ստոր ու հուսահատական ա, ուրեմն, հայրենիքի վիճակն է՛լ ա ողբալի ու ստոր ու հուսահատական: Ու եթե ժողովրդի մեծագույն մասը ճորտ ա ու ստրուկ ու թշվառ ու ողորմելի, ուրեմն, հայրե-

Նիքն Է՛լ ա ճորտ ու ստրուկ ու թշվառ ու ողորմելի:

Ու ոչ մի «միաբանող ազգային գաղափարախոսություն» չի կարա ես «հայրենիք» կոչվածն էդ վիճակից հանի, որովհետեւ ես վիճակից ազատվելու միակ ճարը «չմիաբանող» գաղափարախոսությունն ա մենակ:

Սա, ես «փառաբանված միաբանող գաղափարախոսությունը», շատ-շատ, կարա հլու հնազանդ ու պասիվ հասարակական հոտը փոխարինի հլու հնազանդ ու ճորտերի հասարակական հոտով, ով որ հլու հնազանդ կենթարկվի իր գեներալներին ու հարեւան երկրներին էլ կկոտորի, թե որ ուժը պատեց:

Ես ասվածը, իմ կարծիքով, անվիճելի ա, բայց իրենց «հայրենասեր» կամ «հայրենասեր-դեմոկրատ» հռչակող բոլոր անսկզբունքային քաղաքործիչներն անպայման «միաբանող ազգային գաղափարախոսություն» են պահանջում կամ հռչակում:

Սրանցից ոմանք գուցե անկեղծ հավատում են, որ լավ բան են ուզում, բայց սրանք ուղղակի մոլորված են՝ իրենց, մեղմ ասած, «թերի գիտելիքների» պատճառով:

6. «ՄԻԱԲԱՆՈՂ» ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ Ո՛ՒՄ Ա ԶԵՆՆՈՒ

«ՅԻՎԼՈՆԸ.– 3իսուն քաղաք ա բանդութարաւի էղէ: Բա էսի շմելու հաղթանակ չի՞»:

ԿԱՐԵԼ ԶԱՊԵԿ

Քաղաքործիչը, համարյա առանց բացառության, սկզբունքներից ու բարոյականությունից ու շատ անգամ էլ (ավելի ճիշտ՝ համարյա միշտ) հիմնավոր գիտելիքից զուրկ ա, իսկ սկզբունքներից, բարոյականությունից ու ֆունդամենտալ գիտելիքից զուրկ քաղաքործչին «միաբանող ազգային գաղափարախոսությունը» չափազանց ա ձեռնտու: Խի՛:

«Միաբանող ազգային գաղափարախոսությունը» անսկզբունքային ու անբարո քաղաքործչին խի՛ստ ձեռնտու ա Է՛ն պատճառով, որ ես գաղափարախոսությունը հնար ա տալի ես գործչին, որ սա դեմոկրատական կարգ ու օրենքն իր ուզածի պես խախտի ու ոտնակոխանի, երբ ու որտեղ ուզենա, ու համ էլ գիտունի տպավորություն թողնի:

«Միաբանող գաղափարախոսությունը» թույլ ա տալիս, որ քաղաքործիչը խաբի, խարդախություն անի, ամեն տեսակ ստորություն, զբաղվի կավատությամբ ու պոռնկանոց պահի, զբաղվի նարկոբիզնեսով, տեռորիզմով, իր իսկ երկրի անմեղ քաղաքացիներին ճնշի, թալաւնի, բանտարկի, բռնաբարի ու նույնիսկ սպանի, որովհետեւ ես քաղաքործչին արդարանալու միջոց ունի, որովհետեւ միշտ է՛լ հնար ունի ասելու.

- Նախ՝ անտառը կտրես, տաշեղներն անպայման կորելու են: Երկրորդ՝ ես ես ձեռով «աշխատածս» փողերով հայրենիքի լուսավոր ապագան եմ կերտում, չէն տենում, որ, օրինակ, մեր դարավոր թշնամիների ու մեկ էլ տեռորիստների հե՛րն եմ անիծում: Իսկ հետո էլ, հենց որ ես ձեւ, այսինքն՝ առանց միջոցների խտրության, հարկավոր գումարն «աշխատեմ», ադրբեջանցիների, թուրքերի, իրաքցիների, նենեցների ու չուկչիների հերը լրիվ անիծեմ, ա՛յ, էդ վախտը քու համար «ծովից-ծովը» կստեղծեմ: Ընենց որ, հլը ձեւ մի հանի, ու մի քիչ, մի քանի դար էլ դիմացի՛ քու ես անասնական վիճակին, ու համ էլ ընձի բան մի ասա, ու թող որ կուշտ ուտեմ, մինչեւ հարկավոր գումարը «աշխատեմ» պրծնեմ:

Ու ճիշտը որ ասենք, **«միաբանող» ցանկացած գաղափարախոսության նպատակն ու եռությունը էդ գաղափարախոսության գեներալների «կուշտ ուտելն ա»:**

Մնացածը՝ քողարկություն ա, քողարկություն՝ ստի, խարդախության ու խաբեության ծխի շղարշով:

Չարմանալի ա, բայց մարդիկ ոնց որ կույր ու խուլ ու տարրական տրամաբանությունից զուրկ ըլնեն, որովհետեւ շատ-շատ անգամ (եթե ոչ միշտ) ուղղակի չեն նկատում, չեն տեսնում, որ «միաբանող», տոտալիտար (բոլորի համար պարտադիր ու բոլորի համար միատեսակ) պահանջներն անհեթեթ են ու անիմաստ:

Սրա բնորոշ օրինակն ա «ԱԶԳԻ ՈՒ ՄԱՆԱԿԱՆԴ «ՄԱՔՈՒՐ ԱԶԳԻ» ՈՒ «ՄԱՔՈՒՐ ՈՒ ԱՆԱՂԱՐՏ ՀԱՅԵՐԵՆՈՎ ԽՈՍՈՂ ՈՒ ՄԻԱԿԵՐՊ ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱԲ ԳՐՈՂ ԱԶԳԻ» գաղափարը, ինչը «հայրենասերների» սիրած թեման ա:

Զխոսենք էն բանից, որ մինչեւ էսօր ոչ մեկը ի վիճակի չի եղել ասելու, թե ի՞նչ ա «ազգ» ասածը (ինքնին ենթադրվում ա, որ սա հայտնի ա բոլորին), բայց մի փոքր ավելի լուրջ քննությունը ցույց ա տալիս, որ էս «գաղափարը» ուղղակի զառանցանք ա: Մի օրինակ բերեմ:

7. ՀԱՅՑ ԱՄՐՐԴ Ա, ԹԾ ԶԷ

«ԼՈՒԹԿԻՆ.- Տեսեք հիւր: Ես անշեջ կրակն եմ»:

ԿԱՐԵԼ ՉԱՊԵԿ

Վերջերս «հայրենասերներից» հաճախ կլսես. «Եկեք բոլորս հայեցի մտածենք, որ հայ մանւք» են:

Ես «չքնաղ» ու «հայերնաշունչ» կարգախոսն ուղղակի հակասական ա:

Իրոք, թե որ «հայեցի» մտածելը մեր էսօրվա հայերի մեծ մասի մտածողության ձեւն ա (թե սա ի՞նչ բան ա, չգիտեմ, որովհետեւ ինչքան մարդ կա, էնքան էլ մտածելու ձեւ կա, բայց մի թույլ ենթադրենք, որ բնագետների իմացած միջինի հասկացությունը էստեղ էլ ա անցնում), եղժամ սա շատ վատ ձեւ ա, **որովհետեւ հենց էս «հայեցի» մտածելով ենք հասել մեր էս թշվառ ու ողորմելի վիճակին:**

Ու թե պիտի էսօրվա հայի պես հայ մանւք, թե պիտի մանւք էսօրվա պես թշվառ ու ողորմելի, բայց «մանւք հայ», էս անգամը էս չեմ ուզում հայ մամ, ուզում եմ դառնամ մարդ ու մարդավարի ապրեմ:

Մյուս կողմից, թե որ համարենք, թե «հայեցի» մտածելու ձեւը ոչ թե սովորական, այսինքն՝ **մարդավարի մտածելու ձեւ ա**, այլ մի լրիվ ուրիշ բան ա, կհասնենք մի արտառոց եզրակացության.

Զանի որ մարդկության մեջ հայեցի մտածելու ձեւը միայն հայերն ունեն՝ կնշանակի հայերը մարդ չեն, այլ մարդուց տարբեր մի բան են:

Սա ինձ հեջ դուր չի գալի: **«Հայեցի մտածելու»** տեղը ավելի լավ ա **մարդավարի՝ մտածեմ ու վարվեմ:** Ու զարմանալին է՛ն հանգամանքն ա, որ երբ սա ինձ հաջողվում ա, էս է՛լ եմ շատ գոհ ըլնում, շրջապատս է՛լ:

Բացի սա, շատ եմ ուզում, որ կարողանամ գոնե մի քիչ «անգլիացի» մտածեմ ու վարվեմ, օրինակ՝ Նյուտոնի, Միլթոնի, Լոկի, Յոյսի, Ադամ Սմիթի, Ալեքսիս դը Թոքվիլի ու Լորդ Աբտոնի պես:

Մի քիչ էլ «ավստրացի» մտածեմ ու վարվեմ Կառլ Մենգերի, Լյուդվիգ Միգետի, Ֆրիդրիխ Ավգուստ Հայեկի ու սրանց ընդեր ու հետեւորդների պես:

Մի քիչ «ֆրանսիացի» մտածեմ ու վարվեմ Ռոմեն Ռոլանի, Պիեր Կյուրիի, Բարոն դը Մոնտեսքյոյի ու ֆիզիոկրատիկների պես:

Մի քիչ «իռլանդացի» մտածեմ ու վարվեմ Դեմոկրիտոսի, Սոլոնի, Սոկրատեսի, Պերիկլեսի, Յերոդոտոսի կամ Եվրիպիդեսի պես:

Մի քիչ էլ «գերմանացի» մտածեմ ու վարվեմ, օրինակ՝ Գաուսի, Էյլշտեյնի, Գյոթեի, Յուլիոս Ռոբերտի պես: Մի քիչ էլ «ռուսացի» մտածեմ ու վարվեմ՝ Լեւ Տոլստոյի ու Սախարովի պես են:

(Դեմոկրիտոսը, օրինակ, ասում էր. «Ավելի լավ ա, մի թեորեմ գտնեմ, քան թե Իրանի շահանշահը ըլնեմ»):

Ու կամ էլ, **ե՛ս եմ ու ձեր պես չեմ մտածում ու վարվում, ձեր ինչ գործն ա, ես հո ձեզ վնաս չեմ տալի:** Դուք ինչքան ուզում եք, «հայեցի» մտածեք, եթե, իհարկե, գիտեք, թե դա ինչ ա:

8. ՄԵՆՔ ՄԵՆԱԿ ՉԵՆՔ, ԿԱՄ ՉԵՆԱԳՈՎՆԵՐԸ

8.1 Բառերի քննադատությունը:

8.2 Բառերին՝ գերի (մեծատառերն ու թարգմանությունն իմն են – Մ. 3.)

ԿԱՐԵԼ ՉԱՊԵԿ

8.1 «ՄԵՆՔ»-Ն ՈՒ «ԵՍ»-Ը

«Մենք» բառն ասում ենք տազնապալի օրերին ու տազնապալի ձենով: Մարդկանց մեծագույն մասը կարծում ա, թե «մենք»-ը հանրությանն բառ ա, սոցիալականն ա, ուժ տվո՞ղ ա, իսկ «ես»-ը՝ յանի առանձնության, անհատապաշտության, ինքնասիրահարության ու եզոխտությանն բառն ա:

Բայց «մենք» բառը մի մեծ թերություն ունի: «Մենք»-ն ԱՆՈՐՈՇ Ա, ՈՒ ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ: Օրինակ՝ շատ հեշտ ու հանգիստ ասում ենք. «Մենք փայլուն ժողովուրդ ենք»: Բայց ինչքան դժվար կասես. «Ես փայլուն մարդ եմ»:

Երեւի ամեն չէիս էլ ասի. «Մենք վառ ենք պահում Զուսի պատգամները», բայց ո՞ւմ լեզուն կգորի, որ ասի. «Ես վառ եմ պահում Զուսի պատգամները»: «Մենք»-ը միշտ էլ յանի արուն ա թափում ու զոհում ա իրա ազատությունը՝ հանուն ընդհանուր բարօրության: Իսկ «ես»-ը, կներեք, իհարկե, էդ արունը չի թափե: Է՛ն օրերին, երբ «մենք»-երը յանի ինչ-ինչ բաներ էին զոհաբերում, «ես»-ը խստած էր տանը:

«Մենք»-երը ծերից-ծեր հերոս են, ծերից-ծեր նահատակ են ու մարտիրոս, ու իրարու էլ ախպեր են:

«Մենք»-Ը ՅԱՆԻ ԶԵՆՅ ՄԵՃԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՉՈՅԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ա, ՈՐ ԿԱ: «ՄԵՆՔ»-Ն ԱՆԸՆԴՅԱՏ «ՊԱՅՔԱՐՈՒՄ Ա», «ՄԵՆՔ»-Ը ՊԱՅԱՆՋՈՒՄ Ա: Բա՛:

Չա՛, ես էլ կարամ գլուխ գովամ ես ահագին սիրուն «մենք»-ով, ես ահագին առնական, ես ահագին վսեմ ու ահագին վաստակավոր «մենք»-ով, բայց ախր ես ինքս, ցավոք, լրի՛վ զուրկ եմ «մեր» ես գովական առաքինություններից:

Ու մեկ էլ՝ լավ գիտեմ, որ ՈՉ ՄԻ ԳԵՐ-ԿԱՏԱՐՅԱԼ «ՄԵՆՔ» ԷԼ ՄԻ ԿԱԹԻԼ ԱՆԳԱՄ ՉԻ ԱՎԵԼԱՑՆԻ ԻՄ ԿԱՐԵ-ՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒ ՄԻ ԿԱԹԻԼ ԷԼ ՉԻ ՇԱՏԱՑՆԻ ԻՄ ՇԱՏ ՈՒ ՇԱՏ ՅԱՄԵՍՍ ՎԱՍՏԱԿԻ ԿՇԻՈՒԸ: Ու ընծի ոչ մի «մենք» էլ չի փրկի, թե որ ինքս ոչ մի բան չեմ արե, թե որ, օրինակ, մի տխի գլուխ էլ ողորմություն չեմ տվե:

«Ես»-ը գործնականն բառ ա, գործի՛ բառ ա, պարտադրո՞ղ բառ ա, ու «ես»-ը «մենք»-ից շատ ավելի համեստ ա: «Ես»-ն անհանգիստ ա ու ծանրակշիռ:

«Ես»-ը համ խղճի՛ բառ ա, համ էլ՝ գործի՛ բառ:

8.2 «ՄԵՆՔ ԷՆ ԱՉԳՆ ԵՆՔ, ՈՎ ԱՇ-ԽԱՐՅԻՆ ՏՎԵԼ Ա...»

Մերոնց հաց ու ջուր չտաս՝ մենակ թողաս, որ ասեն. «Մենք է՛ն ազգն ենք, ով աշխարհին տվել ա՝ Յան Զուս, Յան Ժիժկա, Սմետանա. մենք Կոմենսկո՛ւ ազգն ենք»:

Գերմանացիք էլ ասում են. «Մենք Գյոթեի, Կանտի, Բիսմարկի (ու չգիտեմ, թե էլ որ մեկի) ազգն ենք» (Չապեկը Եսի գրել ա Առաջին համաշխարհայինի սկզբի օրերին-Մ. 3.):

Գերմանացիք ասում են. «Մենք Գյոթեի ազգն ենք»:

Բայց ախր ԴՈՒ, ԶԵՆՅ ԴՈՒ, ՈՐ ԳՐՈՒՄ ՈՒ ԱՍՈՒՄ ԵՍ ԷՍ ԲԱՆԵՐԸ, ԻՆՉ ԿԱՊ ՈՒՆԵՍ ԳՅՈՒԹԵԻ ԶԵՏ: ԴՈՒ ԻՆՔԴ ԳՅՈՒԹԵԻՆ ԻՆՉՈ՞Վ ԵՍ ՆՄԱՆ: ԴՈՒ Է՛Լ ԵՍ ԳՅՈՒԹԵԻ ՊԵՍ ԻՄԱՍՏՈՒՆ ՈՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ, դու է՛լ ես Գյոթեի պես

սիրում ֆրանսիան, ԴՈՒ ԷՆ ԵՍ ԳՅՈՌԹԵՒ ՊԵՍ ՈՏԱՆԱԿՎՈՐ ԳՐՈՒՄ, դու էլ ես Գյոթեի պես ողջ աշխարհին օրինակ:

Կամ էլ ասում են. «Մենք Շիլլերի ազգն ենք»: Բայց դու էլ ես Շիլլերի պես կոչ անում «In Tirannos» («Ընդդեմ բռնակալների»), դու էլ ես Շիլլերի պես պահանջում. «Sir, geben Sie Gedankenfreiheit» («Սըր, ազատություն տվե՞ք մեզ»):

Մեկ-մեկ էլ ասում են. «Մենք Կանտի ազգն ենք»: Բայց՝ ԴՈՒ ԷՆ ԵՍ ԿԱՆՏԻ ՊԵՍ ՀԱՍՏԱՐՈՒՄ, ՈՐ ՄԻԱԿ ՆՊԱՏԱԿԸ ՄԱՐԴՆ Ա, ՈՐ ՄԱՐԴԸ ՆՊԱՏԱԿՆ Ա, ՈՉ ԹԵ ՄԻԶՈՅԸ:

Հա՛, Գյոթեն ու Կանտը ու սրանց պես էլի մարդիկ եղե՛լ են, բայց սրանց լինելության մեջ ԴՈՒ ՎԱՍՏԱԿ ՈՒՆԵՄ, դու առնչվում ես սրանց, ու սրանց մի ժամանակվա գոյությունն ավելացրե՛լ ա քու, հենց քո՛ւ վստահությունն ու կատարելությունը:

Ու որ սրանք թեզվից առաջ են եղե, սրանց ես լինելությունից դու ավելի կուլտուրական, ավելի վեհ, ավելի մարդկային ու ողջ աշխարհին հայտնի ես դառնե՛, հենց դո՛ւ, դու ի՛նքը:

Դու Վոլֆն ես (նացիզմի ավստրահունգարական ազդեցիկ գաղափարախոսներից ա-Մ. Հ.), թե՛ Գյոթեն, Կամստոն ես, թե՛ ծախու գրչակ:

Տո, դու ի՞նչ ես, ի՞նչ:

Ախր, ա՛յ ընթերցող, թե որ ես թերթերում գրածներին հավատանք, պարտված Բելգիայի տարածքում մենակ սրանց պես գյոթեններն ու կանտերն են արշավել:

Ու հենց որ արտասահմանը մեզ մի թերթե նախատիևք ա տալի, սկսում ենք օդը դղրդացնել վեհապանծ անուններով:

Ա՛յ ընթերցող, գիտեմ, որ դու է՛լ ես համաձայն, որ ՄԵՐ ԵՍ ԱՐԱՐՄՈՒՆԵՐՈՎ ՎԱՐԿԱԲԵԿՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՎՍԵՄ ՆԱԽՆԻՆԵՐԻՆ: Ավելի լավ կլիներ, որ ոչ մի ժիժկա էլ չունենայինք, ԶԱՆ ԹԵ ԺԻժԿԱՅԻ ԱԶԳԻ ՄԵԶ ԵՍՔԱՆ ՎԱԽԿՈՏ ԸԼՆԵՐ:

Պարզ չի՞, որ ԿԱՐԵՎՈՐ ՉԻ, ԹԵ ԻՆՉ ԱԶԳԻՑ ԵՆՔ, ԹԵ ՈՐ ԻՆՔՆԵՐՍ ՄԻ ԲԱՆ ՉԵՆՔ: Ազգին անուն չի պետք, ազգին մա՛րդ ա պետք:

9. ՉԱՊԵԿԻ ԵՍ ԱՍԱԾՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Հետաքրքիր ա, որ Չապեկի ես գրածները փոքրաքանակ ազգերին շա՛տ են հատուկ՝ չնայած ժամանակ առ ժամանակ մեծաքանակ ազգերն է՛լ են խիստ «հրապուրվում» ես տեսակ «ազգիզմով»:

Փոխե՛ք, օրինակ, Չապեկի ես գրածի մեջ «Մենք աշխարհին տվել ենք՝ Յան Հուս, Յան Ժիժկա, Սմետանա. մենք Կոմենսկո՛ւ ազգն ենք» խոսքերը հետեյալներով. «Մենք աշխարհին տվել ենք Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան, Մեսրոպ Մաշտոց: Մենք Գրիգոր Նարեկացրո՛ւ ազգն ենք» (տարբերակ՝ «Վիկտոր Համբարձումյանի կամ Վիլյամ Սարոյանի ազգն ենք»), ու կստանաք ճիշտ մե՛ր նկարագիրը:

Եսօրվա աֆրիկյան նորաթուխ պետություններն է՛լ են ես տեսակ «ազգիզմի» թունդ հետեւորդն ու պաշտողը: Էռնեստ Գելներն իր «Ազգերն ու ազգայնականությունը» գրքի մեջ վկայում ա, որ Եսօրվա նույնիսկ աֆրիկյան պետություններն են իրենց համար ազգային հզոր անցյալի ու ազգային ընտրյալության լեգենդներ հորինում, ու ազգային փոքրամասներին կոտորում են՝ հենվելով հենց ես լեգենդներին: Ես տեսակ գեւնցիդն Եսօր սովորական բան ա:

Հետաքրքիր ա մի ուրիշ բան: Ազգիզմը, որ ծնվել ու քաղաքականության միջոց ու գործիք ա դառնե հեգելիզմից (տես Կառլ Պոպերի գրքերը), շատ արագ ու հեշտ միավորվում ա սոցիալիզմի հետ: Սրա փայլուն օրինակը գերմանական Նացիոնալ սոցիալիզմն ա (ու համ էլ մեր սեփականը), կամ՝ Եսօրվա քրդերինը:

Քաղթենին ու քաղթենու մտածողությամբ «մտավորականը» մի հասարակ

բան չի հասկանում: Չի հասկանում, որ ԹԵ ՈՐ Էսօր առանձին մի բան չես ու խեղճ ու ողորմելի մի վիճակում ես, ու ծուլլ ու անկարող ու սովորելու ունակությունից զուրկ մեկն ես, քո իսկ ժողովրդի փառավոր անցյալը քեզ ոչ մի կերպ ՉԻ ԱՐԴԱՐԱՑՆԻ ՈՒ ՉԻ ՕԳՆԻ:

Ու երբ հպարտանում ես քո եղ փառավոր անցյալով, նախ՝ ծիծաղելի ես, որովհետև Էսօր ուղղակի ողորմելի ես, ու երկրորդ՝ Չապեկի ասածի պես, վարկաբեկում ես քո իսկ վեսմ նախնիներին էլ, քեզ էլ:

Սովորելու ունակությունից էլ զուրկ ես, որովհետև քեզ հռչակել ես «փայլուն ու ընտիր ազգ»: Իսկ եթե «փայլուն ես ու ընտիր», էլ ի՞նչ կարիք ունես սովորելու: Թո ուրիշները քեզից սովորեն, բա՛:

Պարզ ա՛ կարելուր չի, թե ի՞նչ ազգից ենք, թե որ ինքներս մի բան չենք: Ազգին, իրոք, անո՛ւն չի պետք, ազգին կարգին մա՛րդ ա պետք:

10. ԲԱ ԻՆՉԻՑ ՇՈՒՐՁԸ ՄԻԱԲԱՆՎԵՆՔ

«Գետի երեսի տաշտղը.– Յլը Էս կարմրախայտին նայի, Էկե ու ընծի լող տալ ա սովորցընում: Էս տգետը, փոխանակ հոսանքով լող տա, հոսանքին հակառակ ա լող տալի»:

ԿԱՐԵԼ ՉԱՊԵԿ

Ասում եմ ես, որ «միաբանություն» ասածը առհասարակ պետք չի: ՉԷ, չեմ ասում:

Միաբանությունը պետք ա, ու անպայման ա պետք, բայց **Էս կողմ եմ միայն ու միայն Է՛ն միաբանությանը, ինչը հաստատում ա բոլորին հավասար աչքով նայող ու պարտադիր գործող օրենքը: Է՛ն օրենքը, ինչի աղբյուրը մասնավոր սեփականության նորմն ա, ոչ թե ուժը:**

Էս կողմ եմ մենակ Է՛ն միաբանությանը, ինչը հաստատում ա Է՛ն օրենքը, ինչը պաշտպանում ա ամե՛ն մի հա-

տիկ-հատիկ վերցրած մարդու ազատություններն ու իրավունքները: Է՛ն օրենքը, ինչը հնար ա տալիս ամեն մի առանձին վերցրած անհատին ապրելու, ծաղկելու, բարգավաճելու, հարստանալու, գործելու, խոսելու, համոզելու, պաշտպանելու ու պաշտպանվելու, ընտրելու ու ընտրվելու եւս: Է՛ն օրենքը, ինչը չի ավելացնում ոչ մեկի ցավ ու դարդը, ինչը քչացնում ա բոլոր-բոլորի ցավերն ու ուզում ա, որ Էղ ցավերը դառնան ինչքան հնարավոր ա քիչ:

(Այսինքն՝ Էս կողմ եմ Յլումի ասած բարոյական նորմերի հաստատած միաբանությանը միայն):

(Անցավ ու անդարդ ու «դրախտային» կյանքի, այսինքն՝ լիակատար երջանկության ձգտումն անհեթեթ ա ու անհնար: Անընդհատ ու ամեն րոպե երջանիկ կարա ըլնի միայն լրիվ առողջ ու կուշտ ու կերած խմած հոգեկան հիվանդը՝ «դեբիլը»):

Պարզից էլ պարզ ա, որ **եթե հանրության առանձին վերցրած ամեն մի անդամը հարստանա, ծաղկի ու բարգավաճի, կհարստանա ու կծաղկի ու կբարգավաճի հենց հասարակությունն ինքը**, այսինքն՝ ողջ երկիրը:

Հարուստ պետությունն էլ կունենա առողջ, տեխնիկայով հագեցած ու մարտունակ բանակ, ինչի ամեն մի զինվորն ու սպան կգործեն ու կառաջնորդվեն հենց Էս պարտադիր գործող օրենքով, Էս արդա՛ր օրենքով, ինչն անպայման նայում ու հատիկ-հատիկ պաշտպանում ա ամեն մեկին:

Ու Էս զինվորներն ու սպաները կգնահատեն, կափսոսան ու կպաշտեն Էս օրենքը, որովհետև գնահատած, ափսոսած ու պաշտած կըլնեն իսկական արդարությունը:

Ու Էս օրե՛նքը կըլնի ամեն մի քաղաքացու հայրը, ուրեմն համ էլ հայրենիքը, ու Էնքա՛ն թանկ հայրենիքը, որ քաղաքացիները, պետք եղած ժամանակ, ՎՈՒՁ ԿՄԻԱԲԱՆՎԵՆ ու կհեղնե-

և ամեն գնով, նույնիսկ իրանց կյանքի՝ գնով, պաշտպանելու սա:

Ու եթե էս տեսակ օրենքը, էս կարգը, էս տեսակ երկիրը, էս տեսակ հայրենիքը պաշտպանելու հարց ըլնի, էժամ **համարյա բոլորը կըլնեն միաբան** (չհաշված «դեբիլներին»), որովհետեւ **թե որ սա կորցրին՝ կորցնելու են իրենց ամենաթանկ բանը, իրենց անձնական ազատությունն ու վերն ասածս մնացած բոլոր բաները, որ մեր բոլորի ուզածն են**, ու դառնալու են ճորտ ու ստրուկ, աղքատ ու հարկադիր ստոր:

(Ու կարելոր չի, **թե ում ստրուկ ու ճորտը կըլնեն, օտարների՞, թե՞ սեփական փաշա ու սուլթանների**): Ու էս տեսակ պետությունը կըլնի ոչ միայն հարուստ, այլեւ կըլնի ուժեղ, որովհետեւ բանակը պահում են տնտեսությունով (փողով) ու արդարությամբ (օրենքով):

Մենակ հզոր ու բազմակողմանի զարգացած տնտեսությունով երկիրը կարա հզոր բանակ ունենա:

Հզոր ու բազմակողմանի զարգացած տնտեսությունով երկիրը կարա հզոր բանակ ունենա, մենակ է՛ն պայմանով, **թե որ իր հասարակարգը հիմնված ըլնի բարոյականության Յյումի նշածս Նորմերին: Սրա՛ համար ա, որ էդ տեսակ հասարակարգին ասում են՝ բարոյակարգ:**

(Տես իմ 1. «Հայաստան – 2016, Չսերտած դասեր, «Ի՛նչ պիտի արվի, որ Հայաստանը չկործանվի» հոդվածը, Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, 2016, Երեւան», ու 2. «Բարոյական հասարակարգի ուրվագիծը», «Գարուն» ամսագիր, 2013, NN 5-6):

Ես, ա՛յ, է՛ս իրո՞ք **միաբանող օրենքին էմ կողմ, կողմ էմ էս բռնակալ, դիկտատոր, թագավոր օրենքին**, որովհետեւ էս անգամ արդեն էնքան էլ կարելոր չի ըլնի, **թե ո՛վ ա պրեզիդենտը կամ վարչապետը, Սերժժը, Սարգսիսը, Պողոճը, թե՞ Զավոր Պետրոսը:**

Ու էս դեմ էմ ամեն տեսակ «ազգային», «կրոնական» ու սոցիալիստական միաբանող գաղափարախոսություններին՝ առաջին հերթին հենց է՛ն բանի համար, որ սրանք դեմ են նկարագրածս օրենք-բռնակալին:

11. ԻՂԵՈՒՈԳԻԱՆ ՊԻՏԻ ՀԵՆՎԻ ՄԵՆԱԿ ՈՒ ՄԵՆԱԿ ԳԻՏՈՒԹՅԱՆԸ

*«Экономика должна быть экономной»
M. ГОРБАЧЕВ*

Ուրեմն, պիտի միաբանվենք մենակ ու մենակ **բոլորին հավասար աչքով նայող ու պարտադիր գործող օրենքի շուրջը, է՛ն օրենքի, ինչի աղբյուրը մասնավոր սեփականության Նորմն ա, ոչ թե ուժը: է՛ն օրենքի, ինչը երկրի մեջ բարոյակարգ ա հաստատում:**

Բայց ըստեղ մի շատ անհաղթահարելի դժվարություն կա:

Էդ դժվարությունը շարքային մարդու մտածողության խեղճությունն ա (շատ մեղմ ասած):

Հենրի Պուանկարեն ասում ա. «Մարդկանց մեծագույն մասը ալարում ա մտածի»:

Պուանկարեն սխալ ա:

Մարդկանց մեծագույն մասը ՉԻ ՄՏԱՃՈՒՄ ՈՒ ՉԻ Է՛Ն ԿԱՐԱ ՄՏԱՃԻ:

Շարքային մարդը, ու նույնիսկ «բարձրագույն» կրթությունով «շարքային» մարդը, չի՛ մտածում:

Մտածող մարդը չափազանց հազվագյուտ ա:

Չմտածողի ուղեղը նման ա մի գրադարանի, որտեղ դարակներ կան ու էս դարակների վրա ՈՒՐԻՇ ՄԱՐԴԿԱՆՑ գրած նախադասություններով բարտեր են դարսած: Ու ըսենց մարդն էս ՈՒՐԻՇԻ ԳՐԱՃ բարտերից ընդամենը կոմբինացիաներ ա կազմում, ու քանի որ իրան լսողներն է՛լ ճիշտ էս ձեւ են

վարվում, իրենք էլ հենց գիդեն, թե ես մարդը մտածեց:

Մտածողները մենակ էն մարդիկ են, ովքեր ՆՈՐ ԶԱՐՏ ԳՐՈՂՆԵՐՆ ԵՆ, Սոկրատեսի, Դեմոկրիտոսի, Լոկի, Յուլի, Սմիթի, Մենգերի, Միգեսի, Յայելի, Գալիլեյի, Նյուտոնի, Լայբնիցի, Գաուսի, Պլանկի, Պուանկարեի, Էյնշտեյնի պես մարդիկ: Սրանց պես մարդը, թե որ բախտը չբերեց ու հայտնի չդառավ, չմտածողների մեջն աննկատ ա մտում:

Առհասարակ՝ քաղգործիչն իրեք պարզ բան ա ասում.

ա) Ես գիդեմ, թե ինչ պիտի արվի:

բ) Ես ետի կարամ անեմ:

գ) Որ ընծի՛ ընտրեք, ես ետի ա՛նպայման կանեմ:

Քաղգործիչն լսող շարքային մարդուն ետի լրի՛վ հերիք ա, որովհետեւ, ոնց որ արդեն ասի, մարդկանց մեծագույն մասը, ինչքան էլ տարօրինակ թվա ասածս, ուղղակի զուրկ ա մտածելուց, հենց ա իմանում, թե եղ մարդն ա՛նպայման խելոք ա ու իմաստուն:

Քաղգործիչներն ես ասածս բաները շատ լավ գիդեն, բացառությամբ էն բանի, որ իրանք էլ չեն մտածում, որովհետեւ իրանք մտածելը շփոթում են խորամանկության հետ՝ չնայած իրանց հոգու խորքում մեկ-մեկ կասկածում են իրանց խելքի զորության վրա:

Ու շարքային մարդը սրանց Էնքան շատ ա ծափ տալի, որ սրանք սկսում են լուրջ-լուրջ մտածել, որ իրանք ոչ թե ընդամենը խորամանկ են, այլ հենց իսկականից իմաստուն են: Բա՛:

Ես ես քաղգործիչներից շատերի (մեկ-մեկ՝ նույնիսկ հայտնի մարդու) եմ փորձե բան հասկացնեմ, բայց լրիվ անարդյունք: Մի օրինակ բերեմ: Սրանցից մեկին, ով առաջ ԶԶԸ-ից էր ու համ էլ պատգամավոր էր, նամակով առաջարկեցի, որ մի քանի կարեւորագույն գիրք

կարդա, մանավանդ սահմանադրությունն ստեղծելու ու բարոյական պետությունն սարքելու գիտությունից: Ես ընկերոջ պատասխանն իմ համար արտառոց էր՝ չնայած տիպիկ չմտածող մարդու պատասխան էր: Ինքն ասեց.

- Ախր 1990-ականներին ազգային ժողովում Էնքան վիճեցինք սահմանադրությունից, որ բոլորս էլ դառնաք սահմանադրության մասնագետ, բա էլ սահմանադրության մասին կարդալու կարիք ունե՛մ որ:

Ու հլը ես պարոնը բարձրագույն կրթությունն ունի, Էս էլ մաթեմատիկայից, լիքը գիրք ա կարդացե, մտավորականի համբավ ունի ու ահագին էլ հայտնի ա: Բա շարքային մարդուն էլ ո՛նց հասկացնես, որ բարոյական երկիր սարքելու ինդիքն ավելի շատ ու ավելի բարդ գիտությունն ա պահանջում, քան թե Էսօրվա ամենաբարդ ֆիզիկան ու մաթեմատիկան:

Ես ասածս գիտության բարդությունը, իմիջիայրոց, հենց սա բոլորին բացատրելու ու համոզելու արտառոց դժվարությունն ա: Ես միշտ մի իրական դեպք եմ պատմում, ինչը մի քանի անգամ արդեն հրատարակել եմ, բայց էդ դեպքն Էնքան ա խրատական, որ Էստեղ նորից եմ պատմում:

Մի անգամ խոսք ընգավ, թե ղվ լավ պրեզիդենտ կըլնի, ու ներկաներից մեկը՝ մի ԿամմԶ-ի վարորդ, ասեց.

- Թո ընծի դենն պրեզիդենտ, նենց ղեկավարեմ ո՛ր:

Ես ասի.

- Աբո ջան, շատ եմ խնդրում, մի քանի օրում ընծի համար մի ջուխտ լավ կոշիկ կարի էլի, ի՛նչ կըլնի:

- Բայց ախր ես կոշկակար չեմ, առարկեց Աբոն: - Ա՛յ, որ կոշիկ կարելը սովորած ըլնեի, անպայման կկարեի:

Ես ասի.

- Արա՛, Աբո՛, դու որ կոշիկ կարելը պիտի սովորես, որ նոր կարենաս մի ջուխտ կոշիկ կարես, քու կարծիքով երկիր դե-

կավարելը կոշիկ կարելուց էդքան ավելի հեշտ գործ ա, որ առանց սովորելու վստահ-վստահ ասում ես, թե շատ լավ կղեկավարես:

Ես էս հայաստանում ոչ մեկին չգիտեմ (հայտնի կուսակցականներից ու սրանց առաջնորդներից էլ չխոսեմ), ով վստահ չլինի, թե կարա շատ լավ պրեզիդենտ կամ վարչապետ կամ էլ նախարար ըլնի: Բայց, ախր, հասարակությունը մի շուկատ կոշիկից շատ ավելի բարդ բան ա:

Ես, ոնց որ վերն ասել եմ, բարոյակարգով հասարակարգ սարքելու մասին ուրիշ տեղեր էլ եմ ասե, ու դրանց վերջում էլ դրել եմ է՛ն կարեւորագույն գրքերի ցուցակը, որ հայերն էսօր պիտի յուրացնեն, որ բարոյակարգ սարքեն իրանց երկրում: Ես ցուցակն էնքան եմ կարեւոր համարում, որ էս շարադրանքի վերջում էլ եմ դնում, անգլերեն ու ռուսերեն լեզուներով:

12. ԿՈՒՍԱԿԳՈՒԹՅՈՒՆԸ ԹՔԱԾ ՈՒՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՇԱՔԵՐԻ ՎՐԱ

«Ժողովրդին ասա մենակ է՛ն բաները, ինչն ի՛նքն ուզում ա լսի, թեկուզ ասածը սխալ ըլնի»:

ՎԻԼՖՐԵՐԴՈ ՊԱՐԵՏՏՈՅԻ կանոնը

Ամենաշատը միաբանություն են պահանջում կուսակցական առաջնորդներն ու սրանց ազդեցիկ կուսակիցները, ընդ որում, ամեն մի կուսակցությունը ճիշտ ա համարում մենակ ու մենակ հենց իր շուրջը միաբանվելը:

Ու չնայած կուսակցություններն անընդհատ հայտարարե ու հայտարարում են, թե իրանց միակ ու վերջնական նպատակը ժողովրդի բարօրությունն ու շահերը պաշտպանելն ա, մեկ ա, սրանք մենակ ու մենակ մի նպատակ են ունեցե, ու հա է՛լ մենակ է՛դ նպատակը կունենան:

Էդ նպատակը ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՑԱՆԿԱՑԱԾ ՄԻՋՈՑՈՎ ԳՐԱՎԵԼՆ Ա:

Մնացած բաները կուսակցություններին բացարձակ չեն հետաքրքրում, չեն հետաքրքրե ու չեն էլ հետաքրքրի:

Իհարկե, կուսակցական առաջնորդներն ու նշանավոր գործիչները երբեք սա չեն խոստովանի, որովհետեւ եթե խոստովանեն, բա ժողովրդին էլ ո՛նց խաբեն: Կուսակցական առաջնորդներն ու ազդեցիկ անդամները հետեւում են Վիլֆրեդո Պարետոյի խորհրդին, մենակ որ իրանց անձնական շահերն իրականացնեն:

Բոլոր կուսակցություններն էլ ունեն իրենց կանոնադրությունը, ու էս կանոնադրությունները շատ են հիշեցնում գինվորական կանոնադրություններ ու երբեք դեմոկրատական չեն:

Ես կանոնադրությունները հաստատում են ներկուսակցական կարգապահություն, հաստատում են մասնակի կամ լրիվ գաղտնիությունն ու արգելում են խոսքի ազատությունը: Այսինքն՝ պահանջում են, որ կուսակցության անդամը կուսակցական վերնախավի ներքին «խոհանոցի» գաղտնիքները չհայտնի հանրությանը:

Ես գաղտնիքները հայտնող կուսակցականը կամ ինքն ա հեռանում կուսակցությունից, կամ կուսակցությունն ա դրան հեռացնում իր շարքերից:

Սա անում ա Լույնիսկ է՛ն կուսակցությունը, որը, ըստ իր հայտարարության ու կանոնադրության, պայքարում ա հանուն խոսքի ազատության:

(Կուսակցություններն էս առումով (բոլոր երկրներում) գործում են ճիշտ հենց իշխանական կառույցների պես, ում հորինած պետական գաղտնիքի «ինստիտուտը», իր մեծագույն մասով, մենակ ու մենակ իշխանավորների թալանն ու հանցագործությունները հանրություններից թաքուն պահելու համար ա): Разъе этого не было?

Էսօր չկա գոնե մի կուսակցություն, որի գոնե առաջնորդն ու ազդեցիկ անդամներն իմանան, թե բարոյական հասարակարգը ո՛նց են ստեղծում, ի՛նչ

սկզբունքներով ու մեխանիզմներով, այսինքն՝ իմանան լիբերալիզմ-լիբերթարիզմի գիտությունը, ինչի այլընտրանքը ես կամ էն տեսակ բռնապետությունն ա:

Թե կա էլ, մեկ ա, չկա գոնե մի կուսակցություն, որն ես սկզբունքները ժողովրդին բացատրի կամ գոնե բացատրելու ցանկություն ունենա:

Եսօր մանավանդ չկա գոնե մի կուսակցություն կամ գոնե մի կուսակցական առաջնորդ կամ քիչ թե շատ հայտնի գործիչ, ով իր ասածին հավատալով, անկեղծ ասի. «Մինչեւ հիմա ես պայքարում էի, որ իշխանությունը փոխվի, բայց երբ իշխանությունն իրոք փոխվի, ես ամեն ինչ կանեմ, որ Պողոսն ու Պետրոսը (ու ոչ թե ես ինքս) դառնան պրեզիդենտ ու վարչապետ, որովհետեւ ես ինքս պրեզիդենտությանն ու վարչապետությանը հարկավոր հատկանիշները չունեմ: Եդ հատկանիշները մենակ Պողոսն ու Պետրոսն ունեն: Իսկ իմ համար ամենակարեւորը ոչ թե իմ անձնական ապագա բարեկեցությունն ա, այլ մեր երկրում բարոյակարգ հաստատելը»:

Եսօր չկա գոնե մի կուսակցություն, որն իշխանական կառույցների որեւէ մանդատ ձեռք բցելուց հետո ՉԶԳՏԻ ՊԱՇՏՈՆ ԳՐԱՎԵԼՈՒՆ:

Եսօր չկա գոնե մի կուսակցական առաջնորդ կամ քիչ թե շատ հայտնի գործիչ, ով պետական խոշոր պաշտոնի (համ էլ՝ նախագահի, վարչապետի ու նախարարի պաշտոնի) չճգտի իր ողջ եւթյամբ ու կարողություններով:

Բայց ախր ես Էդած հասարակարգը քննադատելը մի՛ բան ա, ու շատ անգամ էլ շատ հեշտ բան ա, որովհետեւ Եսօրվա իշխանավորների հանցագործությունները տեսանելի են նույնիսկ դպրոցականներին, իսկ բարոյական հասարակարգ ստեղծելը՝ լրիվ ուրիշ բան ա, որովհետեւ քննադատելու շնորհք ու խիզախությունն ինչ բացի, լիքը ուրիշ հատկություն ու, իհարկե, առաջին հերթին մասնագիտական խորը գիտելիք ա պահանջում:

Ո՛վ ասեց, որ կուսակցական առաջնորդն անպայման հիանալի պրեզիդենտացու ա, որ հլը մենք էլ իր ընտրվելուց հետո «միաբան» մնալք իր հետ:

Թե որ իշխանական մանդատ ա ձեռքում մեկից ավել կուսակցություն, իշխանությունը ձեւավորում են մենակ կուսակցական շահերով՝ բարիչելով, թե ո՛ր պաշտոնը ո՛ր մի կուսակցությանը պիտի ըլնի:

Ժողովրդի շահերը կամ մասնագիտական ունակությունները հաշվի չեն առնվում առհասարակ: Ու պաշտոն են ստանում մենակ առաջնորդներին նվիրված անկարող տգետները:

Մի թարմ օրինակ բերեմ:

Վերջին ընտրություններին ժողովուրդը քիչ թե շատ հավատում էր մենակ Նիկոլ Փաշինյանի ու Էդմոն Մարությանի «Ելք» դաշինքին: «Ելքը» անցավ խորհրդարան: Ընտրություններից հետո մի անկախ ու ազատատենչ շահել՝ Դանիել Իոննիսյանը, հրապարակեց ընտրակարգը խախտելու խայտառակ փաստեր, որ բացահայտել էր իր ղեկավարած «Իրազեկ քաղաքացիների միավորումը»: Ընտրությունները կեղծած իշխանությունները 2017-ի ապրիլի ընտրություններից բռնեցին Իոննիսյանին, իբր զրպարտության համար ու հմի գործն իբր «քննում են», որ հետո դատեն:

Թվում էր, թե Էն միակ դաշինքը՝ «Ելքը», ում ժողովուրդը հավատում էր, ես առիթը բաց չի թողնի ու իր քաղաքական գործողություններով անպայման կպաշտպանի Իոննիսյանին ու սրա ղեկավարած կազմակերպությանը: ԲԱՅՑ ՅԼԸ ՈՐ «ԵԼԵԸ» ՁԵՆ ՉԻ ՅԱՆՈՒՄ, ՈՒ ԻՐ ՄՅՈՒՄ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐԸ ՅԱՄԱՐՈՒՄ Ա ԵՐԵՎԱՆԻ ԶԱՂԱԶԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԸ ԳՐԱՎԵԼԸ:

Ինչ ա, Նիկոլ Փաշինյանը չի հասկանում, որ թե դարձավ Երեւանի քաղաքապետ, դրանից իր պաշտպանած գործը (արդար պետություն սարքելը) չի շահի: Ախր քաղաքապետ Նիլուն անպայման

պիտի ենթարկվի ՀՀ-ի Եսօրվա անբարո կարգին ու ինքն էլ դառնա անբարո, որ էդ պաշտոնում դիմանա: Իհարկե՛, հասկանում աս:

Ու թե որ հասկանում աս, բա խի՞ Իոն-Նիսյանին պաշտպանելու արդար ու նպատակային գործը թողած՝ ուզում աս դառնա քաղաքապետ: Ուրեմն, Նիկոլի նպատակն Եսօրվա սիստեմից օգտվելն աս, թե չէ՛ չէր ձգտի քաղաքապետությանը:

Հնարավոր աս, որ «Ելքը» (մի թեթեւ, «ձեւի համար») ստիպված պաշտպանի Իոննիսյանին կամ էլ գոնե դատապարտի իշխանությունների վարքը Իոննիսյանի նկատմամբ, որ ժողովրդի առաջ սեւերես չըլնի, բայց չեմ հավատում, որ «Ելքն» իր ձեռից էկածը կանի, որ Իոն-Նիսյանին պաշտպանի:

Ես կհավատամ մենակ է՛ն կուսակցությանը, որի առաջնորդները Նախօրոք կհայտարարեն, որ ոչ մի պետական պաշտոն չեն գրավի ոչ մի օր, ու իրանց խնդիրը մենակ ժողովրդի քաղաքական գիտակցությունը կրթելն ու բարոյակարգ ստեղծողներին օգնելն աս:

Ըսենց կուսակցություն չկա Եսօր, չի էղե, ու չեմ էլ հավատում, որ Հայաստանում ըսենց կուսակցություն կըլնի մի օր: Հազար ամիսս:

13. ԱԶԳ-ԲԱՆԱԿԻ ՄԻ ԶԱՆԻ ՕՐԻՆԱԿ

13.1 ԸՎԵՅՑԱՐԱՎԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱԶԳ-ԲԱՆԱԿԸ

«– Ապե՛, դրախտում հեչ ի՛նչ կա,– ասաց Հենդոն:

– Դրախտում, աս ջան,– ասաց Վալոդը,– ամեն ինչ էլ կա, ուղղակի մենք ընդե չենք»:

ՄԻ ԶԳՐՎԱԾ ՎԵՊԻՑ

13.1ա – Հանուն ինչի՞ աս Շվեյցարիայի ժողովուրդը միաբան

Միաբան աս Շվեյցարիայի ժողովուրդը:

Իհարկե, միաբան աս:

Հանուն ինչի՞ աս միաբան:

Շվեյցարիայի ժողովուրդը միաբան աս հանուն անխափան գործող բարոյակարգի: Շվեյցարիայի ժողովուրդը կողմ աս մենակ ու մենակ է՛ն միաբանությանը, որը հաստատում աս բոլորին հավասար աչքով նայող ու պարտադիր գործող օրենքը: Ե՛ն օրենքը, որի աղբյուրը մասնավոր սեփականության նորմն աս, ոչ թե ուժը:

Շվեյցարիայի ժողովուրդը կողմ աս մենակ է՛ն միաբանությանը, որը հաստատում աս է՛ն օրենքը, որը, անապաման ու անխափան, պաշտպանում աս հատիկ-հատիկ վերցրած ամեն՛ մի մարդու ազատություններն ու իրավունքները:

Շվեյցարիայի ժողովուրդը կողմ աս է՛ն օրենքին, որը երաշխիք աս տալի ամեն մի առանձին վերցրած անհատին ապրելու, ծաղկելու, բարգավաճելու, հարստանալու, գործելու, խոսելու, համոզելու, պաշտպանելու ու պաշտպանվելու, ընտրելու ու ընտրվելու են:

Շվեյցարիայի ժողովուրդը ստեղծել աս մի իսկական բարոյակարգ, իրան Էնքան թանկ մի բարոյակարգ, որ ետ բարոյակարգը արդեն իր ամենաթանկ հայրենիքն աս:

Ու Ես ձեւ միաբանվելով իրա Ես բարոյակարգ-հայրենիքի շուրջը, ժողովուրդը Էնքան հզոր տնտեսություն աս ստեղծե, որ Ես տնտեսության բերած եկամուտներով պահում աս մի իսկական ազգ-բանակ, որ իր Ես հայրենի բարոյակարգը պաշտպանի, ու պաշտպանի իր կյանքի գնով, թե պետք ըլնի:

Ընդ որում, Շվեյցարիայի ժողովուրդը «ծովից-ծով Շվեյցարիա» ստեղծելու ոչ մի նկատակ չունի, չունի արդեն 200 տարի, 1815 թվից:

13.1բ – Շվեյցարիայի ազգ-բանակը

Ինչ տեսակ ա Շվեյցարիայի ազգ-բանակը:

Ըստ եւրոյան, **Շվեյցարական դաշտութան զինված ուժերը աշխարհագրորային են, համարյա ճիշտ հին Աթենքի զինված ուժերի պես:**

Ես զինված ուժերը երկու բաղադրիչ ունեն, ցամաքայինն ու ռազմաօդայինը: Ցամաքայինն ունի 9 ռազմական բրիգադ (երկու տանկային, չորսը հետեւակային ու երեք ալպիական (լեռնահետեւակային): Բացի սրանք, կան օժանդակ բրիգադներ ու խմբավորումներ, ու ուսումնական խմբավորումներ:

Շվեյցարիայի ռազմաօդային ուժերն ունեն կործանիչների էսկադրիլիաներ, ուղղաթիռների խմբավորումներ, ցամաքային ՅՕՊՈՒ, թռիչքային բազաներ ու սպասարկու անձնակազմ: Ռազմական ուժերը կազմված են կամավոր-պայմանագրային ու պարտադիր ծառայության խառը սկզբունքով: Երկրի արական սեռի 19-31 տարեկան բոլոր առողջ քաղաքացիների ծառայությունը պարտադիր ա ու հիմնականում 260 օր ա, որը բաշխվում ա 10 տարվա:

Ես բանակի զինվորների թիվը՝ ներառյալ պահեստայինները, 1995-ին 400 հազար էր, 2004-ին՝ մոտ 200 հազար, 2013-ին՝ 155 հազար, իսկ **2016-ին՝ 100 հազար**, այսինքն՝ համարյա հինգ բանակի չափ:

Ես խաղաղասեր ու չեզոք պետությունը կարա 2-4 ժամում հավաքի 22 հազարանոց հիանալի վարժված, կազմակերպված ու հաղորդակցված մարտունակ բանակ, իսկ եթե կարիք լինի, մեկ-երկու օրում Ես թիվը կարա մեծանա մի քանի տասնյակ անգամ:

Շվեյցարական բանակի Ես դրվածքը աշխարհում միակը չի: Ես նույն սկզբունքով ա կազմակերպված Բունդեսվերի բանակը, որի սկզբունքն ա.

«Քիչ զինվոր + կադրային շատ սպա ու ենթասպա + քաղաքացիական պահեստայինները + ուսումնական զորահավաքները = հարկավոր բանակը»:

Շվեյցարիայի կադրային զինվորականների թիվը 9000 ա, որի հիմնական մասը ավիացիայում ա:

ՏՎՅԱԼ ՊԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՈՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՎՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ՄՈՏ 10-15 ՀԱՉԱՐ Ա:

Շվեյցարական բանակի թե՛ զինվորը, թե՛ սպան երբեք դպրոցում կամ բուհում զինվորական գործ չի սովորում, սովորում ա մենակ բանակում, իսկ պահեստի սպա պատրաստելը անչափ բարեխիղճ ու եռանդուն ա: Ծառայելը պարտադիր ա թե՛ ամեն տեսակ պաշտոնյաների, թե՛ քաղաքօրիչների, թե՛ դեպուտատների համար, ու ոչ մեկը՝ ըլնի ուսանող, թե բանկի տնօրեն, ՆՈՒՅՆԻՍԿ ԵՐԿՐԻ ՊՐԵՉԻԴԵՆՏԸ, չի կարա խուսափի զինվորական ծառայությունից, թե որ արական սեռից ա ու առողջ ա:

Շվեյցարիայի բնակչությունը 8 միլիոնից ավել ա ու **աճում ա, մեծ մասամբ, բնական աճի հաշվին:** Կյանքի միջին տևողությունը 82 տարի ա:

Չիվորական տարեկան բյուջեն ներքին համախառն արդյունքի համարյա 20%-ն ա, մոտ 5 միլիարդ դոլար: Ընդամենը 300 կմ ձգվող էդ երկրում կան 800 ժամանակակից տանկ ու զրահամեքենա, 14 էսկադրիլիա՝ մոտ 350 մարտական ու 120 ուսումնական ինքնաթիռով ու 100 ուղղաթիռով, ու Ես պարկն անընդհատ թարմացնում են:

Էդ ԱՄՆ-ում կարա օդաչուն իր ինքնաթիռից ջահել ըլնի, **Շվայցարիայում Ես տեսակ բանն անհնար ա:**

Շվեյցարիայում համարյա նույնքան տիր ու հրաձգարան կա, ինչքան կաՖե: Ծառայող զինվորը շաբաթ-կիրակի գնում ա տուն, զուգարան չի սարքում,

կառտոլ չի մաքրում, աման չի լվանում, ցանկապատ չի ներկում (հրամանատարների կամ խառոչիների համար ճորտություն անելն էստեղ ֆանտաստիկայի ժանրից ա): Ես ամենն անում եմ մասնավոր ֆիրմաները:

Բայց ամենաապշեղուն է՛ն ա, որ **շվեյցարական զինվորը «պոստ» չի կանգնում: Ես գործն անում եմ մասնավոր պահակային ֆիրմաները:**

Չինվորին վեր են կացնում առավոտը ժամը 5-ին, տանում վազքի: Հետո պիտի ուտի ու զուգարան էթա, հետո արդեն **ռազմական անընդհատ խաղ՝ ֆիզպատրաստություն, հրաձգություն, ձեռնամարտ, վարորդական գործ, տեխնիկայի գործածություն, ալպինիզմ, ու էս ամենը՝ նորից ու նորից, մինչեւ քնելը:** Ես տեսակ լարվածություն երեւի ուրիշ որեւէ բանակում չըլնի:

Չինվորներին է՛ն ձեւ են չարչարում, որ դրանք դառնում են Թերմինատոր ու Ռեմբո:

Ղեղովչինա, «ասիչ»-ի պես բան, խառոչի-մառոչի չկա, զինկոմը կամ մի ուրիշ սպա զինվորից փող չորթի՞, անհար ա, նույնիսկ մտքներովը չի անցնի: Ես տեսակ բաների մասին Շվեյցարիայում նույնիսկ լսած չկան:

(«Ասիչը» մեր բանակում է՛ն հեղինակավոր զինվորն ա, ով զինվորների համար «սահմանադրական դատարանի» պես մի բան ա: Ասի՛չն ա քննում ու վճռում, թե շարքային զինվորի վարքը չգրված նորմերին համապատասխան ա, թե՞ չէ):

Ես երկրում, ճիշտն ասած, բանակ տանել չկա, ուղղակի մի քանի շաբաթով էթում են բանակ ու հետ են գալի տուն, գնացած օրերին էլ ամեն շաբաթ-կիրակի տանն են:

Եսքանից հետո էլ **կարգապահության խախտում համարյա չկա,** որովհետեւ խախտելու համար **տուգանքների շատ մանրամասն ու շատ թանկ ու անխափան աշխատող սիստեմ ա մշակած:**

Հսկողը կադրային սպաներն են, տուգանքը նշանակում ա տվյալ մասի հրամանատարը, իսկ հազվագյուտ քրեական հանցանքները դատում ա ռազմական դատախազությունը:

Դե հիմի էս ամենը համեմատե՞ք հայկական բանակի հետ:

Լա՛ց ըլնենք մենք, հոնգուր-հոնգուր, ազգ-բանակ ենք սարքում, բա՛:

13.2 ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳ-ԲԱՆԱԿԸ

13.2ա – Մեր բանակի վիճակը

Մեր էսօրվա հայկական բանակում զինվորների փոխհարաբերություններն ու զինվոր-սպա հարաբերությունները մեծ մասամբ անբարո են: Չեմ ասում, թե մեր բանակի բոլոր սպաներն են անբարո (կամ զինվորները), իհարկե չէ: Ազնիվ ու քիչ թե շատ բարեխիղճ սպա ու զինվոր կա՛ մեր բանակում, մանավանդ ցածրաստիճան սպաների մեջ, իսկ ազնիվ զինվոր՝ լիքը, բայց սրանց մեծագույն մասի վիճակն անտանելի ա:

Բարձրաստիճան սպաների մեծ մասն անբարո ա, ու էս մասը հա՛մ բանակային կանոնադրությունն ա խախտում, հա՛մ իր պարտականություններն ա շատ վատ անում, համ է՛լ ապական ա («կոռում-պացված» ա): Ես մասը ճնշում ու կեղեքում ա զինվորներին, զինվորներից ու սրանց ծնողներից կաշառք ա վեկալում, գողանում ա բանակի ունեցվածքը, պատերազմի վախտն էլ թալան ա անում:

Ընդ որում, էս ձեւ սպան ինչքան բարձրաստիճան ա, Էնքան թալանի ծավալն ավելի մեծ ա: Գողանում են բանակի հանդերձանքի ու տեխնիկայի վառելանյութի համար տրամադրվող բյուջեի զգալի մասը ու շուկայականից ավելի թանկ, բայց իրանց համար ձեռնտու գներով բանակը մատակարարելու պայմանագրեր են կապում մասնավորի հետ: Շատ անգամ բանակի մատակարարը հենց իրանք են են:

Մեր բանակի ռազմական տեխնիկան հիւր 1980-ական թվականների և ու չափազանց աղքատ և, այսինքն՝ ի տարբերություն, օրինակ, շվեյցարական բանակի, էդ տեխնիկայի տարիքը դա գործածող զինվորի տարիքից մոտ երկու անգամ շատ և:

2016թ. ապրիլյան պատերազմի օրերին պարզվեց, որ առաջին գծի տեխնիկան ապահովված չի վառելանյութով, իսկ սահմանին կանգնած զինվորը նույնիսկ հարկավոր քանակով փամփուշտ չունի: Չինվորների հանդերձանքը շատ անգամ, մեղմ ասած, թերի և, կանխարգելիչ տեխնիկան ու պաշտպանական կառույցների վիճակն անմխիթար և (շարքային Նախաձեռնող քաղաքացիները մինչև հիմա մաշված անվադող են հավաքում առաջին գծի համար):

Չինվորական կանոնադրության տեղը գործում են «դեդ»-երի ու «ասիչ»-ների անբարո «ինստիտուտները», ու բանալում «բարոյական» նորմեր հաստատողներն են զինվոր-դեդերն ու ասիչներն են: Սպաների մեծ մասին էս անբարո կարգը ձեռ և տալի, որովհետեւ էս ձեւ, այսինքն՝ դեդերի ու ասիչների միջոցով, շատ ավելի հեշտ և զինվորներին ղեկավարելը, «գլխացավանքը քիչ և»:

Բանակային մարզանքն ու ուսուցումը (առավտովա վագքը, մարշ-բրասուկները, ձեռնամարտի դասերը, սրանսպորտ քշելը են) ու ռազմական գործի ուսուցումը հազվագյուտ և ու, ըստ էության, չկա: Չինվորը կարող և երկու տարի ծառայի ու ոչ մի անգամ կրակած չլինի:

Իսկ ծանր տեխնիկայից (տանկերից, ինքնաթիռներից են) կրակելը ըստ էության չկա, որովհետեւ փամփուշտ ու արկը քիչ և ու թանկ, ուսուցանելու պրոցեսն էլ սպաների համար զահիլա և, ու սպաներն իրանք էլ շատ անգամ պրոֆեսիոնալ չեն ու իրանց գործը լավ չգիտեն:

Չափազանց շատ և ինքնասպանությունների ու սպանությունների թիվը (թշ-

Նամու գնդակից զոհվածները չհաշված), ու մարդասպանները (ուր մի մասը հենց սպաներն են, մյուսը՝ դեդերը), երբեք չեն բացահայտվում: Չինվորական դատախազությունները սպանությունները միշտ որակում են ինքնասպանություն: Չինկոմներն ու զինվորական բժշկական հանձնաժողովները, առանց բացառության, ապական են, ու կաշառքն էստեղ սովորական բան և ու չգրված օրենքի ուժ ունի:

Ապրիլյան պատերազմին պարզվեց, որ զինվորական խոշորագույն պաշտոնյաներից շատերը վիթխարի քանակով թալան են արե բանակի ունեցվածքից ու էս թալանով, օրինակ, դրյակներ են սարքե: ՉՆայած թալանն ակնհայտ և, սրանցից ոչ մեկին չդատեցին, ու սրանց թալանածից ոչ մի բան հետ չուզին:

13.2բ – Ռազմական գործի ուսուցումը դպրոցում ու բուհում

Մեր դպրոցներում՝ սկսած 8-րդ դասարանից մինչև 12-րդ դասարանի առաջին կիսամյակը, ռազմագիտություն են դասավանդում: Դասավանդողները պահեստի սպաներ են: Ոչ մեկը չի հարցնում, թե ոնց և էս գործն արվում, ինչ են սովորում աշակերտներն էս դասերին, ինչ խորությունով են:

Իհարկե, Կրթության եւ գիտության նախարարության հրատարակած դասագրքերը կան, կան մեթոդական ուղեցույցներ ու չափանիշներ, ոնց որ մնացած առարկաներից (նույնիսկ ֆիզկուլտուրայից, ինչը ծիծաղելի և ու արտառոց), բայց, ըստ էության, սրանք անօգուտ են ու շատ անգամ էլ՝ վնասակար:

Ռազմագիտության դասերը մեծ մասամբ գրույցներ են, շատ անգամ տնային գրավոր հանձնարարություններով (բա՛), իսկ առավելագույնը՝ շարային պարապմունքներ են:

Չրույցների բովանդակությունն ու խորությունը կախված և ուսուցչի ինտե-

լեկտի մակարդակից, ինչը (միջինով) չի փայլում, Էն Էլ շատ մեղմ ասած, ու սրանց հիմնական նպատակը աշակերտներին կեղծ «նազմահայրենասիրական ոգով» դաստիարակելն ա, Է՛ն տեսակ դաստիարակելը, որ Էս Էրեխեթը հետո «միաբանվեն ու դառնան ազգ-բանակ»:

Պարզ չի՞, որ Էս դասերը Էրեխեթի «ուղեղը լվալու» դաս պիտի լինեն, ճիշտ ոնց որ մեր դպրոցի հայ եկեղեցու պատմության դասերը, որ, ըստ Էուբայան, կրոնի դաս են, ինչն անթույլատրելի ա իրան 21-րդ դարի քաղաքակիրթ հայտարարած աշխարհիկ պետության համար:

Գաղափարախոսության առումով ինչ Է՛լ անցնես դպրոցում, լրիվ անօգուտ կըլնի ու զրո արդյունք կունենա, որովհետեւ Էդ Էրեխեն, արդեն հենց դպրոցում, տեսնում ա, որ իրան տված քարոզն ու իրականությունը լրիվ տարբեր են:

Ուրեմն, Էս «նազմահայրենասիրական ոգով» դաստիարակության արդյունքը, ամենաշատը, պիտի ըլնի Էրեխեթին Էրկու Էրեսանի դարձնելը, այսինքն՝ կրկնակի ստանդարտներով ապրելը, որովհետեւ Էս ձեւ դաստիարակվածը հոգու խորքում լավ գիտի, որ Էս քարոզը սուտ ա, բայց տեղն ընգած տեղը պիտի հենց Էս քարոզի դրույթները թուրթակի պես արտասանի, որ համ թուրթումուր չուտի, համ Էլ հաջողություն ունենա:

Կյանքից հզոր ուսուցիչ Էս առումով (ու նույնիսկ մյուս առարկաների առումով Էլ), չկա՛:

Դպրոցում աշակերտին ինչքան Էլ «նազմահայրենասիրական ոգով» դաստիարակես, մեկ ա, հենց որ Էդ Էրեխեն գնաց բանակ ու տեսավ, որ (ոչ «խառնոչ») գինվորն ամենաստոր աստիճանի մի ճորտ ա ու ապրում ա անասնական պայմաններում, հիվանդանում ա դիզենտերիայով ու հազար ու մի ուրիշ ախտով, անընդհատ ծեծ ա ուտում, բռնաբարվում ա՝ Էս բառի բուն իմաստով, հասնում ա ինքնասպանության

կամ հլու հնազանդ անասունի վիճակի, կամ դառնում ա մի խառնոչի ստրուկը, դպրոցի իր «նազմահայրենասիրական» դասերից թե որ չզգվեց Էլ, ամենաքիչը համոզվելու ա, որ իրան խաբել են, խաբել են ամենաստոր ձեւով:

Կամ Էլ, Էս ամենից ազատվելու համար, հենց ինքն ա դառնալու զազան (այսինքն՝ անբարոյության կրող ու աղբյուր): Ու եթե մի օր սրան ասեն. «Գնա՛, կյանքդ տուր հանուն հայրենիքի», ու սա Էլ կանգնի ու ասի. «Ձեր հայրենիքի Էլ՝ ըսենց-ընենցը», ի՞ր մի հասկացող ու կյանքի փորձ ունեցող ազնիվ մարդու բերան կբացվի, որ մեղադրի սրան:

13.2գ – Ազգ-բանակի ռեֆորմը

Հիմա մեր Էս ազգ-բանակ ստեղծողների ռեֆորմի մասին, որ պիտի շուտով անեն մեր բուհերում: Մերոնք որոշել են, որ մեր ուսանողները շաբաթվա մի օրը բուհում ռազմագիտություն անցնեն ու դառնան սպա: Սովետի օրերին, Խրուշչովի հրամանով ու կարգը կար, բայց փորձը ցույց տվեց, որ բուհ ավարտած սպայի ռազմական գիտելիքներն ուղղակի չնչին են:

Էսօրվա իրավիճակում դժվար չի համոզվելը, որ ապագա բուհ ավարտող սպան, անկասկած, շատ ավելի չնչին գիտելիք կունենա, քան նույնիսկ Սովետի օրոք, մանավանդ եթե հաշվի առնենք մեր Էսօրվա համատարած ապականությունը (կոռուպցիան):

Մերոնք անընդհատ ասում են, թե տեսեք, Շվեյցարիայում բոլորին տանում են բանակ 19 տարեկանից, ու սա չի խանգարում իրանց կրթությանը, ու Շվեյցարիան իսկական ազգ-բանակ ա:

Բայց Շվեյցարիայում 19 տարեկանին բանակ տանելը հեչ չի խանգարում դրա թե՛ ընթացիկ, թե՛ ապագա ուսմանը, որովհետեւ չնայած շվեյցարական ջահելին բանակ են տանում 8 անգամ 10 տարվա մեջ, բայց ամեն անգամը տա-

նում են 21 օր, ինչն ավելի շուտ մի համարյա տարեկան կարճ արձակուրդ ա, ու լավ էլ «ցրում ա» ուսանողին իր ուսումնական չարչարանքից:

Մեր մոտ բանակ են տանում երկու տարով, ու տանում են ջահելի հենց է՛ն տարիքում, որ սովորելու համար ամենաօպտիմալն ա, ու էդ ընթացքում կամ ջահելի սովորելու հավենն ա փախնում, կամ նոր բան յուրացնելու գորությունն ա բջանում, կամ էլ՝ էս երկուսը միասին:

Մեր էսօրվա ռազմագիտության ուսուցումը թե՛ դպրոցում, թե՛ բուհում, ա՛նկալյալն անարդյունք ա, ու անկալյալն վնասակար ա:

13.2դ - Նախկին զինվոր ՍՏԲԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ պատմածը մեր ազգ-բանակի մասին.

Բ Ա Ր Ո Յ Ա Ջ Ո Գ Ե Բ Ա Ն Ա Կ Ա Ն Մ Յ Ն Ո Ւ Ր Տ Ը Բ Ա Ն Ա Կ Ո Ւ Մ 2000 - Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Ն

Որդիս ծառայել ա մեր բանակում 1994-1996 թվերին, թեժ կետերում ու սահմաններին, ու ասեց, որ էս շարադրանքը, հիմնականում իրողությունն ա: Ստեփանի շարադրանքին ձեռ չեմ տվե: Չեմ հավատում, որ էսօր էական փոփոխություն եղած ըլնի, որովհետև հենց ինքը՝ երկիրը չի փոխվե, չի փոխվե երկրի անբարո կարգը:

«Հիտլերի ժամանակով գերմանական ազգը պատերազմի մեջ էր ու իբր տեղյակ չէր, թե ինչ ա տեղի ունենում. «չգիդեր», որ համակենտրոնացման ճամբարներ կան Գերմանիայի տարածքով մեկ... «Զգիդեր»... Բայց հիմա նման Հիտլեր չկա, պատերազմն էլ ակտիվ փուլից անցել ա դիրքայինի, զինադադարի ռեժիմ ա:

Իսկ ազգը չի՛ իմանում, որ ԲԱՆԱԿ կոչվածը մի հսկա համակենտրոնացման ճամբարային սիստեմ ա իրանից ներկայացնում...: Չի՛ հասկանում, որ էդ ստե-

ղծված բանակը իրա օրակարգի ամեն մի կետով, բառապաշարով ու մնացած մասնիկներով ծերից ծեր հանցագործ ռեժիմով ա ապրում... Արդյունքում ամեն շաբաթ ԱԶԳԸ դիակ ա ստանում ԲԱՆԱԿ կոչված կառույցից:

Էդ իրան չի՛ հուշում, թե ինչից են էդ դիակները գոյանում... Երբ մտնում ես գորամաս, այսինքն՝ նույն գաղութը, գլխումդ ունես էն ինֆորմացիոն պաշարը, որ բերել ես քաղաքացիական կյանքից, բայց դու էդ պաշարի մասին միանգամից ես մոռանում: Քո հետեւից փակվող դարպասներից դուրս դու թողում ես քո քաղաքացիական կյանքը, քո նախասիրությունները, կենցաղը, առօրյան, շփումները, ավելի գլոբալ ասած՝ քո «ԵՍ»-ը: ԴՈՒ ԱՅՍՈՒՐՅԵՏ ԶԵՉ ՉԵՍ ՊԱՏԿԱՆՈՒՄ:

Էդ վերաբերվում ա բոլորին՝ անկախ իրանց ով ըլնելուց: Բացի էդ, քո վրա գորամաս գալուց առաջ արդեն «աշխատած» են ըլնում քաղաքացիական կյանքում քո ընկերներն ու մերձավորներից նրանք, ովքեր ծառայել են բանակում: Ու էդ խորհուրդները, որ տալիս են վերջիններս, ընենց տպավորություն ա ստեղծում, որ կարծես իրանք իրանց կյանքով մեկ «գանգստեռ» են եղել:

Լավ, էդ մի կողմ: Պարծենկոտությունը անուղղելի հատկանիշ ա ոմանց մեջ: Ինչեւէ, մտար գորամաս՝ արդեն ուղեղիդ վրա մի քանի օր առաջ նստըցրած են ըլնում քո մերձավոր ընկերներն ու ախպերները մի ծրագիր:

Բայց չի անցնում մի քանի րոպե չաստ մտնելուց հետո, երբ զգում ես, որ էդ ծրագիրը քո ուղեղի ու բնույթի համար չի: Նայում ես, քո նման մարդիկ, արդեն համազգեստով, քո նման նորակոչիկներ են: Մեկի դեմքը մտահոգ, մեկինը՝ լարված, մյուսը՝ լրիվ շոկի մեջ, էն մյուսը բռնաբարվող չգիտի, թե ուր ա գտնվում, էն մյուսը տեղում ա, բայց՝ բացակա... Իսկ քո սեփական դեմքի արտահայտությունից հեջ խաբար չես...

Մի խոսքով՝ հազար ու մի տեսակ դեմքեր են, որոնք արտահայտում են մեծամասամբ վատ քողարկված հուզմունք, վախ, անորոշություն ու անհայտություն: Ու ամենակարեւոր զգացողությունը ու ներքուստ հարցը հետեւյալն ա. ԲԱ ՅԵՏՈ՞՞... Դեմքերի մեջ կտեսնես ինքնավստահ, խորամանկ, լկտի հայացքներ, շուստրի ասիչության պոտենցիալով աչքեր, որոնք ման են գալի իրա համար մի հատ ծանոթ դեմք, որը կարա իրա գոհը ըլնի, քանի որ փողոցային կյանքում հեջ աչքի չի ընկել ու խելոք մարդու տպավորություն ա թողնում...

Մենակ որոշ ժամանակ հետո դու կիմանաս, որ եղ գյադեն գնդում ծանոթ բարեկամ աֆիցեր ունի կամ հոր ընկեր աֆիցեր... Դրանք միաժամանակ լավ ֆիզիանամիստներ են. դեմքին նայելով՝ «ախտորոշում» են, թե ով ինչի ա ընդունակ: Տիպիկ գաղութային-մենթական-հոգեբանական մոտեցում:

Ու պատահական չի, որ նմանները բանակից հետո համալրում են ոստիկանության շարքերը: Բանակում քո կողքի զինվորին դու բնականորեն ընդունում ես որպես քո նման՝ մարդ ու քո համար անհասկանալի ա ըլնում, թե խի պոտի դու քո համար անձնական ստրուկ ունենաս... Ո՞ր դարն ա, որ մարդ իրա համար ստրուկ պահի... Խի պոտի քո համար դիմացիկիդ ըսենց ասած՝ «հարիֆի» սարքես, քո փաստացի ճորտը...

Ես հասկացա բանակում, որ եթե դու Էն մարդը Էդար, Էն «խառնչի տղեն» Էդար, որը կարողա իրան ստրուկ պահի, ուրեմն Էդ քո ուղեղին նստըցրած ծրագիրը ճիշտ հասցեատեր ունի՝ հանձին քեզ: Բայց եթե դու ստրուկ չկարացար պահես, ուրեմն դու ես դառնում ստրուկ, իսկ «չեզոք» անձ բանակում հեշտ բան չի ըլնելը, թեւե կային նման մարդիկ:

Կարաս ինչ-որ մի կատեգորիայի պատկանես, բայց՝ չեզոք, այսինքն՝ մնաս որպես գոնե ինքդ քո համար «ՄԱՐԴ»՝ անհնարին բան ա: Զեզ «ծրագրավոր-

ած» քո ընկերները ասել էին, որ բանակում ես բանը ըսենց ա, բայց դու հակառակը պոտի անես:

Իսկ Էն հարցին, թե ԻՆՉԻ՞, տալիս են մենակ մի պատասխան՝ ԷՏԻ ԲԱՆԱԿ Ա... Բա հիմնավորումները... Հիմնավորումներ երբեք չես լսի, բացի անգիր արած՝ «ԷՏԻ ԲԱՆԱԿ Ա» տիմարությունից: Այնինչ, ասելով ու կրկնելով «ԷՏԻ ԲԱՆԱԿ Ա», դու անառարկելիորեն կամ համաձայնվում ես ըլնել ստրուկ, կամ համաձայնվում ես ըլնել ստրկատեր, կամ էլ՝ տանել շատ անգամ անտեղի ստորացումներ ու գրկանքներ:

Մեր դեպքում բանակի գլխավոր ֆունկցիան Էդ ժողովրդի անվտանգությունը պաշտպանելը չի, այլ նրա վրա կրակելն ա, երբ որ կըլնի ըտենց մի հրաման: Ու կրակողը սպայությունն ա, այլ ոչ թե հասարակ զինվորը, ով սպայության նման դիրքի համար զգվառուքի մեջ չի գտնվում ու ոչ էլ վարձատրվում ա սպայության նման:

«Հայրենիք» կոչվածը երբեւե նման տեսակ գրկանքներ ու հարաբերություններ չի պահանջել:

Ըստ Էության, Էդ ստորությունները մարդ արարածը բանակում պետք ա տանի հանուն ստորանալու: Էդ ստորությունները պետք ա տեսնի ու զզվի՝ հանուն տեսնելու ու զզվելու:

Էդ տեսակ բանակը պետք ա վերացվի: Բանակը իրանց որպես գուլագ ու գաղութ, որպես հանցագործ ինստանցիա, պետք ա, որ երկրի ամբողջ արական բնակչության հոգին խեղեն: Էդ հատուկ ա մտածված:

13.2ե – Կդառնանք ազգ բանակ

Շվեյցարիայի պես ազգ-բանակ դառնալու համար նախ բոլորս էլ պիտի «դառնանք շվեյցարացի», այսինքն՝ բոլորս էլ շվեյցարացիների պես պիտի միաբանվենք արդար ու իսկական բարոյակարգով երկիր ստեղծելու գաղափարի շուրջը ու ստեղծենք Էդ երկիրը:

Մեր ես նոր ռեֆորմատորները ծպտուն անգամ չեն հանում մեր բանակի էսորվա անբարո ախտերից, զինվորների ես թշվառ ստրկական վիճակից, խոշոր զինվորականների ես ահռելի թալանից, ու մենակ հայտարարում են, որ հենց մեր ուսանողները բուհերում շաբաթը մի օր ռազմական գործ ուսումնասիրեն ու դառնան սպա, կդառնանք ազգ-բանակ:

Սրանից առաջ մեր կառավարությունն ու Ազգային ժողովը ազգ-բանակ դառնալու մի խայտառակ քայլն արդեն արել են՝ աշխատողներից ամիսը 1000-ական դրամ հարկ պահելու օրենքով: Ընդ որում, պետական այրերն էս քայլը հիմնավորելուց ասում էին. «Հիմի էլ թո ժողովուրդը պահի իր զինվորներին», մոռանալով, որ մեր զինվորներին միշտ էլ ժողովուրդն աս պահե:

Ես բան չպատմեցի Իսրայելի «ազգ-բանակի» մասին (որովհետեւ սրա մասին ահագին բան գիտենք), որն իրոք հզոր աս ու իր երկրի թշնամիներին արժանի կայծակնային հակահարված աս տալի:

Իսրայելցիք մտածում են, որ իրանց երկիրն անընդհատ պատերազմի մեջ աս: Սրա համար էլ իրանց հզոր բանակը ամեն պահի մարտական վիճակում աս:

Բա իսրայելցիները կհանդուրժեին, որ իրանց թշնամի արաբները համարյա օրը մի իսրայելցի զինվոր սպանեին:

Հիմի որ մենք մեր համալսարաններում ռազմագիտություն անցնենք ու սպա պատրաստենք ու էդ սպաներով համալրենք մեր բանակը, մեր օրական զոհերի թիվը կպակասի, կամ դրանք կվերանան: Մեր բանակի զինվորների սպանությունների ու ինքնասպանությունների թիվը կպակասի, կամ դրանք համարյա կվերանան:

Ով հավատա, էս չեմ հավատա:

Մեր բանակի օրական զոհերի պատճառը մեր սպաների թվի կամ դրանց կրթության պակասն աս, թե մեր իշխանավորների ու բարձրագույն սպայական կազմի հանցավոր տգիտությունը, վա-

խկոտությունը, այլանդակ անբարոյությունն ու ռուսների առաջ իրանց ստորաբարշտությունը ու, սրանց հետեւանքով, մեր բանակի թուլությունը:

Հիմի էլ մեր էս այրերը ուզում են, որ Հայաստանի ողջ ժողովուրդը դառնա ազգ-բանակ, էս էլ՝ Շվեյցարիայի կամ Իսրայելի պես: Բայց վերը տեսանք, թե մեր բանակի վիճակն ինչքան աս դժոխային: Ու էսօր **մեր իշխանավորներն ուզում են, որ մեր ողջ ժողովրդի վիճակն ըլնի մեր բանակի զինվորների վիճակի ճիշտ պատճենը, այսինքն, որ մեր երկիրը լրիվ դառնա մի դժոխք մեր ժողովրդի մեծ մասի համար:**

Մի պրոբլեմը հո հաստատ կվերանա՝ ընտրությունների պրոբլեմը, որովհետեւ ժողովուրդն արդեն կքվեարկի ճիշտ մեր զինվորների պես, այսինքն՝ շարքով, կլու հնազանդ ու կամանդիրի հրամանով:

Թե «չդառանք շվեյցարացի» ու բարոյակարգով երկիր չստեղծիք, ոչ թե ազգ-բանակ կդառնանք, այլ՝ ազգ-գող կամ ազգ-թալանչի կամ ազգ-կաշառակեր կամ ազգ-սրիկա, կամ ազգ-ստրուկ, կամ ազգ-տականք, թե որ մինչեւ էդ քարտեզի վրից չանհետանանք:

13.2գ - Միաբանվելու գիևը

Մի կարելոր հարցից համարյա չեն խոսում՝ երեւի բնագործ զգալով, որ ամոթ աս:

Միաբան ազգ-բանակի կողմնակիցներն ու քարոզիչները շատ անգամ են հայտարարում, թե պատերազմի վախտը անմարդկային գազանությունները անխուսափելի ու անհրաժեշտ բան են:

Օրինակ՝ Ղարաբաղի պատերազմի օրերին, երբ լսում էինք, որ մեր զինվորներն էլ են 1915 թվի երիտթուրքերի պես գազանություն անում՝ ըլնի ադրբեջանցի գերի զիվորների կամ խաղաղ բնակչության նկատմամբ, ընկերներիցս շատն ասում էր, թե «ճիշտ են անում, թուրքը արել աս, մերոնք էլ պտի անեն»:

Իսկ ընկերներիցս ավելի «առաջադեմներն» ասում էին. «Պոտի մերոնք էլ տեսց անեն, որ թուրքի աչքը վախենա»:

Իհարկե, ես չեմ ասում, որ հայ զինվորն էլ պիտի կուրսիստկայի պես բարեկիրթ շարժուճեւ ունենա: Պատերազմն ինքնին դաժան բան ա, բայց միջազգային ընդունված նորմերը խախտելն անհանդուրժելի ա ու կործանարար, կործանարար ա համարյա միշտ, կործանարար ա համ էլ հենց հաղթող երկրի համար, ինչքան էլ ասածս պարադոքս թվա:

Չինվորը մտում ա զինվոր, տղամարդն էլ պիտի մեծ մասամբ անպայման զինվոր ըլնի, ու իմ կարծիքով ահավոր ամոթ էր, երբ ընդամենը մի քանի հրացանավոր թուրք հազարներով հայ էին քշում Դեր Չորի անապատները, ու ես հազարները ոչխարի հնազանդությունով գնում էին մահի:

Սրանց մեջ էլ հարյուրներով հասուն տղամարդ կար, ովքեր, հաստատ իմանալով, որ իրանց բոլորին էլ կոտորելու են, չէին շուռ գալի ու իրանց կյանքի գնով չէին հարձակվում էդ մի քանի թուրք զինվորի վրա ու չէին կոտորում դրանց, որ փրկեն իրանց էրեխեքին, մերերին, հերերին ու կանանց:

Բայց սա ուրիշ բան ա, ու լրիվ ուրիշ բան ա, երբ հայ զինվորներից ոմանք բռնաբարում էին մանկահասակ ազերի աղջիկներին:

Երբ ասում էի, թե ես կարգի գազանություն անող հայ զինվորն էլ արդեն մարդ չի, որովհետեւ ինքն արդեն խախտել ա մարդկայնության սահմանները, ինձ առարկում էին ու ասում, թե դա հարկավոր դժանությունն ա:

Իրանք ասում էին «ոչինչ, թո մենակ հաղթենք, ամեն ինչ լավ կըլնի»:

Ես ասում էի. «ախր էդ վախտն ինչ տարբերություն կմնա մեր ու գազանացած թուրք զինվորի մեջ: Ասում էի. «Բա արժի, որ հաղթենք, բայց դառնանք գազան թուրք կամ գերմանացի գազան ես-

Եսական, բա ես տեսակ գինը արժի հաղթանակին»:

Ընկերներս չէին համաձայնում, ու դրանց մեջը էլի մարդ կա, ով նորից համաձայն չի ասածներիս: Մարդ կա, ով նույնիսկ ասում էր (հմի էլ ասող կա), թե բոլոր թուրքերին պիտի սպանենք, բոլորին անխտիր, անկախ իրենց տարիքից ու սեռից: Յանի, թուրքի մեջը գազանության գենը է՛ն գլխից էլ կա:

Ասում էի, թե ախր մոռանում եք, որ երբ պատերազմը վերջանա, էդ կարգի մարդիկ ետ են դառնալու ու մեր հետ են ապրելու, ու դրանք մեր հետ էլ են վերաբերվելու, ոնց որ թուրքի հետ են վարվել: Դրանք արդեն իրանցից թույլ ամեն մեկին, հենց մեզ է՛լ են համարելու ոչնչություն, մեզ է՛լ են տանջելու, ստորացնելու, սպանելու:

Հազար ախոս, բայց կյանքը ցույց տվեց, որ ճիշտ էի:

Էդ գազանացած հայ զինվորականները պատերազմից հետ էկան, ու դրանց զգալի մասը մտավ մեր ուժային կառույցները, մանավանդ մեր ոստիկանությունը կամ դառավ թրաշագուխ ու հաստավիզ թիկնապահ ու «ախրանիկ»:

Իսկ ավելի ճարպիկ մասը դառավ քաղաքօծիչ ու խոշոր պաշտոն գրավելով՝ բազմապատկեց պատերազմի վախտն արած իր թալանը: Սրանց մեջ քիչ չեն համ էլ բարձրաստիճան սպաները, գնդապետներն ու գեներալները:

Ու մեր էսօրվա համատարած ապական իշանավորների ու պետական անբարո կարգի հիմնական պաշտպան ու նեցուկը հենց սրանք են ու սրանց սերունդները, ում սրանք դաստիարակել ու մեծացրել են հենց իրանց «արար ու պատկերով»:

Շատ անգամ միաբան ազգ-բանակ ստեղծելու գինը հենց ես կարգի բաներն են:

Հայը պիտի նախեւառաջ մարդ ըլնի, հետո նոր հայ: Հակառակը կարող ա լրիվ սխալ ըլնի:

Երբ նպատակին հասնելու միջոցների մեջ ոչ մի խտրություն չես դնում, նպատակն ա՛նպայման ես սպանում»:

(Ազգ-բանակ թեմայի շարունակությունը՝ հաջորդիվ)

Меружан Арутюнян

Что будем делать с объединением?

Эта статья, “Что будем делать с объединением?” относится к лозунгу: “Мы все должны обязательно объединиться и стать нацией-армией, поэтому нам нужна национальная идеология, объединяющая нас для того, чтобы противостоять вековым угрозам, окружающих нас.” Показано, что идея национальной объединяющей идеологии ошибочна, антидемократична и пагубна, если только она не призывает объединиться вокруг тех основных моральных и правовых нормах, на которых основано открытое гражданское демократическое общество. Приведены несколько исторические и современные примеры, показывающие, что построение нации-армии всегда было пагубно для данной нации. В конце статьи приведена краткая перечень великих либертарианцев – Людвиг фон Мизеса и Фридриха Августа фон Хайека на английском и русском, чтобы армянский читатель имел возможность познакомиться с основными либертарианскими идеями.

Meruzhan Harutyunyan

What Are We to Do with Unity?

The paper, *What Are We to Do with Unity?* deals with the slogan, “we must unite and become a nation-army, and he-

nce we need a national ideology uniting us, to oppose all the perennial dangers besieging us.” It is shown that the idea of national unity is entirely false, antidemocratic and disastrous unless it calls to unite for the basic moral and law rules upon which a civil or open and democratic society is founded. A few historical and modern examples are presented to show the fatal consequences of going astray from the libertarian principles and building an army-nation which has always been destroying the given nation. At the end of the paper a brief list of a few works by the great libertarians, Ludwig von Mises and Friedrich August von Hayek, is presented—in English and Russian—for the Armenian general reader to get acquainted with the main libertarian ideas.

Թուրքիայում PKK-ի դեմ պայքարի արդի փուլը



ՀԱՅԿ ՉԱՐԻԻՆԵՐ

Թուրքագետ

Նախաբան

Քրդստանի աշխատավորական կուսակցությունը (PKK) Թուրքիայում՝ որպես սոցիալիստական ձախ կուսակցություն, ստեղծվել է 1978 թվականին: 1980թ. սեպտեմբերի 12-ին, երբ գրանցվեց Թուրքիայի պատմության մեջ ամենաարյունալի ռազմական հեղաշրջումը, ձերբակալվեց PKK-ի գրեթե ողջ ղեկավարությունը: Սակայն PKK-ի հիմնադիր Աբդուլլահ Օջալանին (Ափո) ու նրա մի շարք կուսակիցների հաջողվում է փախչել Սիրիա: Այնուհետև զանգվածային բռնություններ են սկսվում բուրդ բնակչության դեմ, եւ 1984-ին Թուրքիայում բռնկվում է PKK-ի դեմ զինված պայքար: Հայտնի է, որ այդ դիմակայությունում երկու կողմից զոհվել է շուրջ 50.000 մարդ: Կարծիքներ կան, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո անցած մեկ դարում Թուրքիան ամենաշատ կորուստները կրել է հենց PKK-ի դեմ պայքարում¹:

1984թ.-ից ձեռք են բերվել մի շարք հրադադարներ, որոնցից վերջինը 2013թ. էր, երբ PKK-ը սկսեց լքել Թուր-

քիան: Սակայն երկրի կառավարությունը չկատարեց քրդերին առնչվող բարեփոխումները, ու 2015-ին խախտվեց վերջին հրադադարը: Նույն թվականի հուլիսի 20-ին Թուրքիայի քրդերը հավաքվեցին հարավարեւելյան Շանլուրֆա նահանգի Սուրուչի շրջանի մշակութային կենտրոնում՝ պատրաստվելով մեկնել Սիրիա եւ օգնել ԻՊ-ի գործողություններից տուժած քրդերին: Սակայն շենքի մուտքի մոտ գրանցված պայթյունի հետևանքով զոհվեց 34, վիրավորվեց 104 մարդ: Թուրքական իշխանությունները պայթյունի պատասխանատվությունը դրեցին ԻՊ-ի վրա: Պայթյունից 2 օր անց նույն նահանգի Ջեյլանփընար քաղաքում սպանվեց 2 ոստիկան, որի պատասխանատվությունը, թուրքական մամուլի պնդմամբ, ստանձնեց PKK-ը՝ դա կապելով Սուրուչի պայթյունի հետ եւ ոստիկաններին մեղադրելով ԻՊ-ի հետ համագործակցության համար: Սակայն PKK-ի ղեկավարներից Մուրադ Քարաջըլանը հայտարարեց, որ ոստիկանների սպանության պատասխանատվությունը ստանձնել է «Ափոյական ֆիդայիներ» խումբը, որը գործում է կուսակցությունից անկախ²:

Թուրքիայի իշխանությունները ոստիկանների սպանությանը պատասխանեցին Հյուսիսային Իրաքում (Ղանդի) PKK-ի ճամբարների ռմբակոծմամբ: Այդպիսով՝ խախտվեց ավելի քան 2 տարի տևած հրադադարը, որում էական դեր խաղացին նաեւ 2015թ. հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքները, որոնք հատկանշական էին 2 առումով. ա) իշխող ԱԶԿ-ն իր պատմության մեջ առաջին անգամ չստացավ միակուսակցական կառավարություն ձեւավորելու իրավունք (258 պատ-

գամավորական մանդատ՝ անհրաժեշտ 276-ից), ք) քրդամետ «ժողովուրդների դեմոկրատիա» կուսակցությունը (ԺԴԿ) հարթահարեց 10%-ի ընտրաշեմը՝ ստանալով 80 մանդատ: Սա իսկապես աննախադեպ էր: Բացի դրանից, «Ազգայնական շարժում» կուսակցությունը (ԱՇԿ) նույնպես զգալիորեն բարելավեց իր ցուցանիշները՝ ստանալով նույնպես 80 մանդատ: ԺԴԿ-ի ու ԱՇԿ-ի այս ձեռքբերումները հիմնականում ԱԶԿ-ից քվեներ տանելու հաշվին էին, ինչի համար էլ երկու կուսակցություններն էլ հայտնվեցին թուրքական իշխանությունների թիրախում:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի հրահանգով ԱԶԿ-ը կոալիցիա չկազմեց խորհրդարան անցած որևէ ուժի հետ, եւ նոյեմբերի 1-ին նշանակվեցին կրկնական ընտրություններ: Այդ կարճ ժամանակն իր օգտին բեկելու համար իշխող կուսակցությունը գնաց արմատական քայլերի, որոնցից մեկը PKK-ի դեմ ռազմական գործողությունները վերսկսելն էր: Դա միտված էր թե՛ ԺԴԿ-ի (նրա ընտրազանգվածի պառակտմանը, նոր ընտրարշավի խոչընդոտմանը), թե՛ ԱՇԿ-ի (ավելի ազգայնամոլական դիրքերից հանդես գալու, նրանից քվեներ տանելու առումով) դեմ: Թուրք փորձագետ Ումուր Թալուի խոսքով՝ PKK-ի հարցում ԱՇԿ-ը խոսում է, իսկ ԱԶԿ-ը՝ ռմբակոծում:

Արդյունքում 2015թ. նոյեմբերի 1-ի կրկնական ընտրությունների արդյունքներով ԱԶԿ-ը խորհրդարանում ստացավ արդեն 317 մանդատ, մինչդեռ ԺԴԿ-ի մանդատների թիվը նվազեց մինչև 59-ի, իսկ ԱՇԿ-ին կրճատվեց երկու անգամ՝ մինչև 40-ի³: Եվ, վերջապես, ինչպես 2016թ. փետրվարին դիպուկ նկատել է Մուրադ Զարայըլանը, PKK-ի դեմ ռազմական գործողություններ վերսկսելու պատճառներից մեկը Սիրիայի քրդերի ռազմական հաջողություններն են. «Թուրքական իշխանությունները կար-

ծում են, որ եթե Սիրիայի 3 մլն քրդերը ստանան անկախ պետություն, ապա այստեղ ապրող 20 մլն քրդերը նույնպես կձգտեն հասնել դրան»: Նոյեմբերյան ընտրություններից հետո PKK-ի դեմ պայքարը բորբոքվեց նոր ուժով:

PKK-ի դեմ պայքարի առանձնահատկությունները

PKK-ը իջել է քաղաքներ

PKK-ի դեմ պայքարի նոր փուլն աչքի ընկավ նրանով, որ վերջինս սկսեց իջնել քաղաքներ, իսկ թուրքական կողմը չխորշեց քաղաքներում կիրառել ծանր սպառազինություն: Դրա հետեւանքով Թուրքիայի հարավ-արեւելքում ավերվեցին շատ քաղաքներ, որոնք սկսեցին հիշեցնել Սիրիայի ավերված քաղաքները, մոտ 350.000 մարդ դարձավ փախստական: Բացի դրանից, թուրքական օդուժը երկրի ներսում նույնպես հարվածեց հակառակորդի ակտիվ գործունեության շրջաններին: Ի պատասխան՝ PKK-ը մեծացրեց ակնապատ ավտոմեքենաներով ոստիկանատների ու զինվորականների դեմ հարձակումների գործելակերպը:

Քաղաքական, տնտեսական ու սոցիալական հետազոտությունների հիմնադրամի (SETA) տվյալներով՝ 2015թ. օգոստոսի 2-ից մինչև 2016թ. օգոստոսի 25-ը PKK-ն իրականացրել է 488 հարձակում, որի 7%-ը՝ 35 հարձակում, կատարվել է ակնապատ մեքենաներով: 35 հարձակումների 31%-ը կատարվել է մահապարտների, մնացյալ 69%-ը՝ թիրախի մոտ կայանված մեքենաների պայթեցման միջոցով: 35 հարձակումներից 26-ն ուղղվել է ֆիքսված, իսկ 9-ը՝ շարժական թիրախների դեմ: Սովորաբար ճանապարհների եզրերին տեղադրվում է 200-250 կգ պայթուցիկ նյութ, նման դեպքերում թիրախում գտնվում է 1 զրահապատ մեքենա: Մինչդեռ 1500

կգ պայթուցիկով բեռնված փոխադրամիջոցով հարձակման պատճառած վնասը, մարդկային կորուստները շատ ավելի մեծ են: Հարձակումները գրանցվել են Իգդիրի, Հաքքարի, Մարդինի, Դիարբեքի, Ադրբի, Շըրնաքի, Վանի, Թուրքմենի, Էլազըղի նահանգներում: Դրանց 46%-ը բաժին է ընկել ժանդարմերիայի պահակակետերին, իսկ 30%-ը՝ ոստիկանատներին: Ընդ որում՝ ՔԿԿ-ը նմանատիպ առաջին հարձակումը ձեռնարկել է 2011թ. սեպտեմբերի 20-ին Անկարայում, ինչից հետո մինչև 2013թ. հրադադարը ձեռնարկել է միայն 2 այդպիսի հարձակում՝ 2012թ. մայիսի 25-ին Զայսերի նահանգի Փընարբաշը քաղաքում եւ 2012թ. օգոստոսի 20-ին Գազիանթեփ քաղաքի մոտ: Այդ հարձակումներն իրականացվել են 1 միկրոավտոբուսի ու 2 ավտոմեքենայի միջոցով⁴:

2016թ. Զարայըլանը հայտարարեց, որ ՔԿԿ-ը քննարկում է մարտավարության փոփոխման հարցը. «ՔԿԿ-ը չի մղում դասական պատերազմ: Անկասկած է, որ մեզ համար քաղաքային պատերազմը շատ ռիսկային է այլ է: ՔԿԿ-ի գործողությունների հիմքը մշտապես եղել է գյուղական տեղանքը. նրա պարտիզանական ջոկատներն իրենց վերահսկողության տակ են առել հենց գյուղական տեղանքը: Սակայն ներկա պայմանները թելադրում են մարտավարության փոփոխման անհրաժեշտություն: Թուրքական պետությունը լայնածավալ պատերազմ է վարում քրդերի դեմ՝ խաղաղ քաղաքացիների դեմ օգտագործելով ծանր սպառազինություն: 21-րդ դարում Թուրքիան հրետակոծում է մի քանի հազար տարվա քաղաքներ, ոչնչացնում տարածաշրջանի պատմամշակութային ժառանգությունը: Այսօր նման բախումներ տեղի են ունենում նաեւ Սիրիայում, սակայն այնտեղ վարչակարգի դեմ պայքարողներն ունեն տանկեր, զնդացիրներ, զրահապատ մեքենաներ: Նրանք զինված են մի շարք երկրների զինծառայող-

ներից ոչ վատ, նրանց թիկունքին կանգնած են լուրջ ուժեր: Մինչդեռ Ջիզերում թուրքական իշխանությունների կամայականությունների դեմ պայքարողներն ունեն միայն «Կալաշնիկով» տիպի ինքնաձիգներ, որսորդական հրացաններ ու Մոլոտովի կոկտեյլներ: ՔԿԿ-ը պաշտպանական պայքար է մղում միայն նրա համար, որ ԱԶԿ-ը քուրդ խաղաղ բնակչության դեմ իր ֆաշիստական հարձակումներով պարզապես չի թողել ընտրության հնարավորություն»⁵:

2016թ. հունիսին Թուրքիայի խորհրդարանը երկրի արեւելքում «հակասահաբեկչական գործողության» մասնակիցներին շնորհեց իրավական անձեռնմխելիություն՝ ազատելով սահմանադրության դրույթները խախտելու համար քրեական հետապնդումից, եթե հետաքննությունն անմիջապես չի արտոնել երկրի քաղաքական կամ բարձրաստիճան զինվորական ղեկավարությունը: Բանակն ու հատուկ ծառայությունները ստանում են հավելյալ լիազորություններ: Նոր օրենքն ունի հետադարձ ուժ, որով պատասխանավորությունից ազատվում են 2015թ. հրադադարի խախտումից հետո հանցանքներ գործած զինծառայողները⁶:

2015թ. հուլիսի 22-ից ցայժմ ՔԿԿ-ի դեմ պայքարում սպանվել է թուրքական անվտանգության ուժերի ավելի քան 1000 ներկայացուցիչ: Ըստ ամենայնի, այս թվերը բավական նվազեցված են, եակնորեն տարբերվում են ՔԿԿ ներկայացրած տվյալներից, ինչը միտված է թուրք հասարակությունից խնդրի ողջ ծավալը բողոքելուն: Դա էլ, իր հերթին, թուրքական իշխանություններին հեռու է պահում այդ հակամարտության կարգավորման ռազմավարություն ունենալու հասարակական պահանջից: Երբեմն չեն համընկնում անգամ Թուրքիայի Գլխավոր շտաբի (ԳՇ) ու Էրդողանի ներկայացրած կորուստները: 2016թ. մարտին Էրդողանը հայտարարեց, որ

2015թ. հուլիսից PKK-ի դեմ պայքարում սպանվել է թուրքական անվտանգության ուժերի 355 ներկայացուցիչ, մինչդեռ ԳՇ-ի տվյալներով՝ կորուստների թիվը հասնում էր 377-ի⁷:

Այդպիսով՝ Թուրքիայում PKK-ի դեմ պայքարի արդի փուլն աչքի է ընկնում ոչ միայն լեռնային վայրերում, այլև քաղաքներում ռազմական գործողություններով, դրանց ավերմամբ, պարետային ժամերի սահմանմամբ, ոչ միայն Յյուսիսային Իրաքում, այլև Թուրքիայում՝ թուրքական օդուժի ինտենսիվ հարվածներով: «Քաղաքային պատերազմի» հետեւանքով մեծ թվով մարդիկ դարձան փախստական: Դա համապատասխանում է տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը փոխելու՝ թուրքական իշխանությունների պլանին, որոնց խստապես մտահոգում է, որ հարավարեւելյան շրջանները գերազանցապես բնակեցված են քրդերով: Ուշագրավ է, որ ներկայումս Թուրքիայի զինված ուժերի (ԹՁՈՒ) դեմ պայքարում է 1990-ականների սերունդը, երբ Թուրքիան լայնածավալ պատերազմական գործողություններ էր վարում PKK-ի դեմ:

PKK-ի հարվածները դառնում են ավելի մահաբեր

Նոր սպառազինությունների շնորհիվ PKK-ի հարվածները դառնում են ավելի մահաբեր, նրա մոտ արդեն հայտնվել են հակաօդային ու հակատանկային հրթիռներ, որոնցով նա խոցում է ԹՁՈՒ տանկեր, մարտական ուղղաթիռներ ու ինքնաթիռներ: Դեռևս 2014թ. հուլիսին թուրքական մամուլը գրեց, որ PKK-ի տրամադրության տակ կան ռուսական SA-8 հրթիռներ, որոնց օգնությամբ նա փորձել է խոցել ուղղաթիռներ եւ որոնց PKK-ին տրամադրել է Սիրիայի նախագահ Բաշար Ասադը, քանի որ Թուրքիան չի դադարեցրել սիրիական ընդդիմությանն իր աջակցությունը:

2015թ. հոկտեմբերին թուրքական մամուլը հաղորդեց, որ հարավարեւելյան Շըրնաք նահանգի Բեյթուշեբաի շրջանում PKK-ի զինյալներին պատկանող տներում հայտնաբերվել են ռուսական արտադրության Metis M հրթիռներ: Վերստին ընդգծվեց, որ այդ հրթիռները PKK-ին տրամադրել է Բաշար Ասադը: 2015թ. նոյեմբերին էլ թուրքական մամուլը գրեց, որ PKK-ը PYD-ից, որին թուրքական կողմը որակում է որպես «PKK-ի սիրիական թեւ», ստացել է ամերիկյան արտադրության «երկիր-օդ» դասի Stinger հրթիռներ: ԱՄՆ-ն այդ հրթիռներն ուղարկել է Սիրիա, եւ PYD-ը դրանք կարող է օգտագործել Թուրքիայի ՌՕՈՒ-ի դեմ, քանի որ ԻՊՂ-ը չունի ավիացիա:

2016թ. մայիսի կեսին համացանցում ի հայտ եկան կադրեր, որոնցում երեւում է, թե ինչպես է Թուրքիայի հարավարեւելյան Յաքքարի նահանգի լեռներում քուրդ զինյալը ռուսական արտադրության «Իզլա» շարժական ՉՀՀ-ի օգնությամբ խոցում ԹՁՈՒ-ի տրամադրության տակ եղած ամերիկյան AH-1W Super Cobra հարվածային ուղղաթիռը, որը ռազմական գործողություն էր իրականացնում քուրդ ապստամբների դեմ: Ուղղաթիռի խոցման կադրերը հրապարակվեցին PKK-ին մոտ կանգնած Gerilla TV հեռուստաալիքի կայքում: Թուրքիայի գլխավոր շտաբը նախ հայտարարեց, որ ՌՕՈՒ-ի ուղղաթիռը կործանվել է տեխնիկական խնդիրների պատճառով, որի հետեւանքով գոհվել է անձնակազմի 2 անդամ, սակայն ավելի ուշ ընդունեց, որ այն հրթիռային հարվածով կործանել է PKK-ը: Մայիսի վերջին Երդոհանը Ռուսաստանին մեղադրեց ահաբեկչությանը սատարելու համար՝ ընդգծելով, որ PKK-ի ձեռքում կան ռուսական հրթիռներ ու զենիթային զենք: PKK-ի զինյալների ձեռքում նման զենքի առկայությունն իսկապես ուշագրավ է. եթե PKK-ի զինյալների ձեռքում կան բավական

Նաչափ համապատասխան հրթիռներ, ապա Թուրքիայի ՌՉՌԻ-ի համար իսկապես կարող են սկսվել բարդ ժամանակներ: Շարժական ՉՀՀ-ն կատարելապես համապատասխանում է քուրդ պարտիզանների կազմակերպած դարաններին:

Օրեր անց թուրքական մամուլը հայտնեց, որ PKK-ի զինյալները Դիարբեքի-րի Նահանգում գնդակոծել են ՌՉՌԻ-ի Sikorsky S-70 ինքնաթիռը, իսկ հուլիսի սկզբին հյուսիսարևելյան Գիրեսուն Նահանգում կործանվեց ՌՉՌԻ-ի Sikorsky S-70 ուղղաթիռը, որում գտնվել է 15 մարդ, այդ թվում Նաեւ ժանդարմերիայի բարձրաստիճան սպաներ՝ իրենց ընտանիքներով: Սպաների թվում եղել է Նաեւ Գիրեսունի ժանդարմերիայի ղեկավար, գեներալ Մուսթաֆա Դողրան: Ուղղաթիռի կործանման հետեւանքով զոհվեց 7 եւ վիրավորվեց 8 մարդ: Թուրքական մամուլում եղան հրապարակումներ, թե ուղղաթիռը հրթիռային հարվածով կարող է կործանած լինել PKK-ը:

2016թ. սեպտեմբերին PKK-ը հայտարարեց, որ Հաքքարի Նահանգի Չուբուրջա շրջանում ականանետով հարվածել է ուղղաթիռների կայանի, ոչնչացրել է վարչապետական ապարատին պատկանող 5 ուղղաթիռներից 3-ը եւ վնասել մյուս 2-ը, ինչը տեղի է ունեցել Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմի անակնկալ այցի ժամանակ: Հաքքարիի Նահանգային իշխանությունները հերքեցին PKK-ի այդ պնդումը, սակայն Gerilla TV-ն ցուցադրեց համապատասխան կադրերը: Ի դեպ, Յըլդըրըմի ժամանումից առաջ Չուբուրջայում PKK զինյալների հետ բախումներում սպանվել էր 7 եւ վիրավորվել 20 զինծառայող⁸:

Նմանատիպ վերջին դեպքը գրանցվեց 2017թ. մայիսի 31-ին, երբ Շըրնաքի Ուլուդերե շրջանում կործանվեց ԹՉՌԻ-ի AS 532 COUGAR մարտական ուղղաթիռը, որի հետեւանքով զոհվեց 13 զինծառայող, այդ թվում՝ 1 գեներալ եւ 2 գնդապետ: Ուղղաթիռը Կատո լեռան

շրջանում մասնակցում էր PKK-ի դեմ մասշտաբային ռազմական գործողությանը: ԹՉՌԻ-ն հայտարարեց, որ ուղղաթիռը կործանվել է թռիչքից 3 րոպե անց բարձրավոլտ էլեկտրահաղորդագծին բախվելուց հետո⁹: Սակայն PKK-ը հայտարարեց, որ ինքն է կործանել ուղղաթիռը¹⁰:

PKK-ը վերջին շրջանում աչքի է ընկնում Նաեւ թուրքական տանկերին հարվածելով: Դեռեւս 2015թ. օգոստոսին գերմանական Der Spiegel պարբերականը գրեց, որ Գերմանիայից Փեշմերգային տրամադրած զենքի զգալի մասը հայտնվել է PKK-ի ձեռքում: Խոսքը Milan տիպի 500 հակատանկային հրթիռների մասին է, որոնցից 200-ը հայտնվել է PKK-ի ձեռքում եւ ուղարկվել Ղանդիլ: 2016թ. հունիսին PKK-ին մոտ կանգնած կայքերը հայտնեցին, որ քուրդ զինյալները Շըրնաքում՝ Նամազ լեռան շրջանում, հակատանկային հրթիռի օգնությամբ ոչնչացրել են ԹՉՌԻ-ի տանկը: Մինչ այդ՝ 2016թ. հունվարին, ԹՉՌԻ-ի տանկը խոցվել էր Շըրնաք Նահանգի Ջիզրե շրջանում: 2016թ. հունիսին թուրքական Hürriyet թերթը տեղեկացրեց, որ PKK-ը մայիսի 29-ին ու հունիսի 13-ին Metis-M հրթիռներով հարվածել է թուրքական տանկերին՝ ընդգծելով, որ PKK-ն այդ հրթիռները ստացել է Սիրիայի քուրդերից (YPG)¹¹: 2017թ. ապրիլին թուրքական մամուլը գրեց, որ երկրի հարավ-արեւելքում PKK-ի զինյալների թաքստոցներից մեկում հայտնաբերվել է շվեդական արտադրության M136 AT4 LAW հակատանկային համակարգ, որն ըստ ամենայնիվ ԱՄՆ-ն հանձնել էր YPG-ին: Ընդ որում, հաղորդվել էր, որ դա մեկ շաբաթվա ընթացքում Նույն տարածաշրջանում գրանցված նմանատիպ երկրորդ դեպքն է¹²:

Ամենաուշագրավն այն է, որ վերջին շրջանում սկսել են տեղեկություններ հայտնվել PKK-ի կողմից Նաեւ մարտական ինքնաթիռների խոցման մասին:

2016թ. վերջին PKK-ը հայտնեց, որ դեկտեմբերի 12-ին Դիարբեքի օդանավակայանից 2 կմ հեռավորության վրա կործանել է F-16 կործանիչ, որը լեռներում մասնակցել էր քողերի դեմ ռազմական գործողություններին¹³: 2017թ. փետրվարին PKK-ի կողմից F-16 ոչնչացնելու մասին հայտարարեց ԺԿԿ պատգամավոր Թունջալ Օզբանը: Միջադեպի հետ կապված՝ Թուրքիայի գլխավոր շտաբը հայտարարեց, որ 2016թ. դեկտեմբերին F-16 կործանիչը ուսումնական թռիչքից վերադառնալիս անհայտ պատճառներով կոշտ վայրէջք է կատարել Դիարբեքի օդանավակայանից 1.5-2 մղոն հեռավորության վրա: Օդաչու Շեֆիքա Բուրչու Արփաջըն չի տուժել միջադեպից եւ կատապուլտի օգնությամբ փրկվել է¹⁴:

Ընդգծենք, որ դա PKK-ի կողմից F-16 կործանիչ խոցելու մասին առաջին հաղորդումը չէր: 2016թ. հոկտեմբերին հաղորդվել էր սեպտեմբերի 28-ին PKK-ի կողմից արդեն Յյուսիսային Իրաքում Գարայի շրջանում, F-16 ոչնչացնելու մասին¹⁵: Սակայն թուրքական մամուլը դա որակեց PKK-ի նոր կեղծիք՝ ընդգծելով, որ ցուցադրված բեկորների լուսանկարները վկայում են, որ դա ոչ միայն F-16 չէ, այլև՝ փոքր չափերի պատճառով չէր կարող լինել մարտական ինքնաթիռ: Թուրքական մամուլը բացառեց, որ դա ամերիկյան արտադրության ԱԹՍ է¹⁶:

Ի դեպ, թուրքական հետախուզությունը մտավախություն ունի, որ PKK-ի զինյալները կարող են կիրառել ռումբերով բեռնված ԱԹՍ-եր: Այդ մասին վկայել են Թուրքիայի հարավ-արեւելքում ռազմական գործողությունների ժամանակ PKK-ի թաքստոցներում մի շարք ԱԹՍ-երի բացահայտումները: Ընդգծվում է, որ վերջին շրջանում PKK-ը սկսել է լայնորեն կիրառել ԱԹՍ-եր: Ընդ որում՝ խոսքը միայն օդային դիտարկում իրականացնելու մասին չէ. քուրդ զինյալները կարող են նաեւ դրանց վրա ռումբեր

տեղակայել ու ԱԹՍ-երն օգտագործել թուրքական անվտանգության ուժերի դեմ: Տեսախցիկներ ունեցող այդ ԱԹՍ-ները կարող են կառավարվել 200-300 մետրից եւ կրել 500-1000 կգ բեռ՝ պայթուցիկ նյութ: Օրինակ՝ 2016թ. հունվարին Թուրքիայի անվտանգության ուժերը Շըրնաք Լահանգի Սիլուփի շրջանում PKK թաքստոցներից մեկում հայտնաբերել են RQ-20 Puma մոդելի փոքր ԱԹՍ, որն ունի սովորական ու ինֆրակարմիր տեսախցիկներ: ԱԹՍ-ի առավելագույն արագությունը կազմում է 83 կմ/ժամ, առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ 5.9 կգ, թելերի բացվածքը՝ 2.8 մ, թռիչքի հեռավորությունը՝ 15 կմ, իսկ առավելագույն վերելքը՝ 10.000 ոտնաչափ, այն կարող է օդում մնալ 2 ժամ¹⁷:

Գնալով թուրքական մամուլում շատանում են տեղեկություններն այն մասին, որ PKK-ի թաքստոցներում հայտնաբերվում են նորանոր ու ժամանակից զինատեսակներ, ինչպես նաեւ պայթուցիկների խոշոր խմբաքանակ: Դրանցից կարելի է առանձնացնել 2016թ. հոկտեմբերի այն հաղորդումը, որ լեռնային քարանձավում գտնվող PKK-ի զինապահեստում հայտնաբերվել են ԱՄՆ-ին ու ՆԱՏՕ-ի մյուս երկրներին պատկանող զենքեր: Դրա հետ կապված՝ անվտանգության հարցերով թուրք փորձագետ Աբդուլլահ Ադարը հայտարարեց, որ PKK-ի ձեռքում հայտնվել են Իրաքում ու Սիրիայում ամերիկացի հատուկ զորավորումների կիրառած զենքերը. «Վերջին շրջանում PKK-ը սկսել է լայնորեն կիրառել ԱԹՍ-եր, նրա տրամադրության տակ հայտնվել են արեւմտյան արտադրության նոր զինատեսակներ: 3 օր առաջ առգրավվել են ամերիկյան արտադրության ականանետներ ու ձեռքի նռնակներ: Բացի դրանից, հայտնվել են Արեւելյան բլրկի ծագում ունեցող զենքի ծանր համակարգեր (հակաօդային ու հակատանկային հրթիռներ): Զուբուրջայի մարտերի ժամանակ PKK-ի զինյալներից առգ-

րավել են 12.7 եւ 14.5 մմ տրամաչափի, ինչպէս նաեւ 23.5 մմ տրամաչափի գնդացիրներ, հրթիռներ, հարյուրավոր գնդացիրներ, «Կալաշնիկով» տիպի ինքնաձիգներ, անգամ ամերիկյան արտադրության M-16 ինքնաձիգներ: ՔՔԿ-ի տրամադրության տակ կա նաեւ լեռներում ցայժմ չհայտնված 102 մմ տրամաչափի բազմափող նռնականետ, ինչպէս նաեւ ՆԱՏՕ-ի երկրներին պատկանող Նոր սերնդի հակատանկային ականներ: ԻՊ-ի դեմ պայքարի պատրվակով Սիրիա եւ Իրաք ուղարկվող այդ զենքերը ԻՊ-ի փոխարեն ՔՔԿ-ի միջոցով ուղղվում են մեր դեմ»¹⁸:

Այսպիսով, ժամանակակից զենքերն ու տեխնոլոգիաները մի կողմից Թուրքիայի անվտանգության ուժերին օգնում են ավելի հաջող պայքարել ՔՔԿ-ի դեմ, սակայն մյուս կողմից ՔՔԿ-ին հնարավորություն են տալիս հասցնել առավել մահաբեր հարվածներ: Դա մեծացնում է թուրքական անվտանգության ուժերի կորուստներն ու հասարակական դժգոհությունը:

Ջրային պայքար

Թուրքիան ՔՔԿ-ի դեմ մղում է նաեւ ջրային պայքար: 2015թ. հուլիսին թուրքական մամուլը գրեց, որ ՔՔԿ-ն փոխել է մարտավարությունը՝ թիրախավորելով «անվտանգության ամբարտակները»: Ընդգծենք, որ թուրքական իշխանությունները որոշել են ՔՔԿ-ի դեմ պայքարին հավելել նաեւ ջրային բաղադրիչ, եւ դրա հետ կապված՝ առաջ բաշվեց «անվտանգության ամբարտակների» նախագիծը, ըստ որի՝ Հաքքարիում կառուցվելու է 4, իսկ Շըրնաբում՝ 7 ամբարտակ: 11 ամբարտակից մի մասի կառուցումն արդեն ավարտվել է: Այդ ամբարտակների ու ՀԷԿ-երի կառուցումը, բացի բուն էներգետիկ, գետահոսքի կառավարման ու ոռոգման նպատակներից, ունի նաեւ ռազմական նշանակու-

յուն: Դրանք պետք է ջրի տակ թողնեն այն ճանապարհները, որոնցից օգտվում են ՔՔԿ-ի զինյալները՝ Իրաքից Թուրքիա ներթափանցելու համար, խզելու են ՔՔԿ լոգիստիկ աջակցությունը, ջրածածկ են անելու ՔՔԿ քարանձավներն ու թաքստոցները, որոնցում թաքնվում են քուրդ զինյալները եւ թաքցվում են նրանց զենքերը: Դա կոչված է ապահովել ՔՔԿ-ի նկատմամբ Թուրքիայի «ջրային» հաղթանակը:

Նման նշանակություն ունի նաեւ կառուցման ավարտական փուլում գտնվող Ըլըսուի ջրամբարը (45 մլն մ³), որը լինելու է Տիգրիս գետի խոշորագույն, Թուրքիայի երկրորդ խոշոր (Եփրատ գետի վրա կառուցված Աթաթուրքի ջրամբարից հետո) ջրամբարը: Այն պետք է ջրի տակ թողնի լեռնային կանիոնները, որոնց արահետներով երթեւեկում են ՔՔԿ զինյալները: Թուրք հետազոտողներն այդ կապակցությամբ նշում են. «ՔՔԿ-ն մեծապես օգտվում է սահմանային գոտու լեռնային տեղանքից՝ Իրաքի ճամբարներից իր զինյալներին Թուրքիա տեղափոխելու համար: Այդ կանիոնները ձգվում են տասնյակ մղոններ եւ ունեն հարյուրավոր ֆուտ խորություն: Ռազմական տեսանկյունից գործնականում անհնար է այդ կանիոններն անհրաժեշտ ձեւով վերահսկելը, եւ դրանք վերածվել են Իրաքի ու Թուրքիայի միջեւ յուրատեսակ ցամաքային կամրջի, ինչից էլ տասնամյակներ շարունակ օգտվում են ՔՔԿ զինյալները:

Չափազանցություն չի լինի, եթե այդ կանիոններն անվանվեն «ՔՔԿ հայվեյներ» (արագընթաց մայրուղի): ՔՔԿ անդամն Իրաքի տարածքում կարող է մտնել այդ կանիոններից մեկը եւ բառացիորեն հարյուրավոր մղոն քայլելով աննկատ մուտք գործել Թուրքիայի տարածքի խորքեր: Այժմ Մարդիկ եւ Շըրնաքի նահանգների սահմանին կառուցվող Ըլըսուի ջրամբարը պետք է ջրի տակ թողնի կանիոնները»: Եվ զարմա-

նալի չէ, որ Ըլըսուհի ամբարտակը ցայժմ քանիցս հայտնվել է PKK-ի թիրախում: Վերջին շրջանում PKK-ը հարձակումներ է գործում կառուցման փուլում գտնվող ամբարտակների (օրինակ՝ Սիլվանի ամբարտակի) վրա՝ նռնականետերով հարվածում են դրանց, ականներով պայթեցնում են դեպի ամբարտակներ տանող ավտոճանապարհները, այրում են ամբարտակների կառուցմանը մասնակցող շինարարական տեխնիկան, առեւանգում են շինարարներին:

Այդ ամենը ձգձգում է կառուցման գործընթացը, ֆինանսապես հարվածում Թուրքիային: Օրինակ՝ Ըլըսուհի ՅԷԿ-ի հզորությունը կազմելու է 1200 մվտ, այն տարեկան արտադրելու է 3833 գվտ/ժամ էլեկտրաէներգիա (այդ ցուցանիշով զիջելու է միայն Եփրատի վրա կառուցված Աթաթուրքի, Զարաբայայի ու Քեբանի ՅԷԿ-երին): Հաշվարկված է, որ Ըլըսուհի ՅԷԿ-ը տարեկան \$300 մլն-ի (օրական մոտ \$1 մլն-ի) ներդրում պետք է ունենա Թուրքիայի տնտեսությունում եւ կարելոր տեղ զբաղեցնի 2023թ. (Հանրապետության 100-ամյակը) Թուրքիայի տնտեսական ծրագրերում: Ըլըսուհի ամբարտակը Հարավարեւելյան անատոլիական (GAP) նախագծի բաղկացուցիչ մասն է, որի շրջանակներում նախատեսված է Եփրատի եւ Տիգրիսի վրա կառուցել 22 ջրամբար եւ 19 ՅԷԿ, ինչի շնորհիվ հնարավոր կլինի տարեկան ոռոգել 1.82 մլն հա հողատարածք եւ արտադրել 27 մլրդ կվտ/ժամ էլեկտրաէներգիա (ՅԷԿ-երի հզորությունը կազմելու է 7485 մվտ):

Հայտնի է, որ Թուրքիան GAP շրջանակներում քանիցս խնդիրներ է ունեցել եւ ունի Եփրատի ու Տիգրիսի ստորին հոսքերի երկրներ Սիրիայի ու Իրաքի հետ: Թուրքիան այդ գետերի վրա կառուցած ամբարտակների շնորհիվ կարողանում է վերահսկել գետահոսքը՝ ցանկության դեպքում զգալիորեն նվազեցնել այն եւ երաշտ առաջացնել Սիրիա-

յում եւ Իրաքում, կամ էլ ընդհակառակը: Ըստ Էուրթան՝ Թուրքիան շարունակ ջրային պատերազմներ է վարել եւ վարում է այդ երկրների դեմ: Թուրքիան իր հարավ-արեւելքում փաստացիորեն «երկուսուկես ջրային պատերազմ» է մղում՝ Սիրիայի ու Իրաքի եւ PKK-ի դեմ (ԱՄՆ-ում Թուրքիայի նախկին դեսպան Մուսթաֆա Շյուքրյու Էլեբրադի «2.5 պատերազմի ռազմավարություն» հոդվածում նշված էր, որ Թուրքիան (1990-ական թթ.) պետք է պատրաստ լինի միաժամանակ մղել 2 մասշտաբային պատերազմ՝ հյուսիս-արեւմուտքում Հունաստանի, իսկ հարավ-արեւելքում Սիրիայի դեմ եւ դրան զուգահեռ մղել «կես» (ներքին) պատերազմ (PKK-ի դեմ):

Ուշագրավ է, որ Թուրքիայի «ջրային պատերազմը» 2014թ. առնչվեց նաեւ Սիրիայի բողոքին, երբ Թուրքիան գրեթե կորեց Եփրատի գետահոսքը, ինչի հետեւանքով Սիրիայում 6 մ-ով նվազեց Եփրատի վրա կառուցված խոշորագույն ջրամբար Ասադի լճի մակարդակը, եւ ԻՊ-ի զինյալները հնարավորություն ստացան անարգել հաղթահարել Եփրատի նման ջրային հզոր արգելքն ու սկսել բողոքական գյուղերի գրավումը, ապա նաեւ պաշարել Զոբանի բաղաբը:

Ի դեպ, Թուրքիայի իշխանությունները բազմազանություն են ցուցաբերում PKK-ի դեմ ջրային պայքարում: Մասնավորապես, Թունջելի (Դերսիմ) նահանգում կիրառվում է ջրային պայքարի այլ մարտավարություն՝ նահանգն ամբողջովին շրջապատել ամբարտակներով: 40 տարի առաջ Եփրատի վրա Քեբանի ջրամբարի կառուցումը հանգեցրեց նրան, որ Թունջելիի ու Էյլազըղի ցամաքային սահմանը վերածվեց ջրային: Թունջելին «կղզու» վերածելու բաղաբականության բաղկացուցիչ մաս է դարձել մյուս (Բինգյուլ, Էրզինջան) նահանգների հետ Թունջելիի սահմանային շրջաններում Մնճուր եւ այլ գետերի վրա ամբարտակներ կառուցելը:

Այսպիսով, PKK-ն քաջ գիտակցում է, որ պետք է «անվտանգության ամբարտակների» դեմն առնել հիմա, քանի դեռ չի ավարտվել դրանց կառուցումը, քանի որ գործող ամբարտակների պայթեցումից մեծապես կտուժի տեղի քուրդ բնակչությունը: Բացի դրանից, «անվտանգության ամբարտակների» կառուցումը նշանակում է թուրքական ռազմական ամրակետերի տեղակայում դրանց շուրջ: «Անվտանգության ամբարտակները» ունակ են որոշակիորեն բարդացնել PKK-ի կյանքը: Մյուս կողմից էլ քրդերը համարում են, որ «անվտանգության» ու մյուս ամբարտակներն ապագայում (քրդական պետության ստեղծման դեպքում) պատկանելու են իրենց:

PKK-ն որպես Թուրքիայի էներգետիկ-տրանսպորտային միջանցք դառնալու խոչընդոտ

PKK-ն աչքի է ընկնում նավթամուղեր, գազամուղեր, երկաթգծեր ու ավտոճանապարհներ պայթեցնելով:

ա) *Նավթամուղեր-գազամուղեր*. 2015թ. հրադադարի խախտումից հետո PKK-ի թիրախում հայտնվեցին Զիրբուլե-Յումուրթալըք (Ջեյհան) նավթամուղը, Բաբու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) եւ Թավրիզ-Էրզրում գազատարները: 2015թ. հուլիսի վերջին Շըրնաք նահանգի Ջիզրեի շրջանում պայթեցվեց Զիրբուլե-Յումուրթալըք նավթամուղը, որի հետեւանքով կասեցվեց նավթի մատակարարումը: Ի դեպ, Զիրբուլե-Յումուրթալըք նավթամուղն իր թողունակության ցուցանիշով (70.9 մլն տ նավթ) գերազանցում է Բաբու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՁ) նավթամուղին (50 մլն տ նավթ): Չնայած դրան՝ Զիրբուլե-Յումուրթալըք նավթամուղով փոխադրվում է շատ քիչ նավթ: Եթե հաշվի առնենք, որ մինչեւ Էրզրում ԲԹՁ ու ԲԹԷ երթուղիները գրեթե ամբողջովին համընկնում են, եւ որ PKK-ն նախկինում քանիցս պայթեց-

րել է ԲԹԷ-ն, ապա ակնհայտ է դառնում, որ PKK-ն միտումնավոր չի ցանկանում դիպչել ԲԹՁ-ին (PKK-ն այդ նավթամուղը պայթեցրել է միայն մեկ անգամ՝ 2008թ. օգոստոսյան պատերազմից օրեր առաջ, սակայն ավելի ուշ հայտարարվեց, որ դա իրականում եղել է կիբեռհարձակման հետեւանք): Դրա պատճառը, թերեւս, միջազգային հանրության համար ԲԹՁ-ի կարեւորությունն է եւ, բացի դրանից, ԲԹՁ-ի բաժնետոմսերի միայն 6.5%-ն է պատկանում թուրքական TPAO ընկերությանը: Իսկ Զիրբուլե-Յումուրթալըքի թուրքական հատվածը պատկանում է թուրքական BOTA ընկերությանը, ինչը եւ բավական խոցելի է դարձնում Հյուսիսային Իրաքից եկող այդ խողովակաշարը: Նախկինում PKK-ն քանիցս պայթեցրել է Զիրբուլե-Յումուրթալըք նավթամուղը՝ խոչընդոտելով դրա ամբողջովին գործարկմանը: Այժմ Թուրքիան ծրագրել է նոր նավթամուղ կառուցել Իրաքից, որը, թերեւս, նույնպես խոցելի կլինի PKK գործողությունների համար, քանի որ այն պետք է անցնի Իրաքին սահմանակից Շըրնաք կամ Հաքքարի նահանգներով, որոնցում PKK-ն մշտապես ակտիվ է:

Գազատարներից առաջինը պայթեցվեց Թավրիզ-Էրզրում գազատարը (Ադրը նահանգի Դողուբայազըթի շրջանում), որով Իրանը Թուրքիային տարեկան մատակարարում է 9.6 մլրդ մ³ գազ՝ նախատեսված Թուրքիայի ներքին սպառման համար: Հենց այդ հանգամանքը գազատարը PKK գործողությունների համար դարձնում է խոցելի. PKK-ն նախկինում քանիցս պայթեցրել է այն: Ներկայումս Իրանն իր գազը Եվրոպա արտահանելու երթուղիների փնտրտուքի մեջ է, եւ PKK գործողությունները կասկածի տակ են դնում թուրքական երթուղու նպատակահարմարությունը: 2015թ. օգոստոսի սկզբին ու վերջին Կարսի նահանգի Սարիղամիշի շրջանում 2 անգամ պայթեցվեց ԲԹԷ-ն: Ադրբեջանը ԲԹԷ-ով

Թուրքիային մատակարարում է տարեկան 6.6 մլրդ մ³ գազ՝ նախատեսված Թուրքիայի ներքին սպառման համար: Դրանով իսկ ԲԹԷ-ն PKK-ի համար նույնպես բավական խոցելի է:

Սակայն հետագայում ԲԹԷ-ի շուրջ իրավիճակը փոխվելու է, քանի որ 2015թ. մարտին մեկնարկել է Անդրանատոլիական գազատարի (TANAP) նախագծի իրագործումը, որը պետք է ադրբեջանական (հետագայում հնարավոր է նաեւ այլ երկրների) գազը հասցնի թուրք-հունական սահման: Ադրբեջանից TANAP-ին համապատասխան ծավալի գազ հասցնելու համար պետք է ընդլայնվի ԲԹԷ-ի տարեկան թողունակությունը: Դրանով իսկ ԲԹԷ-ն կարելու է ձեռք կրել Եվրոպայի համար, ինչը կբարդացնի PKK-ի կողմից այն պայթեցնելը: PKK գործողությունները խոչընդոտում են նաեւ TANAP-ի կառուցմանը. 2015թ. հուլիսին PKK-ն Սարիղամիշի շրջանում ռմբակոծեց TANAP-ի համար խողովակներ տեղափոխող բեռնատար գնացքը: Չի բացառվում, որ Թուրքիան ու Ադրբեջանը կարող են կառուցել Կարս-Իզմիր-Նախիջեւան գազատարը, որով Նախիջեւանին տարեկան մատակարարվելու է ԲԹԷ-ով Թուրքիա հասցված 500 մլն մ³ ադրբեջանական գազ: Դա միտված է գազամատակարարման ոլորտում Նախիջեւանի՝ Իրանից ունեցած կախվածությունը նվազեցնելուն: Կյանքի կոչվելու դեպքում այդ գազատարը նույնպես կհայտնվի PKK թիրախում:

Այսպիսով՝ PKK գործողությունները մեծապես ազդում են Թուրքիայի՝ էներգետիկ միջանցք դառնալու հավակնությունների վրա: Խողովակաշարերի պայթեցումները մեծ վնաս են պատճառում Թուրքիայի տնտեսությանը, ստվեր են նետում էներգակիրներ արտադրողների ու սպառողների համար հուսալի տարանցիկ երկիր ներկայանալու Թուրքիայի փորձերի վրա՝ նվազեցնելով նրանց կողմից Թուրքիայի պահանջված լինելը:

Գազատարների պայթեցումները Թուրքիայի համար ավելի էական ազդեցություն են ունենում ձմռանը, երբ մեծանում է գազի պահանջարկը: Խողովակաշարերի պայթեցման հարցում PKK-ն մեծ ներուժ ունի, ինչի մասին վկայում է այն, որ 2015թ. մեկ շաբաթվա ընթացքում իրար հետեւից պայթեցրեց Իրաքից եկող սավթամուղն ու Իրանից եւ Ադրբեջանից եկող գազամուղները: Թուրքիան, ըստ էության, ունակ չէ ամբողջովին ապահովել այդ խողովակաշարերի անվտանգությունը:

բ) Երկաթուղի-ավտոճանապարհ.

Վերջին շրջանում նկատվում է PKK-ի կողմից Թուրքիայի երկաթգծերի պայթեցման ինտենսիվացում: PKK-ի զինյալների թիրախում հիմնականում հայտնվում են բեռնատար գնացքները, որոշ դեպքերում նաեւ մարդատար կամ մարդատար-բեռնատար գնացքները: Մասնավորապես, 2015-2017թթ. PKK-ը գնացքների վրա զինված հարձակումներ է իրականացրել Կարսի, Վանի, Բինգյոլի, Զահրամանմարաշի, Էրզինջանի, Եյլազղդի, Մուշի, Օսմանիեի, Սիիրթի, Շըրնաքի եւ այլ նահանգներում: Նրանք պայթուցիկներ են տեղադրում երկաթգծերում, եւ գնացքներն անցնելու ժամանակ հեռակառավարմամբ պայթեցնում են դրանք՝ վնասելով երկաթգծերն ու գնացքները: Դրանցից պետք է առանձնացնել 2015թ. հուլիսի վերջին Բինգյոլ նահանգում Անկարա-Թեիրան գնացքի պայթեցման դեպքը: Երբ նույն երթուղով գնացքը պայթեցվեց եւս մեկ անգամ, Իրանը դադարեցրեց տվյալ երթուղով գնացքների երթեւեկը: Ի դեպ, տվյալ երթուղին անցնում է Վանա լճով՝ Դատվանից դեպի Վան գործում է լաստանավային հաղորդակցություն, ինչը հնարավորություն է չի տալիս, որ երթուղին գործի ավելի արդյունավետ: 1970-ական թթ. ֆինանսական խնդիրների պատճառով որոշվել էր երկաթուղի չկառուցել Վանա լճի շուրջ: Թուրքիայում քննարկվում է

Վասն լճի երկայնքով երկաթգիծ կառուցելու հարցը: Թեև հարավային երթուղին ավելի կարճ է, սակայն այն լեռնոտ է, ինչի համար ավելի հավանական է համարվում, որ երկաթուղին կառուցվի Վասն լճի հյուսիսային հատվածում:

Ներկայումս ավարտվում է Բաթու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղու կառուցումը, որին մեծ նշանակություն են տալիս Թուրքիայում: PKK-ն 2015թ. արդեն պայթեցրել է Կարս-Էրզրում երկաթգիծը, որը հանդիսանալու է ԲԹԿ-ի շարունակությունը: Բացի դրանից, 2014թ. Թուրքիան ու Ադրբեջանն արձանագրություն ստորագրեցին Կարս-Իզմիր-Նախիջևան երկաթգծի կառուցման մասին, ինչը նշանակում է, որ այն նույնպես կարող է դառնալ PKK թիրախ:

Ինչ վերաբերում է ավտոճանապարհներին, ապա PKK զինյալները փակում, պայթեցնում են դրանք, մեծ փոսեր են փորում դրանց վրա, հարձակվում են մարդատար ավտոբուսների ու բեռնատարների վրա: PKK զինյալները նաեւ կամուրջներ են պայթեցնում (Մուշի, Չաբբարիի, Մարդինի, Դիարբեքրի, Թունջելիի նահանգներ), որով եւ խախտվում է շրջկենտրոնների ու գյուղերի, նահանգների միջև հաղորդակցությունը: Օրինակ՝ 2015թ. օգոստոսի 10-ին Չաբբարիի նահանգի Յուբսեբովայի շրջանում կամրջի պայթյունի հետեւանքով խզվել է կապը 10 գյուղերի հետ: PKK զինյալներն ավտոճանապարհներին կանգնեցնում են մեծածավալ բեռնատարներ, իջեցնում են նրանց վարորդներին եւ հրկիզում բեռնատարները: Դա, մասնավորապես, վերաբերում է Իրան մեկնող բեռնատարներին, որից տուժում են ոչ միայն թուրք-իրանական տնտեսական հարաբերությունները, այլև՝ Կենտրոնական Ասիայում թուրքական տնտեսական էքսպանսիան, որը հիմնականում իրականացվում է Իրանով:

2015թ. օգոստոսի սկզբին PKK-ի զինյալները Կարսի նահանգի Զաղըզման

շրջանում կանգնեցրին Էրզրում-Իզմիր ավտոճանապարհով անցնող մարդատար ավտոբուսը եւ երկու ժամ պատանդ պահեցին 36 ուղեւորի, որոնց թվում եղել են նաեւ ադրբեջանցիներ (PKK զինյալներն այրել են ավտոբուսը): Հուլիսի վերջերից մինչեւ օգոստոսի վերջ PKK-ն Թուրքիայում հարձակվեց իրանական 9 բեռնատարի եւ 1 մարդատար ավտոբուսի վրա: Դա հանգեցրեց նրան, որ Իրանի իշխանություններն իրենց քաղաքացիներին խորհուրդ տվեցին Թուրքիայի արեւելք մեկնել միայն օդային ճանապարհով: Բացի դրանից, Իրանը միակողմանի փակեց թուրք-իրանական սահմանին գտնվող Գյուլբուլաքի անցակետը, ինչին նախորդել էր Թուրքիայում իրանական բեռնատարի այրումը: Նաեւ PKK-ի գործողությունների պատճառով է, որ թուրք-իրանական տնտեսական հարաբերությունները չեն գտնվում պատշաճ մակարդակում: 2017թ. ապրիլի վերջին Վանում անցկացված Թուրք-իրանական 3-րդ գործարար ֆորումում որոշվեց աշխուժացնել առևտուրը, արդիականացնել սահմանային անցակետերը, չբացառվեց ճեպընթաց գնացքների համար ապագայում Տրապիզոն-Վան եւ Վասն լճի հյուսիսային հատվածում երկաթգծերի կառուցումը¹⁹: Եվ պատահական չէ, որ Թուրքիան այժմ մտադիր է Ադրը եւ Իզմիր նահանգներում պատ կառուցել Իրանի հետ սահմանին (144 կմ), որը միտված է լինելու մաքսանենգության ու PKK-ի զինյալների ելումուտի կանխարգելմանը (ավելի վաղ Թուրքիան Սիրիայի հետ սահմանին կառուցել է 688 կմ երկարությամբ պատ): Թուրքական կողմի պնդմամբ՝ Իրանի տարածքում՝ Մակուում, Դամբաթում, Նավուում, Կոտրում, Զենեբեշում, Շեհիդանում, գտնվում են PKK-ի ճամբարները, որոնցում հաշվվում է 800-1000 քուրդ զինյալ²⁰: Ի դեպ, թուրքական մամուլում հրապարակում եղավ նաեւ այն մասին, որ Թուրքիան մտադիր է պատ

կառուցել նաև Հայաստանի հետ սահմանին: Եթե Թուրքիան գնա նման քայլի, ապա դա կլինի ցուցադրական ակտ, որով Թուրքիան փաստորեն Հայաստանին անուղղակիորեն կմեղադրի PKK-ին աջակցելու համար: Պատի կառուցման անհրաժեշտությունը պետք է ունենա նույն պատճառաբանությունը:

Այսպիսով՝ PKK-ի գործողությունները բացասաբար են ազդում նաև Թուրքիայի՝ տրանսպորտային միջանցքի դերակատարության վրա, հանգեցնում են սահմանային անցակետերի փակմանը (Նախիջևան, Իրան, Իրաք), հարցականի տակ են դնում տրանսպորտային նոր նախագծերի նպատակահարմարությունը, վնասում են այլ երկրների հետ երկկողմ առևտրային կապերին, Թուրքիայի տնտեսական էքսպանսիային: Միաժամանակ դրանք մեծ վնաս են պատճառում Թուրքիայի զբոսաշրջային ոլորտին, քանի որ չեղարկվում են հյուրանոցային բազմաթիվ ամրագրումներ, զբոսաշրջային ճամփորդություններ: Հիշարժան է 2015թ. սեպտեմբերի 6-ին Ադթամարի Սուրբ խաչ եկեղեցում ծրագրված ամենամյա պատարագի չեղյալ հայտարարումը, ինչն առաջին հերթին զբոսաշրջային մեծ հարված էր Վանի նահանգին՝ հաշվի առնելով նաև այն, որ այս անգամ ակնկալվում էր, որ պատարագին կմասնակցեն ավելի մեծ թվով մարդիկ՝ կապված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի հետ: Ի դեպ, Վանի նահանգը զբոսաշրջային առումով խստապես տուժել է նաև Նրախից, որ PKK-ի ակցիաների պատճառով Իրանը դադարեցրեց Թուրքիայի հետ երկաթուղային հաղորդակցությունը²¹:

Եզրակացություն

Այսպիսով՝ կարելի է ասել, որ Թուրքիայում PKK-ի զինված պայքարը թեւակոխում է սրացման նոր փուլ, քանի որ նոր զենքերի շնորհիվ PKK-ի հարված-

ները դառնում են բավական մահաբեր: Ընդ որում, PKK-ն Թուրքիայի տարածքի վրա հարձակումներ գործելու համար այսուհետ կարող է օգտվել ոչ միայն Հյուսիսային Իրաքի, միգուցե նաև՝ Հյուսիսային Սիրիայի տարածքից, ուր տեղի քողերը վերահսկում են երկրի տարածքի 21%-ը (38.500 կմ²) և ընդհանրապես Թուրքիային սահմանակից տարածքների 65%-ը: Վերոնշյալն ապացուցում է, որ Թուրքիայում «Քրդական հարցը» չի կարող լուծվել ռազմական ճանապարհով: Ինչպես 2012թ. փետրվարին նկատել է Իրաքի նախագահ Ջելալ Թալաբանիի որդին՝ Իրաքյան Քրդստանի վաշինգտոնյան ներկայացուցիչ Զուբադ Թալաբանին, Թուրքիայի տարածքում գտնվում է 1 միլիոն PKK-ական և անգամ Սադամ Հուսեյնին չհաջողվեց ռազմական գործողությունների միջոցով ծնկի բերել Ղանդիլում հանգրվանածներին²²:

Հավելենք, որ Թուրքիայում խաղաղություն չի տիրի անգամ PKK-ի կողմից գեներ վայր դնելուց հետո: Թուրքական իշխանությունները պետք է լուծեն նաև PKK-ի դեմ պայքարի շրջանակներում ստեղծված «գյուղական պահապանների» (բուրդ վարձկաններ, որոնք PKK-ից պաշտպանում են գյուղերը և այլն) համակարգի հարցը: Գյուղական պահապանները հայտարարել են, որ գտնվում են PKK-ականների թիրախում, որ պետությունը պետք է PKK-ի հետ հաշտվելուց բացի, իրենց նույնպես հաշտեցնի PKK-ի հետ, քանի որ հակառակ դեպքում Թուրքիայում կարող է սկսվել արյունոտ վրեժխնդրության ժամանակաշրջան:

Թուրքիան PKK-ի դեմ պայքարում վատնել է \$300 մլրդ-ից մինչև \$1 տրլն, և չնայած այդ ամենին՝ Թուրքիայում PKK-ի գործունեությանը դեռ վերջ չի տրվել: Դա նշանակում է, որ ավելի լավ կլիներ, եթե այդ գումարի գոնե մի մասով ներդրումներ կատարվեին քրդաբ-

նակ շրջաններում, ստեղծվելին նոր աշխատատեղեր: Չպետք է մոռանալ, որ «Քրդական հարցի» առաջացման մեջ քիչ դեր չի խաղացել նաև տնտեսական գործոնը: PKK-ն լրջորեն սասանում է ներկայում տարածաշրջանային առաջնորդի դերին հավակնող Թուրքիայի հեղինակությունը, որը շարունակ միջամտում է հարեւան երկրների ներքին գործերին, իսկ վերջիններս անմիջապես մատնացույց են անում Թուրքիայի ներքին խնդիրները՝ ընդգծելով, որ Թուրքիան ի փոխարին չէ լուծել անգամ «Քրդական հարցը»: PKK-ը խստապես ազդում է նաև Թուրքիայի արտաքին կապերի վրա. Թուրքիան այդ պատճառով հարկադրված է խնդիրներ ունենալ բազում (հարեւան եւ ոչ հարեւան) երկրների հետ: PKK-ի դեմ պայքարն իր բացասական կնիքն է թողել ու թողնում անգամ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության վրա: Ինչպես 2012թ. նոյեմբերի 8-ին Բոյոստեղում հայտարարեց Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութթոլուն, 1990-ականներին Բալկանները փոփոխություններ էին վերապրում, իսկ Թուրքիան ահաբեկչական վտանգի (PKK) պատճառով առաջնահերթությունը տվել էր իր անվտանգության ապահովմանը, ինչի հետեւանքով երկրում հետաձգվեցին բարեփոխումները, եւ Թուրքիան բաց թողեց ԵՄ-ի գնացքը²³:

ՀՈՒՄՆԵՐ

- 1 Mustafa Semih Arıcı, PKK ile mücadelede 30. yılına doğru- 1, Milliyet, 12.08.2012.
- 2 PKK'dan şehit edilen iki polis için flaş açıklama: Biz yapmadık, Cumhuriyet, 29.07.2017
- 3 Հայկ Գաբրիելյան, 2015թ. նոյեմբերի 1-ի ընտրությունները Թուրքիայում, «Նորավանք» ԳԿՀ, 07.12.2015
- 4 Necdet Özçelik, The PKK and car bomb attacks, SETA, December 2016

- 5 Мурат Карайылан: можем инициировать вооруженные выступления в Турции, РИА Новости, 17.02.2016
- 6 Турция предоставила правовой иммунитет воюющим с курдами силовикам, Lenta.ru, 01.08.2016
- 7 “Başkomutan” ile Genelkurmay, şehit sayısında anlaşamadı, Sözcü, 28.03.2016
- 8 PKK'den Çukurca açıklaması: Başbakanlığa ait 3 helikopter vuruldu, soL Haber Portalı, 06.09.2016
- 9 Şırnak'ta TSK'ya ait helikopter düştü!, Haber Türk, 31.05.2017
- 10 HPG: Operasyon koordinesini taşıyan helikopteri güçlerimiz vurdu, Firat News, 02.06.2017
- 11 Габриелян Айк, В Турции война против РПК переходит в новую фазу, Институт Ближнего Востока, 04.08.2016
- 12 Second PKK anti-tank gun seized in week in Turkey's southeast, Hürriyet Daily News, 07.04.2017
- 13 PKK claims shootdown of Turkish F16, Kurdistan 24, 14.12.2016
- 14 CHP'li Özkan: PKK Diyarbakır'da F-16 düşürdü, T24, 24.02.2017
- 15 PKK Fighters Downed Turkey's F-16 in Iraq – Reports, South Front, 07.10.2016
- 16 PKK'nın yeni yalanı: Türk F-16'sı düşürdük, Anadolu Ajansı, 29.09.2016
- 17 PKK sığınağında İHA bulundu, Milliyet, 21.01.2016
- 18 ABD Özel Kuvvetler silahı PKK'nın elinde, En Son Haber, 12.10.2016
- 19 Габриелян Айк, О Третьем турецко-иранском форуме, Институт Ближнего Востока, 11.05.2017
- 20 Türkiye İran sınırına duvar örüyor, Vatan, 08.05.2017
- 21 Հայկ Գաբրիելյան, PKK-ի մարտավարության տնտեսական ուղղվածության շուրջ, «Նորավանք» ԳԿՀ, 24.09.2015
- 22 'Türkiye'de 1 milyon PKK'lı' iddiası, NTV, 15.02.2012
- 23 Davutoğlu: 'AB, Türkiye trenini kaçırmaması', EurActiv, 08.11.2012

Гайк Габриелян

Нынешний этап борьбы против РПК в Турции

Более 30-летняя война против РПК в Турции показывает, что «Курдский вопрос» не может быть урегулирован военным путем. Несмотря на это, Турция продолжает отдавать предпочтения военным действиям. Благодаря новым типам оружия удары РПК становятся более летальными, РПК уже уничтожает танки, военные вертолеты и самолеты. Все это делает невозможным решение проблемы силовым путем. Кроме того, РПК уже воюет в городах, а турецкая авиация наносит интенсивные удары по позициям РПК не только в Северном Ираке, но и внутри страны. В борьбе против РПК Турция расходует огромные финансовые ресурсы, в то время как она могла бы эти средства инвестировать в курдонаселенные районы страны, которые по своим социально-экономическим показателям занимают последние места. Вместо этого, власти Турции не жалеют денег для осуществления мегапроектов в Стамбуле (например, в плане рентабельности непонятный проект Стамбульского канала). Военные акции РПК препятствуют тому, чтобы Турция стала энергетическим и транспортным коридором. Война против РПК сильно влияет и на внешнюю политику Турции, создавая напряженность в отношениях с другими странами и организациями. Как заметил в 2012г. глава МИД Турции Ахмет Давутоглу, в 1990-х годах Балканы переживали изменения, в то время как Турция из-за РПК большое внимание уделяла обеспечению своей безопасности, в результате чего в Турции замедлился процесс реформ, и в итоге Турция тогда упустила поезд в ЕС.

Hayk Gabrielyan

The Current Stage of the State's War against the PKK in Turkey

More than a 30-year history of the war against the Kurdistan Workers' Party (PKK) in Turkey shows that "The Kurdish Issue" cannot be resolved by the use of military force. Despite this, Turkey prefers a policy of military operations against its Kurdish population. With the advent of new weapons, attacks by the PKK are becoming more lethal: it is already destroying military tanks, helicopters and aircrafts. In addition, PKK already wages war in the cities, and Turkish aviation strikes intensively at the positions of PKK not only in Northern Iraq but also in Turkey. The war against PKK assumes large financial resources from the country, whereas the Turkish authorities could instead invest them in the Kurdish provinces, the social and economic level of which is the lowest in Turkey. And the Turkish government also could implement Kurdish reforms, rather than expending money for the implementation of Istanbul's unprofitable megaprojects. The war against PKK impacts on Turkey's foreign policy, generating tension between Turkey and other countries and organizations. As Turkish Foreign Minister Ahmet Davutoglu noted in 2012, the Balkans were experiencing changes in the 1990s while Turkey's priority was to ensure the state's security because of PKK. As a result, the reform process in Turkey slowed down, and the country missed the train for the EU.

Հայաստան-2017, ապրիլ-հունիս. փաստեր, իրադարձություններ

1 ապրիլի

Մերժ Սարգսյանը շնորհավորել է Հայաստանի ասորիներին՝ նոր տարվա՝ Հաբ-Նիսանի կապակցությամբ: «Մաղթում եմ մեր ասորի քույրերին ու եղբայրներին երջանկություն եւ հաջողություններ նոր տարում: Մաղթում եմ, որ բնության վերազարթոնքը խորհրդանշող այս տոնի հետ նոր վերածնունդ ապրեն Հայաստանի ասորական համայնքը, հայ-ասորական բազմադարյա բարեկամությունը եւ մեր մշակութային բազմաշերտ հարաբերությունները», - մասնավորապես նշված է Սարգսյանի շնորհավորական ուղերձում:

2 ապրիլի

Այսօր խորհրդարանական ընտրություններ են՝ ընտրվում է Հայաստանի Երրորդ Հանրապետության 7-րդ գումարման խորհրդարանը եւ 6-րդ գումարման Ազգային ժողովը: Առաջին անգամ ԱԺ ընտրություններն անցկացվում են փոփոխված Սահմանադրությամբ, որով ՀՀ-ն անցնում է կառավարման կիսանախագահական համակարգի խորհրդարանականի, եւ անցած տարի ընդունված նոր Ընտրական օրենսգրքով: ԱԺ առնվազն 101 մանդատներին հավակնում են 9 կուսակցություններ եւ դաշինքներ: Դրանք են, ըստ վիճակահանությամբ որոշված հերթականության՝ «Ելք» դաշինքը, «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը, «Հայկական վերածնունդ» կուսակցությունը, «Ծառուկյան» կուսակցությունների դաշինքը, Կոնգրես-ՀԺԿ կուսակցությունների դաշինքը, ՀՀԿ, ՀԿԿ-ն, «Օհանյան-Ռաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինքը, ՀՀԴ կուսակցությունը: Կենտրոնական

ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչյանի ներկայացմամբ՝ ժամը 20:00-ի դրությամբ ընտրելու իրավունք ունեցող 2 միլիոն 587 հազար 706 քաղաքացիներից ընտրություններին մասնակցել է 1 միլիոն 574 հազար 947-ը, կամ 60, 86 տոկոսը:

3 ապրիլի

ԿԸՀ-ն հրապարակել է ընտրությունների նախնական արդյունքները, համաձայն որոնց՝ վեցերորդ գումարման խորհրդարանում ընտրություններին մասնակցած 9 ուժերից ու դաշինքներից ներկայացված կլինեն չորսը: Առաջատարը իշխող Հանրապետականն է՝ 49.12 տոկոս ձայներով: Երկրորդը 27.32 տոկոսով «Ծառուկյան» դաշինքն է, երրորդը «Ելք» դաշինքը՝ 7.77 տոկոս, եւ չորրորդը Դաշնակցությունը՝ 6.57 տոկոս քվեներով: Նույն օրը երեկոյան ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը շնորհավորական հեռագիր է հղել Հայաստանի նախագահ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանին՝ ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններում Հանրապետական կուսակցության հաղթանակի առիթով:

7 ապրիլի

Գլխավոր դատախազությունը տեղեկություններ է փոխանցել ընտրախախտումների վերաբերյալ հաղորդումների քննության մասին: Ըստ այդմ՝ ուսումնասիրված հաղորդումներից առանձնացվել են զուտ իրենց բովանդակային նկարագրությամբ, առերեւոյթ ընտրական բնույթի հանցագործության հատկանիշներ պարունակող 495 հաղորդումներ եւ դրանք օպերատիվ կերպով ուղարկ-

վել են ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային բաժիններ, ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ ստուգելու հանձնարարությամբ:

8 ապրիլի

ԿԸՀ-ն այսօրվա արտահերթ նիստում մերժեց «Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան» դաշինքի դիմումը, որով պահանջվում էր մեկ ընդհանուր բազայում միավորել ապրիլի 2-ի ընտրությունների ժամանակ տեղամասերում հատուկ սարքերով ստացված մատնահետքերը, իսկ այնուհետև՝ ԵԱՀԿ դիտորդական առաքելության և իրենց մասնագետների անմիջական մասնակցությամբ ստուգել՝ արդյո՞ք կան մատնահետքերի համընկնումներ: Դիմումը մերժելուց հետո դաշինքի լիազոր ներկայացուցիչն «Ազատության» հետ զրույցում նշեց, որ դեռ հստակ որոշում չունեն՝ կապված վարչական դատարան դիմելու հետ, նաև հավելեց, որ իրենց մասնագետներն այժմ աշխատում են ցուցակների հետ ու փորձում բացահայտել կրկնաքվերակության դեպքերը:

11 ապրիլի

Այսօր տարածած հայտարարության մեջ «Ժառանգության» առաջնորդ Րաֆֆի Հովհաննիսյանը՝ հիշեցնելով, որ իր ղեկավարած ուժը Երեւանի ավագանու ընտրություններին չի մասնակցելու, զորակցություն է հայտնել մասնակից ընդդիմադիրներին: «Նախընտրական շրջանում բռնություններով ու քաղաքական բանտարկություններով, իսկ ընտրությունների օրը՝ համատարած կաշառքներով, զանգվածային այլ ընտրակեղծիքներով մթազնաձ խորհրդարանական ընտրությունները հերթական անգամ ի ցույց դրեցին գործող իշխանության՝ ՀՀԿ-ի ազատ, արդար և օրինական ընտրությունների կազմակերպման քաղաքական կամքի բացա-

կայությունը: Հանուն մայրաքաղաքի և համայն հանրապետության, իրականում հարկավոր է, որ պարոն Մարգարյանն ու իր կուսակցությունը իրենք դառնան պարկեշտ, օրինապաշտ ընդդիմություն ամբողջ երկրում և Երեւանից սկսյալ: Իսկ մենք դեռ կխոսենք ընտրություններից հետո»,- նշված է Հովհաննիսյանի հայտարարության մեջ:

14 ապրիլի

Աշխատանքային այցով Դրղըզատա-նում գտնվող Սերժ Սարգսյանը Բիշքեկում մասնակցել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ պետությունների ղեկավարների ոչ պաշտոնական ձեւաչափով հանդիպմանը: Ըստ Հայաստանի նախագահի պաշտոնական կայքէջի, քննարկվել են ՀԱՊԿ պատասխանատվության գոտում ռազմաքաղաքական և ռազմական-ռազմավարական իրավիճակին վերաբերող հարցեր, ընդունվել են մի շարք լրացուցիչ կարգադրություններ՝ անվտանգության սպառնալիքներին հակազդեցության ուղղությամբ:

19 ապրիլի

Հատուկ քննչական ծառայությունը քրեական գործ է հարուցել «ՍԱՍ» ընկերության ժողովի ժամանակ արված ու Hayastan24.com կայքում հրապարակված հայտնի ձայնագրության առթիվ, որում լսվում է, որ մի տղամարդ ներկաներին հորդորում է աշխատել Արտակ Սարգսյանի («ՍԱՍ-ի Արտակ») համար, իսկ ով ձայն չի բերի՝ նրա հետ հարաբերությունները առաջվանը չեն լինի, և նա կկորցնի աշխատանքը:

21 ապրիլի

Հայաստանի կառավարությունը պատրաստվում է 1 միլիարդ 234 միլիոն դոլար նոր պարտք վերցնել: Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում

հայտնված տեղեկության համաձայն՝ ապրիլի 29-ին ֆինանսների նախարարությունը թողարկելու է 600 միլիարդ դրամի պարտատոմսեր: Աննախադեպ ծավալով նման նոր պարտք իշխանությունները նախատեսում են վերցնել երեք չափաբաժնով՝ յուրաքանչյուրը 200 միլիարդ դրամի պարտատոմսեր: Առաջին մասը Հայաստանի քաղաքացիները պետք է մարեն 2020 թվականին եւ հավելյալ վճարեն 8 տոկոս, երկրորդը մարվելու է 2022-ին՝ 9 տոկոս հավելավճարով, իսկ երրորդ չափաբաժինը մարվելու է 2037-ին՝ 12.5 տոկոս հավելավճարով:

22 ապրիլի

Կանադայի վարչապետը հայտարարություն է տարածել Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցի կապակցությամբ: «Այսօր մենք հանդիսավորությամբ հավաքվում ենք ոգեկոչելու Հայ ժողովրդի զավակների ողբերգական կորուստը, որը տեղի է ունեցել ավելի քան մեկ դար առաջ», - ասված է Կանադայի վարչապետ Ջասթին Թրուդոյի հայտարարությունում: - «Այսօր մենք հարգում ենք նրանց հիշատակը, ովքեր անարդարացիորեն կորցրեցին իրենց կյանքը եւ տառապեցին ցեղասպանության ժամանակ: Մենք հարգանքի տուրք ենք մատուցում նրանց եւ նրանց ժառանգներին, որոնցից շատերն այժմ բնակվում են Կանադայում», - հավելել է Թրուդոն՝ հիշեցնելով, որ 2015 թվականին Կանադայի խորհրդարանը միաձայն հավանություն է տվել ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օր հռչակելու մասին օրինագծին:

23 ապրիլի

Սերժ Սարգսյանը եւ ՀՀ առաջին տիկինը «Մոսկվա» կինոթատրոնում ներկա են գտնվել Հայոց ցեղասպանության մասին պատմող լեգենդար Քըրք Քըրքորյանի «Survival Pictures»-ի եւ օս-

կարակիր կինոռեժիսոր Թերրի Ջորջի «Խոստումը» ֆիլմի հայկական կրկնօրինակմամբ հայաստանյան փակ ցուցադրությանը:

24 ապրիլի

Այսօր՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, բազմահազար մարդիկ Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից, Սփյուռքից, եւ օտարերկրյա հյուրեր այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու 20-րդ դարի սկզբին անօրինակ սպանդի զոհ դարձած ավելի քան մեկուկես միլիոն հայերի հիշատակին: Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ ուղերձներ են հղել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ Արցախի նախագահ Բակո Սահակյանը: Ապրիլքսանչորսյան ավանդական ուղերձում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը իր նախորդի՝ Բարաք Օբամայի նման օգտագործել է Մեծ Եղեռն բառակապակցությունը՝ ցեղասպանություն եզրի փոխարեն:

25 ապրիլի

Սերժ Սարգսյանն ընդունել է պաշտոնական այցով Հայաստան ժամանած՝ Հնդկաստանի փոխնախագահ, խորհրդարանի վերին պալատի նախագահ Մոհամմադ Համիդ Անսարիի գլխավորած պատվիրակությանը: Սարգսյանը ողջունել է հյուրերին Հայաստանում հույս հայտնելով, որ Հնդկաստանի փոխնախագահի պաշտոնական այցը նոր լիցք կհաղորդի հայ-հնդկական դարավոր բարեկամությանը: Չրուցակիցները համակարծիք են, որ հազարամյակների պատմություն ունեցող հայ-հնդկական հարաբերություններն ամուր հիմք են միջպետական կապերի ամրապնդման եւ տարբեր ոլորտներում համագործակցության օրակարգն ընդլայնելու համար: Երկկողմ կապերից բացի, հանդիպմանն անդրադարձ է եղել տարածաշրջանի

իրավիճակին, առկա մարտահրավերներին, ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացին, ինչպես նաև միջազգային արդի խնդիրներին:

28 ապրիլի

Մոսկվայում տեղի ունեցավ ռուսական կողմի նախաձեռնած՝ Ռուսաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի ԱԳ նախարարներ Սերգեյ Լավրովի, Էդվարդ Նալբանդյանի եւ Էլմար Մամեդյարովի եռակողմ հանդիպումը: Բանակցություններն անցան եռակողմ ձեւաչափով, այնուհետեւ արտգործնախարարներին միացան ԵԱՀԿ Մինսկի խմբի համա-նախագահներ Իգոր Պոպովը, Ստեֆան Վիսկոնտին, Ռիչարդ Հոգլանդը եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջել Կասպչիկը:

«Հանդիպմանը շարունակվեցին քննարկումները դարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացն առաջ մղելու շուրջ: Ընդգծվեց Վիեննայում եւ Սանկտ Պետերբուրգում 2016թ. մայիսին եւ հունիսին կայացած գագաթաժողովներում ձեռք բերված համա-ձայնությունների իրականացման անհրաժեշտությունը:

30 ապրիլի

Երեւանի Նոր Նորք վարչական շրջա-նում՝ Հայաստանի Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի անվան զբոսայգում, բացվել է հերոսի կիսանդրին: ՊՆ մամու-լի ծառայության տարածած հաղորդագ-րության համաձայն՝ միջոցառմանը մաս-նակցել են ՀՀ պաշտպանության նախա-րար Վիգեն Սարգսյանը, կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյա-նը, մշակույթի նախարար Արմեն Ամիր-յանը, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար կազմը, բարձրաստի-ճան զինվորականներ, ազատամարտիկ-ներ, կուրսանտներ, Թաթուլ Կրպեյանի հարազատները:

2 մայիսի

Հայաստանի նախագահի հրամա-նագրով Յուրի Խաչատուրովն ազատ-վել է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնից: Այ-սօրվանից խաչատուրովը ստանձնում է Հավաքական անվտանգության պայ-մանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղարի պաշտոնը:

3 մայիսի

Կենտրոնական ընտրական հանձ-նաժողովն Ազգային ժողովի պատգա-մավորներ գրանցելու եւ մանդատներ տրամադրելու մասին արձանագրու-թյուն կազմեց:

Խոհրդարանը կունենա 105 պատ-գամավոր. 58-ը՝ Հանրապետականից, 31-ը՝ «Ծառուկյան» դաշինքից, 9-ը՝ «Ելք»-ից եւ 7-ը՝ Դաշնակցությունից: Նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստը նշանակված է մայիսի 18-ին:

5 մայիսի

Սերժ Սարգսյանն ընդունել է Սանկտ Պետերբուրգի նահանգապետ Գեորգի Պոլտավչենկոյին, ով Հայաստանում է գտնվում «Սանկտ Պետերբուրգի օրե-րը Երեւանում» ծրագրի շրջանակում: Սարգսյանը ողջունել է հյուրին եւ կա-րեւորել Երեւանում Սանկտ Պետեր-բուրգի, իսկ Սանկտ Պետերբուրգում Երեւանի օրեր անցկացնելու գաղա-փարը, որը, նախագահի համոզմամբ, օգտակար ու արդյունավետ հարթակ է երկու քաղաքների միջեւ համագոր-ծակցության ընդլայնմանն ուղղված հարցերի քննարկման համար: Նա-խագահն ընդգծել է, որ Ռուսաստանի տարածաշրջանների հետ համագոր-ծակցությունը հայ-ռուսական դինամիկ զարգացող միջպետական հարաբե-րությունների կարելուագույն բաղկա-ցուցիչն է:

8 մայիսի

Հաղթանակի տոնի, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի եւ Շուշիի ազատագրման 25-ամյակին նվիրված տոնական միջոցառումների շրջանակներում Լեռնային Ղարաբաղ ժամանած Սերժ Սարգսյանը Շուշիում հանդիպում է ունեցել 2017 թվականին զորացրված, ինչպես նաեւ այժմ ժամկետային զինծառայության մեջ գտնվող եւ ծառայության ընթացքում անձնվիրության ու խիզախության համար խրախուսման արժանացած մի խումբ զինծառայողների եւ զորացրված սպաների հետ: Հանդիպմանը մասնակցել են ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, ինչպես եւ հայտնի զինվորականներ՝ գեներալ լեյտենանտ Նորատ Տեր-Գրիգորյանը եւ գեներալ մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանը: Հաջորդ օրը՝ մայիսի 9-ին, Սերժ Սարգսյանը մայրաքաղաք Ստեփանակերտում եւ Շուշի քաղաքում մասնակցել է Հաղթանակի տոնի, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի կազմավորման եւ Շուշիի ազատագրման 25-րդ տարեդարձին նվիրված միջոցառումներին:

10 մայիսի

Հատուկ բնչական ծառայության (ՀԶԾ) տեղեկացմամբ՝ ապրիլի պահվող հրազենով զինված կազմակերպված խմբի կողմից 2016 թվականի հուլիսի 17-ին ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության (ՊՊԾ) գնդի վարչական շենքերն ու հարակից տարածքը զավթելու եւ պահելու դեպքի առթիվ Զրեական օրենսգրքի 219-րդ եւ 235-րդ հոդվածներով հարուցված քրեական գործից 14 մեղադրյալների վերաբերյալ անջատված քրեական գործի նախաքննությունն ավարտվել է: Գործը մեղադրական եզրակացությամբ հանձնվել է դատավարական հսկողությո-

յուն իրականացնող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

11 մայիսի

Հայաստանի հանրապետական կուսակցությունը եւ ՀՀ Դաշնակցությունը ստորագրեցին կոալիցիոն հուշագիր: Այդ մասին «Ազատությանը» հայտնեց ՀՀԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը:

12 մայիսի

Համաշխարհային բանկի (ՀԲ) հրապարակած Trade in Transition զեկույցի համաձայն՝ առաջիկա տարիներին Հայաստանը զգալիորեն ավելացնելու է իր պետական պարտքը: Եթե 2014 թվականին Հայաստանի պետական պարտքը կազմում էր երկրի տնտեսության 43.7 տոկոսը, ապա 2019-ին՝ աճելով մոտ 15 տոկոսային կետով, այն կկազմի 58.2 տոկոս: 2008-2016 թթ. ընթացքում Հայաստանի պետական պարտքը աճել է ավելի քան 3 անգամ՝ հասնելով 6 միլիարդ դոլարի: Ըստ ՀԲ նույն զեկույցի, անցած տարի աղքատության մակարդակը ՀՀ-ում աճել է՝ չնայած գրանցված տնտեսական աճին: Բանկի փորձագետների գնահատմամբ՝ Հայաստանի բնակչության 23.9 տոկոսը օրական 2.5 դոլարից քիչ է ծախսում: Իսկ եթե շեմը դիտարկում ենք օրական 5 դոլարը, ապա, ըստ զեկույցի, անցած տարի աղքատ էր Հայաստանի բնակչության 73.4 տոկոսը: Այսինքն՝ 2016 թվականին Հայաստանի բնակչության գրեթե 3/4-րդը օրական ծախսել է 2 հազար 500 դրամից քիչ գումար:

15 մայիսի

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) ամփոփեց Երեւանի ավագանու երեկ տեղի ունեցած ընտրությունների նախնական արդյունքները, համաձայն որոնց՝

«Ելք» դաշինքի օգտին քվեարկել է 70 հազար 731 ընտրող կամ քվեարկության մասնակիցների 21 տոկոսը, «Երկիր Ծիրանի» կուսակցության օգտին՝ 26 հազար 109 ընտրող կամ 7.75 տոկոսը, Հայաստանի հանրապետական կուսակցության օգտին՝ 240 հազար 36 ընտրող կամ 71.25 տոկոսը: Ընտրությունների վերջնական արդյունքները հանձնաժողովը կամփոփի մայիսի 21-ին: Հիշեցնենք, որ ընտրություններում առաջադրվել էին, ըստ այբբենական կարգի, «Ելք» կուսակցությունների դաշինքը, «Երկիր Ծիրանի» կուսակցությունը եւ Հայաստանի հանրապետական կուսակցությունը: Երեք ուժերի ընտրական ցուցակները գլխավորում էին եւ, համապատասխանաբար, քաղաքապետի թեկնածուներն էին Նիկոլ Փաշինյանը, Չարուհի Փոստանջյանը եւ Տարոն Մարգարյանը:

16 մայիսի

Անցյալ տարվա հուլիսին ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության գնդի տարածքի գրավման կապակցությամբ քննվող քրեական գործից 14 մեղադրյալների նկատմամբ անջատված քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունն այսօր ուղարկվեց Երեւան քաղաքի էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ ելության քննելու համար:

18 մայիսի

Վեցերորդ գումարման Ազգային ժողովի անդրանիկ նիստը բացեց տարիքով ամենաավագ պատգամավորը՝ Հանրապետականի ցուցակով ընտրված՝ ազգությամբ քուրդ Կնյազ Հասանովը, ապա օրինակի խոսք ասաց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը: Նորընտիր Ազգային ժողովին ուղերձ հղեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Ընդդիմադիր «Ելք»

խմբակցության պատգամավորները նիստերի դահլիճ ժամանեցին նախագահի ելույթից հետո: Հետմիջօրեին փակ գաղտնի քվեարկությամբ վեցերորդ գումարման Ազգային ժողովի նախագահ ընտրվեց ՀՀԿ-ի առաջադրած թեկնածու Արա Բաբլոյանը: Նրա թեկնածությանը կողմ քվեարկեց 88 պատգամավոր, դեմ՝ 12-ը: Նույն օրը նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագիր ստորագրեց Կարեն Կարապետյանին վարչապետ նշանակելու մասին:

18 մայիսի

Գյումրիում Ավետիսյանների ընտանիքի 7 անդամների սպանության համար Հայաստանի դատարանի կողմից ցմահ ազատազրկման դատապարտված ռուս զինծառայող Վալերի Պերմյակովը, ի կատարումն Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016թ. օգոստոսի 23-ի դատավճռի, այսօր փոխանցվեց Ռուսաստանի Դաշնությանը՝ 1998թ. Մոսկվայի կոնվենցիայով սահմանված կարգով պատժի հետագա կրումն այնտեղ շարունակելու համար:

19 մայիսի

Թեքսասի Ներկայացուցիչների պալատը միաձայն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեռ: Այսպիսով՝ Թեքսասը դարձավ ԱՄՆ-ի 46-րդ նահանգը, որը 1915-1923 թվականներին Օսմանյան Թուրքիայում բնիկ հայկական համայնքի բնաջնջումը պաշտոնապես որակում եւ ճանաչում է որպես Ցեղասպանություն: Այս մասին հայտնում է «Ասպարեզ» պարբերականը:

21 մայիսի

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովն արտահերթ նիստում ամփոփեց Երեւանի ավագանու ընտրությունների արդյունքները՝ կայացնելով որոշում

Երեւանի ավագանի ընտրվելու մասին: ԿԸՀ որոշմամբ՝ ավագանու մանդատները բաշխվել են հետեւյալ համամասնությամբ՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն՝ 46 մանդատ, «Ելք» կուսակցությունների դաշինք՝ 14 մանդատ, «Երկիր Ծիրանի» կուսակցություն՝ 5 մանդատ:

23 մայիսի

Ինտերպոլի եվրոպական տարածաշրջանային 45-րդ կոնֆերանսում, որը տեղի ունեցավ Ավստրիայի Սանկտ Յոհանն Իմ Պոնգաու քաղաքում, Հայաստանն ընտրվել է Ինտերպոլի եվրոպական կոմիտեի անդամ: Կոնֆերանսին մասնակցում էին Ինտերպոլի եվրոպական 47 եւ այլ տարածաշրջանների 6 անդամ երկրների, ինչպես նաեւ 19 միջազգային կազմակերպությունների ավելի քան 170 բարձրաստիճան պատվիրակներ: Առաջիկա չորս տարիների ընթացքում Հայաստանը Ինտերպոլի եվրոպական կոմիտեում ներկայացված է լինելու ի դեմս Հայաստանում Ինտերպոլի ԱԿԲ-ի պետ, ոստիկանության գնդապետ Արա Ֆիդանյանի:

26 մայիսի

Կազանում այսօր գումարված՝ ԱՊՀ եւ ԵԱՏՄ վարչապետների հավաքին մասնակցեց Հայաստանի կառավարության ղեկավար Կարեն Կարապետյանը: Օրակարգում համագործության 13 փաստաթղթերի նախագծեր էին, որոնք առնչվում էին խաղաղ նպատակով ատոմային էներգիայի օգտագործմանը, կեղծված արտադրանքի տարածման դեմ պայքարին, մտավոր սեփականության պաշտպանությանը, ԱՊՀ տարածքում բեռնափոխադրումների անվտանգության ապահովմանը, տնտեսական դատարանի աշխատանքին, կազմակերպված հանցավորության դեմ պայքարին եւ այլ խնդիրների: Նիստին վարչապետներից բացի, մասնակցում էր Եվրասիական

տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ, Հայաստանի նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը:

28 մայիսի

Տեղի ունեցավ «Ավորա» երկրորդ մրցանակաբաշխությունը, որին մասնակցելու համար Հայաստան էին ժամանել մարդասիրական մրցանակի 6 հավակնորդները, ինչպես նաեւ աշխարհահռչակ շանսոնյե Շարլ Ազնավուրը: «Ավորա»-ի դափնեկիրը Հայոց ցեղասպանությունը վերապրածների անունից կստանա 100 հազար ԱՄՆ դոլար պարգև՝ շարունակելու իր գործունեությունը, եւ 1 միլիոն ԱՄՆ դոլար դրամաշնորհ, որը բացառիկ հնարավորություն կտա շարունակելու նվիրատվության շղթան՝ աջակցելով իրեն ոգեշնչած կազմակերպություններին: Ընտրող հանձնաժողովի անդամների քվեարկության արդյունքներով «Ավորա» մրցանակի դափնեկիր դարձավ բժիշկ, կաթոլիկ միսիոներ Թոմ Զաթիսան: Նա Սուդանի պատերազմական Նուբայի լեռներում միակ վիրաբույժն է, ով իրականացրել է տարեկան 1000 վիրահատություն՝ սպասարկելով օրական ավելի քան 400 հիվանդի:

31 մայիսի

ՀՀ վեցերորդ գումարման Ազգային ժողովն ավարտեց երեկ մեկնարկած արտահերթ նիստի աշխատանքները: Խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունեց արտահերթ նիստը նախաձեռնողի՝ կառավարության ներկայացրած՝ Հայաստանի կառավարության կառուցվածքի մասին, Զննչական կոմիտեի մասին, Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին, Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին, Պետական տուրքի մասին օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրինագծերը: Ազգային ժողովի նախագահ Արա

Բաբլոյանը հայտարարեց աշխատանքի ավարտի մասին, ապա փոխանցեց, որ նորից հրավիրվելիք արտահերթ նիստի մասին կհաղորդվի լրացուցիչ:

1 հունիսի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այսօր հերթական որոշումն է կայացրել ընդդեմ Հայաստանի՝ պարտավորեցնելու 15 հազար եվրո փոխհատուցում վճարել տուժողին: Խոսքը 2006 թվականին ոստիկանների կրակոցներից մահացած Սեյրան Այվազյանի գործին է վերաբերում: Մահացածի քույրը՝ Սիլվարդ Այվազյանը, որը նաեւ տուժողի իրավահաջորդն է, դիմել էր ՄԻԵԴ՝ պնդելով, որ նախաքննական մարմինը ապօրինի կերպով կարճել է քրեական գործը հանցակազմի բացակայության հիմքով: Քննելով գործը, ՄԻԵԴ-ը որոշել է, որ նախաքննական մարմինը պատշաճ ու բազմակողմանի քննություն չի կատարել՝ պարզելու համար, արդյոք իրավաչափ էին ոստիկանների գործողությունները եւ, այսպիսով, խախտվել է կոնվենցիայի 2-րդ հոդվածը:

6 հունիսի

Հայաստանի զինված ուժերի հակաօդային պաշտպանության զորքերի վարչության ներկայացուցիչները հունիսի 6-8-ը Մոսկվայում մասնակցեցին «Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին» համաձայնագրի դրույթների իրականացման ու կանոնակարգերի մշակման աշխատանքային հանդիպմանը:

7 հունիսի

Միացյալ Նահանգների Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը միաձայն՝ 390 կողմ, 0 դեմ, ընդունեց թիվ 354 բա-

նաձեւը, որը «դատապարտում է մայիսի 16-ին Թուրքիայի դեսպանի կեցավայրի դիմաց խաղաղ ցուցարարների դեմ բռնությունը եւ կոչ է անում միջոցներ ձեռնարկել հետագայում նման միջադեպերը կանխելու համար»:

Բանաձեւում նշվում է, որ «անվտանգության ցանկացած թուրք աշխատակից, ով ուղղորդել, ղեկավարել կամ մասնակցել է թուրքական անվտանգության ուժերի կողմից խաղաղ ցույցի ապօրինի ճնշման գործողությանը, պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի, եւ պետք է դատական գործ հարուցվի նրա դեմ Միացյալ Նահանգների օրենսդրության համաձայն»: Ինչպես հայտնի է, մայիսի 16-ին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի՝ ԱՄՆ այցի կապակցությամբ մի խումբ ցուցարարներ բողոքի ակցիա էին կազմակերպել Վաշինգտոնում Թուրքիայի դեսպանատան առջեւ: Էրդողանի թիկնապահներն ու աջակիցները՝ ճեղքելով ոստիկանական պատը, հարձակվել էին քուրդ եւ հայ ցուցարարների վրա ու ծեծի ենթարկել նրանց: 9 մարդ ստացել էր մարմնական վնասվածքներ, երկու մարդ ձերբակալվել էր:

8 հունիսի

Սյունիքի օդանավակայանում փորձնական վայրէջք կատարեց առաջին ինքնաթիռը: Ավելի վաղ իր հարցազրույցներից մեկում Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանն ասել էր, որ աշխատանքներ են տարվում Կասպանի օդանավակայանի վերագործարկման ուղղությամբ՝ նշելով, որ դա մեծ աշխուժություն կբերի տարածաշրջան, կխթանի ներդրումները:

9 հունիսի

Հայ-ադրբեջանական պետական սահմանին տիրող իրավիճակը, ադրբեջանական զինուժի կողմից հրադադարի պայմանակարգի խախտման դեպքերի վի-

ճակագրությունն է ներկայացվել ԵԱՀԿ պաշտոնյաներին սահմանագոտու հերթական դիտարկումից հետո Տավուշի մարզի Այգեպար գյուղում կայացած ճեպագրույցի ընթացքում: ԵԱՀԿ ներկայացուցիչների ուշադրությունը հրավիրվել է հատկապես սահմանամերձ գյուղերի եւ ճանապարհների ուղղությամբ ադրբեջանական զինուժի արձակած կրակոցներին: ԵԱՀԿ պաշտոնյաները նշել են, որ ներկայացված տվյալները կներառեն իրենց զեկույցներում:

10 հունիսի

Սերժ Սարգսյանն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Իգոր Պոպովին (Ռուսաստան), Ռիչարդ Յոզլանդին (ԱՄՆ), Ստեֆան Վիսկոնտիին (Ֆրանսիա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպշիկին: Չրուցակիցները քննարկել են դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացին վերաբերող հարցեր: Անդրադարձ է եղել դարաբաղա-ադրբեջանական ուժերի շփման գծում եւ Հայաստան-Ադրբեջան պետական սահմանին տիրող իրավիճակին, այդ թվում՝ առաջնագծում վերջին շրջանում տեղի ունեցած միջադեպերին: Հանդիպման մասնակիցները կարելորել են բանակցային գործընթացում հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված հանձնառություններին կողմերի հավատարմությունը, ինչպես նաեւ բարձր մակարդակով ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը: Ավելի վաղ համանախագահները Երեւանում հանդիպումներ են ունեցել նաեւ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի հետ: Տարածաշրջանային այցի շրջանակներում միջնորդներն առաջիկայում կլինեն նաեւ Ստեփանակերտում եւ Բաքվում:

12 հունիսի

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչն էլ նրանց ուղեկցող պաշտոնյաներին ընդունել է նաեւ Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակյանը՝ համանախագահների ուշադրությունը հրավիրելով Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականության, զինադադարի պայմանակարգի խախտումների եւ միջազգային նորմերի ու սկզբունքների ոտնահարման բազմաթիվ փաստերի վրա: Սահակյանը դրանք որակել է որպես հակամարտության կարգավորման հիմնական խոչընդոտներ եւ տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանման լուրջ վտանգներ:

14 հունիսի

Նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով երկօրյա պաշտոնական այցով Հայաստան ժամանեց Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը: Այցի շրջանակում նախատեսված են Տաջիկստանի նախագահի հանդիպումները Հայաստանի բարձրագույն ղեկավարության հետ, ինչպես նաեւ մի շարք փաստաթղթերի ստորագրում:

16 հունիսի

Լեւոն Արոնյանը դարձավ Նորվեգիայի Ստավենգեր քաղաքում ավարտված Norway Chess 2017 մրցաշարի հաղթող: Գերմրցաշարի վերջին՝ 9-րդ տուրում հայաստանցի գրոսմայստերը ոչ-ոքի խաղաց Միացյալ Նահանգները ներկայացնող Ուեսլի Սոյի հետ եւ հավաքելով 6 միավոր՝ 1 միավորով գերազանցեց երկրորդ տեղը գրաված՝ նույնպես ԱՄՆ ներկայացուցիչ Հիկարու Նակամուրային ու ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկին: Հեղինակավոր մրցաշարում Արոնյանը հաղթել է աշխարհի ներկայիս չեմպիոն նորվեգացի Մագնուս Կարլսենին, աշխարհի փոխչեմպիոն Սերգեյ

Կարյակինին ու աշխարհի նախկին չեմպիոն Վլադիմիր Կրամնիկին, մյուս 6 հանդիպումներն ավարտել ոչ-ոքի:

19 հունիսի

Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը՝ Ելույթ ունենալով Եվրամիության Արեւելյան գործընկերության նախարարական հանդիպմանը, հայտարարեց, որ ԵՄ-Հայաստան հարաբերություններում կան որոշ առկախ հարցեր, որոնց առնչությամբ պաշտոնական Երեւանն ակնկալում է ԵՄ անդամ-պետությունների հստակ աջակցությունը: ՀՀ արտգործնախարարը հույս հայտնեց, որ օրակարգում դրված Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը կստորագրվի գալիք գագաթաժողովի ընթացքում:

21 հունիսի

Խորհրդարանը սկսել է քննարկել կառավարության 2017-2022 թվականների ծրագիրը: Նախօրեին վարչապետ Կարեն Կարապետյանն ավելի քան 100 էջանոց ծրագրի մանրամասները ներկայացրել էր ՀՀԿ ղեկավար կազմին եւ խորհրդարանական խմբակցության անդամներին: «Կառավարության ծրագիրը բավական ամբիցիոզ խնդիրներ է դրել իր առջեւ: Մենք ֆիքսել ենք, թե ինչ նպատակի ենք ուզում հասնել եւ տնտեսական աճի վերաբերյալ, եւ գործազրկության, եւ նվազագույն աշխատավարձի, եւ արտահանման ծավալների, ինչպես նաեւ հարկեր-ՀՆԱ հարաբերակցության», - լրագրողներին ասել է վարչապետը:

